



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





24599

8-93  
F-38















8-93  
A-38

01 JAN 2009

9 NOV 2001

ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՋԲՕՄԱԼԻ

Տ Ե Տ Բ Ը Կ Ն Ե Բ

*Handwritten signature*

ԺԷ

ՌԵՐՈՅԵԿԱՆ ՎԷՊԵՐ

Կ Ա Մ

ՏՂՈՑ ՍԻՐՏԸ ԿՐԹԵԼՈՒ

ՅԱՐՄԱՐ

ՊԸՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՏ 79-1322  
Հ. Ա. Ե. Ն. ՇԱՐՄԱՐԻ ԳՐԱԳԱՐՈՒ  
ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՋԲՕՄԱԼԻ  
ՄԱՅԱՍՆԻԿՑ

Վ Ի Է Ն Ն Ը

ՊԱՇՏՊԱՆ Ս. ԱՏՄՈՒԱԾԱԾՈՒՄՆԻ ՎԱՆԻԸ

1851 ՌՅ:

774



~~\_\_\_\_\_~~  
~~\_\_\_\_\_~~  
N 22.

4.

(23)

N 9



ԲԱՐՈՅԵԿԵՆ ՎԷՊԵՐ

Թ. ՓԵՐԳԻՆԵԱՆԳՐՈՍ

891.542-31

Կ Ա Մ

520

F-45

ԽՂՃՏԱՆՔԻ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

ԱԳ.

Ա. Փերդինանդոսին Ժեռոյէլ:

Ան ժամանակը՝ որ Գերմանացւոց կայսրը միանգամայն Սպանիայի թագաւոր էր, նոյն գեղեցիկ ու ամենաբեր երկիրն մէջ կ'ապրէր Ալփարէս երեւելի կոմսը: Ինքը Մեծութեան պատիւ ունէր, որ պատիւը միայն Տին դքսերէն ու ազնուականներէն սեւ բաժները կ'ունենան: Իր բնակութեան տեղը Մատրիտ՝ թագաւորութեան մայրաքաղաքին մէջ հոյաշէն պալատ մըն էր: Ալփարէս Սպանիայի ուրիշ գեղեցիկ ու պողաբեր դաւառներու մէջ ալ շատ բերդեր ու մեծամեծ երկիրներ եւ անբաւ հարբատութիւն ունէր: Ասոնցմէ զատ՝ ինք շատ խելացի եւ խոհեմ, միանգամայն ազնուասիրտ ու առատաձեռն էր: Իր հարստութիւնն ու համբաւն ուրիշ բանի չէր գործածեր, բայց եթէ քովի մարդիկներն երջանկացրնելու:

1476

Նմանապէս իր Եղիսաբէթ ամուսինն ալ շատ առաքինի ու մեծանձն տիկին մըն էր: Թեպէտ բնութեամբ քիչ մը հիւանդոտ ու դիմօք տժողոյն էր, ի վերայ այսր ամենայնի իր քաղցրաբարոյութիւնն ու մարդասիրութիւնը՝ կերպարանացը գեղեցիկ տեսք մը կու տային: Բոլոր վարմանց, խօսակցութեանց եւ ամէն բանի մէջ արտաքոյ կարգի անուշութիւն կը ցուցնէր:

Աս երկու ամուսինները մէկտեղ երջանիկ կեանք կ'անցրնէին: Բայց որովհետեւ երկրիս վրայ կատա-



րեալ երջանկութիւն մը չիկրնար ըլլալ, անոր հա-  
 մար իրենք ալ թշուառութիւն մ'ունէին: Թեպէտ  
 երկայն ատենէ վեր կարդուած էին, բայց դեռ զա-  
 ւակ մը չունէին, որ կարող ըլլար չէ թէ միայն իրենց  
 անբաւ ընչիցը, հապա նաեւ իրենց առաքինութեան-  
 ցը ժառանգ ըլլալ: Ասոր վրայ աւելի Եղիսաբէի-  
 տիկինը կը ցաւեր, վախնալով որ չըլլայ թէ անով  
 էրկանն իր վրայ ունեցած սէրը պաղի: Օր մը կոմ-  
 սին հետ դալարագեղ մարդագետիներու վրայ պար-  
 տելու ելլելով՝ աղքատ կնոջ մը հանդիպեցաւ, որն  
 որ գիրկը հրեշտակի պէս աղուոր ու վառվռուն  
 տղայ մ'ունէր: Աոմսուհին յոգւոց հանելով ու հաճ  
 աչուքներով տղուն նայելով՝ մօրն ըսաւ. Տղադ ին-  
 ծի կը ծախես. ինչ որ ուզես կու տամ: — Չէ,  
 տիկին, պատասխանեց աղքատ մայրը. բոլոր Բերուի  
 ոսկին ալ տաք, չեմ ի տար: Աոմսուհին դարձաւ  
 կոմսին՝ Ո՛հ, ինչպէս հարուստ է ադ աղքատ կինն  
 իր զաւկովն, ըսաւ, եւ ես ինչպէս աղքատ իմ ա-  
 մէն հարստութիւններովս, ինչու որ մայր ըլլալէն  
 զրկուեր եմ:

Ա երջապէս կոմսուհւոյն եռանդնալից աղօթք-  
 ներն ու ջերմ փափաքը լսելի եղան եւ որդի  
 մ'ունեցաւ: Տղան շատ առոյգ ու գեղեցիկ էր, բայց  
 մայրը սաստիկ հիւանդութեան մէջ ինկաւ. անանկ  
 որ բժիշկները շուտ մը յոյսերնին կարեցին: Իր վեր-  
 ջին վայրկեանները խիստ սրտաշարժ եղան եւ իր  
 աստուածպաշտութիւնը ցուցուցին. կենդանի հա-  
 ւատքով ինք զինքն Աստուծոյ կամացը յանձնեց.  
 եւ յաւիտենական կենաց հաստատուն յոյսը՝ մա-  
 հուան երկիւղը փարատել կու տար իրեն: Այնպէս  
 որ իր անհնարին ցաւերու մէջ ընկղմած ամուսինը  
 կը մխիթարէր եւ իրեն ցուցուցած սիրոյն ու հա-  
 ւատարմութեան համար շնորհակալ կ'ըլլար: Ետքէն  
 անդամ մ'ալ զաւակը տեսնել ուզելով, անկողնոյն



վրայ նստած՝ դիրկն առաւ, գդուեց, պագաւ եւ վերջին անգամ տղուն երեսը ժպտելով եւ արտասուօքը թրջելով՝ Գժբախտ տղայ, ըսաւ, դուն ինծի կը նայիս, բայց զիս չես ճանչնար, չես զիտեր որ ես քու մայրդ եմ, չես իմանար թէ ինչ մեծ սիրով զքեզ կը սիրեմ: Կարող պիտի չըլլաս քու առջի ժպիտներովդ մայրդ սղջունել եւ Մօր անունը տալով՝ զուարճացրնել: Առանց իմ մայրենի խնամոցս պիտի մեծնաս: Աստուծոյ կամքն ըլլայ: Կոմսուհւոյն արցունքները խօսքը յառաջ տանելու թող չտուին, ուստի զաւակը շատ անգամ պագնելէն ու օրհնելէն ետեւ հօրը տալով՝ ըսաւ. Ահա զինքն Աստուծոյ ու քեզի կը յանձնեմ. կը յուսամ որ Աստուած աս մօրմէն որբացած տղուն կ'ողորմի, եւ դուն իբրեւ դժբաժ հայր զինքը կը մեծցրնես: Ա՛լ կոմսուհւոյն ոյժը՝ ցաւէն ու խօսելու ճիգ ընելէն բոլորովին հատաւ. եւ քիչ մը լուռ կենալով՝ աչուքները դէպ երկինք սեւեռած՝ անբարբառ աղօթք ըրաւ:

Վանի կերթար տենդը կը սաստկանար: Նոյն միջոցին յանկարծ արկղիկն ուղեց, եւ երբ որ բերին, Սիրելի՛ ամուսին, ըսաւ կոմսին, աս զարդերը դուն ինծի հարսանեաց պարգեւ տուիր. հիմա կը բաղձամ որ ամէնն ալ իմ սիրելի Պիանդայիս՝ եղբօրդ ամուսնոյն թողլամ, իբրեւ իմ սիրոյս յետին ցոյց մը: Կոմսուհին տկարանալով՝ խօսքը նորէն քիչ մ'ատեն ընդհատելէն ետքը, դարձեալ ըսաւ. Աս բաղձանքս ալ կ'ուզէի, սիրելիս, յայտնել քեզի. տղոց առջի կրթութիւնը մարց կը վերաբերի, անոր համար կը բաղձայի որ սիրելի Պիանդաս իր որդւոցը հետ իմ տղուս կրթութիւնն ալ վրան առնէր: Երանի՛ թէ աս բաղձանքս կատարուէր:

Նանդարտ եղիր, սիրելի՛ Եղիսաբէթս, պատասխանեց կոմսը, Աստուած ամէն բան անանկ կը հոգայ, որ քու բաղձանացդ համաձայն՝ Պիանդան մեր



սիրելի զաւկին երկրորդ մայրը կ'ըլլայ : Ասան զի արդէն յառաջուրնէ կը զգար կոմսը, որ իր սիրելի ամուսնոյն վախճանելէն ետեւ՝ ինք երկայն չ'ապրիր :

Առաքինի կոմսուհին իր վշտացը քրիստոնէական համբերութեամբ կը տանէր. զօրութիւնն երթալով կը նուազէր եւ վախճանը կը մօտիկնար : Աոման անհարին ցաւոց ծովու մէջ ընկղմած՝ անոր մահուան անկողնոյն քով կը նստէր : Աամաց կամաց բերդին բնակիչներն ալ արտասուալից աչուրներով կոմսուհւոյն խուցը կը թափուէին, եւ ամէնքն ալ իրենց բարերար տիկնոջ համար աղօթք կ'ընէին :

Իսցին պատուհանները պարտիզին վրայ էին, զորն որ դարնան ջինջ ու պայծառ օդը կրկին կը գեղեցկացընէր : Նոյն միջոցին հոնտեղիններէն մէկը կամացուկ մ'ըսաւ ուրիշի մը. Ինչպէս դժուար է այսպիսի գեղեցիկ աշխարհքէ մը եւ իր սիրելիներէն բաժնուիլ : Աոմսուհին աս խօսքը լսելով՝ պատասխանեց. Չէ, կարծածիդ պէս շատ դժուար չէ. վասն զի աս աշխարհքս թող տալովս՝ անդին աւելի գեղեցիկ աշխարհք մը կ'երթամ, ուր օր մը թէ՛ ամուսինս, թէ՛ տղաս եւ թէ՛ դուք ամէնքդ ետեւէս պիտի գաք : Աս խօսքերը զրուցելու ատեն՝ կոմսուհւոյն երեսները ներքին եռանդէն կը շողային : Քիչ մը ետքը ամուսնոյն ու ծառաներուն արտասուաց եւ մէկ բարեպաշտ եկեղեցականի աղօթից մէջ հոգին աւանդեց, վերջին խոստովանութիւնը կատարելէն եւ յաւիտենական երկայն ճանապարհորդութեան թոշակն առնելէն ետեւ :

Աոմսին ցաւը խօսքով չ'իկրնար բացատրուիլ. աչուրներէն արտասուաց հեղեղ մը թափելով՝ ծունկինկաւ կողակցին մահուան անկողնոյն առջին. եւ ցաւալից ձայնով մը կանչեց. Տէր Աստուած, ալ աս աշխարհքս ինձի համար լմընցաւ. բայց դուն այսպէս հրամայեցիր, քու կամքդ ըլլայ : Ետքէն հեղ



մ'ալ ամուսնոյն սառած երեսը նայելով՝ Երթաս բարով, բաւ, բարի հրեշտակ, որ Աստուած երկրի վրայ ինծի ընկեր ըլլալու խաւրեր էր: Սառագիւ դուն իմ հրեշտակս էիր. դուն կրցար իմ բարկացոտ բնութիւնս սանձել, դուն շատ հեղ անխոհեմ ընթացքս բռնեցիր. դուն ինծի շատ պարագաներու մէջ առաջնորդ ու խրատտու եղար. վերջապէս դուն շատ անգամ զանազան բարիքներու զիս մտադիր ըրիր, զորոնք առանց քու քաղցր ազդարարութեանդ չէի կրնար կատարել: Գուն երկնային երեւոյթ մ' էիր, որ ակնթարթի մը մէջ աչքէս աներեւոյթ եղար գերեզման մտնելու եւ կամ մանաւանդ երկինք վերանայու համար: Աստուած տայ որ շուտով երանելիաց բնակութիւնը մէկգմէկ տեսնենք:

Ասանկ խիստ ցաւով միանգամայն Աստուծոյ կամայը համաձայնելով՝ իր ամուսնոյն թաղման ալներկայ գտնուեցաւ կոմսը: Նոյն ժամանակէն ալ իր միակ մխիթարութիւնը միամօր որդին էր, որն որ մկրտուելով Փերդինանդ անուանուեցաւ: Հայրն օրը տասն անգամէն աւելի անոր որրոցին քով կ'երթար. շատ հեղ ալ զիրին առած՝ պարտեղը կը պտըտցընէր: Ով որ աս գժբախտ հայրը սգոյ զգեստով եւ զիրին սպիտակափայլ խանձարրով պատած տղան տեսնէր, արցունքը չէր կրնար բռնել: Փերդինանդոս քանի կ'երթար՝ հասակաւ կ'աճէր եւ օրէ օր աւելի շնորհալից կ'ըլլար: Հօրը անպատմելի ուրախութիւն պատճառեց, երբ որ առջի հեղ իր մանր բազուկները տարածած՝ անոր երեսը ժպտեցաւ, ցուցնելով որ զինքը կը ճանչնայ: Կոմսը մեծ բաղձանքով ան օրուան կը սպասէր որ Փերդինանդոս կարող ըլլայ իրեն՝ Հայր քաղցր անունը տալ:

Բայց նախախնամութեան յաւիտենական անփոփոխ վճիռները զինքն աս երջանկութեան չհասցուցին: Անգամ մը ձիէն վար կ'յնալով՝ խիստ ծանր

վերք մ'ընդունեցաւ եւ կուրծքի հիւանդութիւն մը ստացաւ: Առողջութիւնն օրէ օր դէշնալով՝ վերջապէս ան աստիճանի հասաւ որ իմացաւ թէ մահն ալ մօտիկցած է: Անոր համար կտակն անձամբ շինեց եւ եղբօրը գրեց որ զինքը Փերգլինանդոսին յանձնածիչ կ'անուանէ. նմանապէս Պիանդա տիկնոջն ալ թուղթ մը գրեց, աղաչելով որ տղան քովն առնէ եւ իր զաւկըններուն հետ մէկտեղ մեծցընէ: Ասոնք ընելէն ետեւ՝ մահուանէն քիչ մը յառաջ՝ զաւակը բերել տուաւ, եւ գրկելէն ու օրհնելէն ետեւ՝ դաստիարակուհւոյն ձեռքը տուաւ որ անմիջապէս Պիանդային տանի: Չաւկին ապագայ վիճակին վրայ այսպէս ապահով ըլլալով՝ կրօնի բոլոր միտքարութիւններովը լեցուած եւ իր սիրելի ամուսինն երկինքը նորէն տեսնելու քաղցր յուսով՝ աշուրները գօցեց:

Բ. Որք պղան է իր առաջին պարիները:

Պիանդա տիկինը քանի մը մղան հետու հին բերդի մը մէջ կը բնակէր, որուն շէնքը Արաբացւոց ու Սարակինոսաց ժամանակները կը յիշեցընէր: Բերդն՝ իր բաղմանիկն ձեւովը, բաղմաթիւ պատշգամներովն ու սրածայր աշտարակիկներովն՝ այլանգակ կերպարանք մը կը ստանար: Իսկ մէջի մութ եւ օձաձեւ աստիճանները, նեղ ու նուրբ անցքերն ու բնակարաններուն բարձր կամարները առջիանդամ տեսնողը վախով կը լեցընէին: Բայց որովհետեւ չորս կողմը գեղեցիկ պարտէզներով պատած էր եւ սքանչելի դիրք մ'ունէր, անոր համար տիկինն իր տղոցմով շատ յօժարութեամբ անոր մէջ կը բնակէր. իսկ իր ամուսինն՝ որ զօրաց դնդապետի աստիճան ունէր, հասարակօրէն բանակը կը գտնուէր:

Շատ ուրախացաւ Պիանդա տիկինն՝ երբ որ լսեց թէ իր Եղիսաբէթ ներք, որուն հետ պղտիկութեանէ վեր մէկ սիրտ մէկ հոգի էր, զաւակ մ'ունէ-



ցեր է: Եւ աս իր ուրախութիւնն անանկ մեծանձնա-  
կան էր եւ այնպէս անձնական շահասիրութենէ  
հեռու, որ եւ ոչ մտքէն կ'անցընէր թէ ան տղուն  
ծնանելով՝ ինք հարուստ ժառանգութենէ մը կը  
զրկուի: Բայց աս ուրախական լրէն քանի մ'որ ետքը  
Եղիսաբեթին մահուան զոյժն առաւ: Արդէն դիւրաւ  
կրնայ իմացուիլ որ ինչպէս սաստիկ ցաւ ունեցաւ  
Պիանդա աս աղէտալի դէպքին վրայ: Գեռ իր սգոյ  
զգեստները չէր փոխած, երբ կոմսին մահուան բօթն  
ալ հասնելով՝ իր ցաւն ու տրամուծիւնը, որոնք  
ժամանակը տակաւին չէր կրցեր մեղմել, աւելի եւս  
սաստիացուցին: Անմիջապէս սուրհանդակ մը հանե-  
լով՝ բանն իր երկանն իմացուց, որն որ նոյն ատեն  
զօրաց հետ Մատրիա էր:

Արկրորդ օրը իրիկուան դէմ հասաւ Փերդինան-  
դոս իր դաստիարակուհւոյն հետ: Պիանդային սրտին  
մէջ ցաւն եւ ուրախութիւնը մէկմէկու հետ խառ-  
նուեցան: Յաւ, վասն զի տղուն դալուստը՝ նոր կոր-  
սընցուցած ծնողաց կսկիծները սրտին մէջ կը նորու-  
զէր. ուրախութիւն, որովհետեւ շատ կ'ուրախանար  
իր սիրելի Եղիսաբեթին միակ զաւակը տեսնելով:  
Գաստիարակուհին սեւ հագուած ներս մտաւ՝ տղան  
գիրկը բռնած, որուն սպիտակափայլ լաթերը սգոյ  
սեւ ժապաւեններով զարդարուած էին: Աինը հա-  
ռաչանօք ու հեկեկանօք իրեն յանձնուած պաշտօնը  
կատարեց: Ավարէս կոմսին գրած նամակը տուաւ,  
որուն մէջ Պիանդային ու իր եղբօրը կ'աղաչէր որ  
գժբախտ որբին հօր ու մօր տեղ բռնեն:

Պոմսուհին շարժած սրտով եւ արտասուալից  
աչուքներով տղան գիրկն առաւ ու խանդաղատա-  
նօք նայելով՝ աս սրտաշարժ խօսքերը խօսեցաւ.  
Եկուր, եկուր, սիրելի հրեշտակիկ. զքեզ ալ այնպէս  
կը սիրեմ, ինչպէս որ քու ազնիւ մայրդ սիրեցի:  
Տղան թէպէտ աս խօսքերէն բան չէր հասկընար,



բայց տիկնոջ գորովագութ հայեցուածքը տեսնելով՝  
 պղտիկ ձեռուքները ժպտելով անոր երկընցուց :  
 Պիանդան զինքը պահնելով ու վրան յորդաբուխ  
 արցունք թափելով՝ խօսքը յառաջ տարաւ : Գծբանխա  
 տղայ, ըսաւ, դուն մայրդ չճանչցած՝ կորսընցուցիր :  
 Չես գիտեր զլուխդ եկած դծբանխաութիւնը . բայց  
 մի վախնար . ես քեզի գորովագութ մայր կ'ըլլամ .  
 երանի՛ թէ էրիկս ալ՝ նոյնպէս իր հայրական սիրովը՝  
 կորսընցուցած բարի ու ազնիւ հօրդ տեղը բռնէ :

Ետքը զակընդորուն դառնալով, որոնք իրենց  
 մօրը հետ կու լային, ըսաւ . Ահաւասիկ, զակընդորս,  
 Աստուած ձեզի նոր եղբայր մ'ալ խաւրեց, եկէք  
 խոստացէք որ զինքը կը սիրէք : Աս խօսքերէն տղոց  
 տրամութիւնը՝ արցունքնին չչորցած՝ փարատեցաւ,  
 եւ նորէն իրենց սովորական ուրախութիւնը սկսաւ :  
 Փիլիպպոս՝ որ դրեթէ եօթը տարեկան էր, իր նոր  
 եղբայրը զբօսցընելու համար՝ սրինգն առաւ, սկսաւ  
 երգ մը նուագել . իսկ Աարոլոս՝ պղտիկ եղբայրը՝ նոյն  
 մտօք սկսաւ իր թմբուկը զարնել : Աս տղոց հանած  
 շառաչիւններով Փերդինանդոս զուարճանալով՝ ու  
 րախութեամբ կը ծիծաղէր . բայց մայրերնին վախնա  
 լով որ չըլլայ թէ աղմուկը շատ մեծնայ . Ա՛լ բաւա  
 կան է, ըսաւ . եւ անմիջապէս սրընդի ու թմբկի  
 ձայնը դադրեցաւ : Այնչափ վարժած էին տղաք շուտ  
 մը հնազանդելու :

Եւզինէ՛ կոմսուհւոյն անդրանիկ աղջիկը, որ ու  
 թը տարւան էր, Սիրելի՛ մայր, ըսաւ, ես ալ բո  
 լոր իմ տկար ձիւքերս մեր պղտիկ եղբօրը ծառայե  
 լու կը գործածեմ . թէ որ հրաման տաք նէ՛ զդեստ  
 ները ես կը կարեմ, նմանապէս իր ուտելիքն ալ ես  
 կը հոգամ : Հիմակ ի՛նչ պատրաստեմ իրեն : Մայրն  
 իրեն բարեարտութիւնը գովելով՝ սկսաւ իր խնամոցը  
 յանձնուած տղուն հարկաւոր եղածները հոգալ :

Փերդինանդոս աս իր երկրորդ մօրը հոգաբար



ձութեան տակ մեծնալով՝ օր աւուր վրայ ալ աւելի գեղեցիկ ու աւելի սիրուն կ'ըլլար: Շուշանի պէս սպիտակ երեսը, վարդագոյն կարմիր այտերը, թուխ ու վառվռուն աչուրները՝ կերպարանացը սքանչելի տեսք կը շնորհէին: Միանգամայն ան պղտիկ հասակին մէջ սուր միտք ու ազնիւ սիրտ մը կը ցուցնէր: Իր խնամակալու մայրը զինքն իր տղոցը պէս կը սիրէր. նոյնպէս տղաք՝ իրեն հետ եղբօր պէս կապուած էին: Իսկ ինք՝ որ լեզուն բացուելուն պէս՝ տիկնոջը Մայր անունը տուած էր, միշտ նոյն անունը կը պահէր:

Պիանդա կոմսուհին իր տղոց մէջ կատարեալ երջանկութիւն մը վայելելով՝ ամէն ճիգն ի դօրծ կը դնէր զանոնք ալէկ կրթելու: Շատ անգամ բերդին մեծ ու պայծառ պարտիզին մէջ, երկինքին կապուտակ կամարին տակ, մրգաբեր ծառերու քով ու գոյնագոյն ծաղիկներով զարդարուած ծաղկոցներու մէջ՝ իրենց հետ Աստուծոյ բարերարութեան վրայ կը խօսէր: Ամէն օր առտու իրիկուն եւ կերակրէ յառաջ պատշաճ աղօթքներն ընել կու տար: Սուրբ դրքին պատմութիւնն ալ զարմանալի լուսաւորութեամբ ու տղոց ըմբռնման համաձայն կը պատմէր իրենց. կը ցուցնէր թէ ի՞նչպէս Աստուած աշխարհքս ստեղծելէն չէր՝ միշտ մարդուս վրայ իր հայրական խնամքը կը յայտնէ, ի՞նչպէս բարիները կը սիրէ ու կը վարձատրէ, իսկ չարերը կը պատուհասէ: Հասարակօրէն տղաք պատմութենէն ետեւ խել մը խնդիրներ կ'ընէին, որոնց ինք ճիշդ պատասխաններ կու տար: Ասանկով ան պատմութիւնները տղոց օգտակար խօսակցութիւններու նիւթ կ'ըլլային:

Բայց կոմսուհւոյն աւելի մեծ ուրախութիւն կը պատճառէր, երբ որ կը տեսնէր որ տղաք լսած պատմութիւններնուն վրայ խորհրդածութիւններ կ'ընեն եւ զանազան դիպուածներու կը յարմարցնեն, որուն մէջ Փերդինանդոս ամենէն աւելի յաջողակու-

Թիւն կը ցուցնէր : Օր մը ասիկա զըուցեց որ Երկրաւոր դրախտը մեր պարտիզէն աւելի գեղեցիկ չի կրնար եղած ըլլալ . որովհետեւ մենք մեր պարտիզին մէջ այնպէս երջանիկ կ'ապրինք , ինչպէս մեր նախահարբը դրախտին մէջ : Սիրելի զաւկըներս , պատասխանեց կոմսուհին , միշտ երջանիկ կ'ըլլաք , թէ որ բարեպաշտ ու անմեղ մնաք եւ մեղքէն զգուշանաք :

Աս կերպով տղաք պատմութիւնները մեծ մտադրութեամբ մտիկ կ'ընէին , եւ շատ անգամ մօրերնուն կ'ըսէին . Սիրելի մայր , մեզի պատմութիւն մը պատմէ : Իսկ կոմսուհին կը ջանար իր պատմած պատմութիւններովը՝ կրօնն իր զաւկըներուն սիրելի ու յարգելի ընել . եւ պզտիկութենէ կրօնի հիմունքն անոնց մատաղ սրտերուն մէջ տնկելով՝ բարոյակա՜նութեան սերմունքն ալ սերմանած կ'ըլլար , որոնք անոնց բոլոր կենաց մէջ բարի պտուղներ պիտի բերէին :

#### Գ . Խնամակալ :

Պիանդա կոմսուհւոյն երիկը՝ Ալոնզոյ կոմսը հանդուցեալ Ալվարէս կոմսին ամենեւին չէր նմաներ . հապա անոր հակառակ՝ հպարտ , ամբարտաւան , անձնասէր ու շուայլ մարդ մըն էր : Ան գեղեցիկ կալուածք , որն որ՝ իբրեւ կրտսեր որդւոյ՝ իրեն ժառանգութիւն ինկած էր , իր սաստիկ ծախքերուն բաւական չէր ըլլար : Աս պատճառաւ զինուորական ծառայութեան մէջ մտաւ , որպէս զի քաջագործութիւններով աւելի բարձր աստիճանի հասնի ու մեծ հարստութիւն ստանայ : Իր հարցը բերելը՝ շէնքին հնութեան համար՝ կ'ատէր եւ աւելի կ'ուզէր մայրաքաղաքը բնակիլ , ուր որ ժամանակին մեծ մասը կ'անցընէր : Շատ ցանցառ իր ընտանիքը տեսնելու կու դար . եւ միշտ հետը հարուստ նշանազգեստ հագած շատ մը ծառաներ եւ թանկագին ու ընտիր ձիեր կը բերէր . մէկ խօսքով՝ մեծ պերճութիւն ու



Վիառաւորութիւն կ'ուզէր ծախել : Տեղը հասածին պէս՝ մօտաւոր ազնուականները բերդը կը ժողվուէին, որոնց վիառաւոր սեղաններ կու տար . այնպէս որ ան խաղաղութեան ու հանդարտութեան բնակարանը շփոթութեան ու խառնակութեան կայան կը դառնար :

Կոմսն իր տղոցը վրայ ամենեւին փոյթ չէր տաներ : Իր բերդը գտնուած ատենները՝ պէտք էր որ տղաք իրենց անմեղ խաղերէն ու զուարճութիւններէն հրաժարէին : Անանկ որ կը սկսէին հօրերնուն երթալուն բաղձալ, որպէս զի կարող ըլլան տան ու պարտիզին մէջ իրենց սովորական կեանքը վարել : Թէպէտ աղայ էին, ի վերայ այսր ամենայնի յայտնի կը տեսնէին որ հօրերնուն իրենց վրայ ունեցած սէրը՝ մօրերնուն սէրէն շատ նուազ էր :

Բայց աս սիրոյ պակասութիւնը ամենէն աւելի Փերդինանդոս կը զգար : Կոմսը նոյն սիրուն տղան կ'ատէր, վասն զի անոր ծննդեամբն՝ իր Ալվարէս եղբորն ինչքերը ժառանգելու յոյսն ոչընչացած էր : Փերդինանդոս ալ իր կողմանէ կ'իմանար որ հօրեղբայրն իրեն ծուռ աչօք կը նայի, անոր համար անոր առջին ասիւ եւ դողութեամբ կը կենար : Իսկ կոմսուհին երբ որ տեսնէր թէ էրիկը զՓերդինանդոս անիրաւ տեղ կը յանդիմանէ, միշտ տղուն թեր կ'ելէր, եւ զինքը սփոփելու համար երբեմն մխիթարական խօսքեր կ'ըսէր : Ասով կոմսին բարկութիւնն որ ըստ օրէ կ'աւելնար եւ Փերդինանդոսին դէմ աւտելութիւնը կը շատնար :

Իրիկուն մը՝ Ալոնզոն հոն չեղած ատեն՝ Փերդինանդոս որ նոյն ժամանակը վեց տարեկան էր, յանկարծ հիւանդացաւ : Արան տաքութիւն մ'եկաւ, սրուն հետ սաստիկ զլխացաւ ալ խառն էր : Պիանգա տիկինը ասոր վրայ խիստ այլայլեցաւ, եւ որովհետեւ քաղքէն շատ հեռու ըլլալով՝ շուտ մը բժիշկ բերել տալն անկարելի էր, անոր համար դե-



դին բժիշկը կանչել տուաւ : Ամպրողիոյ՝ գեղին բժիշկը՝ շուտ մը հասաւ, երկայն կարմիր զգեստ մը հագած եւ կեղծամն ալ նոր փոշուով ցանած : Գալուն պէս՝ ակնոցը հանեց, քթին վրայ դրաւ, անկողնոյն մօտիկցաւ, հիւանդը քնեց, երակը զննեց, ուսերը վեր վերցուց, գլուխը ցնցեց, չհաւնելու ձեւեր մ'ըրաւ, եւ . . . բան մը չզրուցեց :

Ամպրողիոյ հասարակ սափրիչի կտոր մըն էր . բայց գեղացիները երբ որ դինքը շողօքորթել կ'ուզէին, Պարոն բժիշկը կը կանչէին : Արդ՝ կոմսուհին տեսնելով որ անիկա հիւանդութեան վրայ ամենեւին բան մը չիզրուցեր, կասկածի երթալով որ գուցէ ինքն ալ չիհասկընար, ըսաւ . Ար յուսամ որ բժշկութեան մէջ փորձառութիւն ունիք :

Հապա, հապա, պատասխանեց Ամպրողիոյ գլուխը վեր վերցընելով : Մէկ տարւան մէջ միայն եօթը կտորած սրունք բժշկեցի . դժբախտութեամբ նոյն հիւանդութիւնն ան ժամանակէն վեր երեւան չելաւ, եւ շատ ցանցառ ուրիշին կը տարափոխի :

Տարափոխիլ, պոռաց կոմսուհին, կենացս մէջ երբեք լած չունիմ որ սրունքի կտորածութիւնը տարափոխիկ կրնայ եղեր ըլլալ : Բայց համառօտ մ'ըսէք, տղան ի՞նչ ունի :

Արպէս զի իմացուի թէ ի՞նչ տեսակ հիւանդութիւն է, պատասխանեց Ամպրողիոյ, պէտք որ նախ աղէկ մը յառաջանայ : Հիմակ աս վիճակիս մէջ եւրոպայի ամենէն քաջ բժիշկն ալ չիկրնար Պարոնիկին հիւանդութիւնն իմանալ :

Վա՛ւ . մինչեւ վաղը առտու սպասենք, ըսաւ կոմսուհին՝ բժշկին ի՞նչ տեսակ մարդ ըլլալն իմանալով, երթա՛ք բարով . . . եւ նշան ըրաւ որ երթայ :

Կոմսուհին դուրս ելաւ, կ'ուզէր հրաման տալ որ շուտ մը քաղաք ձիով մարդ մ'երթայ, բժիշկ մը բերէ . մէյ մ'ալ ծառայ մ'եկաւ իրեն զրուցեց որ



կոմսն եկեր է: Կոմսուհին անմիջապէս զաւկընէ-  
րոյն ամուսնոյն դիմացը վաղեց: Բայց առջի հայե-  
ցուածին տեսաւ որ անիկայ խիստ մեծ այլայլութեան  
մէջ է, որմէ գուշակեց թէ սաստիկ դժբախտ դէպք  
մը պատահած պիտ'որ ըլլայ: Կոմսը չորս կողմը նայ-  
ելով ու եղբորորդին չտեսնելով՝ Ո՛ւր է Փերդինան-  
դոս, պրոպ. օր մը հարուստ ու ընդարձակ կարուած-  
ներ ժառանգելուն համար՝ ինք զինքն ինձի պար-  
տաւոր եղած յարդութենէն ազատ կը կարծէ:

Ո՛հ, պատասխանեց կոմսուհին, խեղճ տղան սաս-  
տիկ հիւանդ է:

Հիւանդ, կրկնեց կոմսը, եւ իր ան խորունկ  
մտմտութի մէջ ելող դէմքը յանկարծ լուսաւորուե-  
ցաւ: Լաւ է, թող գեղին բժիշկը կանչուի:

— Անիկակ արդէն եկաւ. բայց ի՞նչպէս կրնանք  
Փերդինանդին կեանքն այնպիսի տգէտ մարդու մը  
ձեռք յանձնել:

Ա՛յ, պատասխան տուաւ կոմսը, անիկա տղու մը  
համար բաւական բան գիտէ:

Նոյն միջոցին Ալոնզոյին տան հազարապետը տը-  
ցակ մը նամակ բերաւ: Կոմսը շուտ մը անոնց վեր-  
նադիրները կարդալով՝ գրերը ճանչցաւ, եւ անոնցմէ  
ոմանք զինքն այնպէս բարկութեան մէջ խոթեցին,  
որ կատղութենէն սկսաւ ոտքովը գետինը զարնել  
եւ պռալ, Չանձրացուցիչ մարդիկ, ուզածնին գի-  
տեմ: Ետքը մեծ կնքով թուղթ մը տեսնելով՝ Աս  
նամակը շատ ծանրակշիռ է, ըսաւ, պէտք է որ շուտ  
մը կարդամ: Չգացած՝ հրամայեց որ սափրիչն երթան  
կանչեն, վրան աւելցրնելով որ Ես անձամբ կ'ուզեմ  
հետը խօսիլ: Աս ըսաւ ու աճապարեց դնաց աշտարակ  
մը մտաւ, ուր որ կը քաշուէր հարկաւոր դորձք ու-  
նեցած եւ մանաւանդ սրտնեղութեան մէջ եղած  
ատեն: Ներս մտածին պէս՝ շուտ մը ձեռուրները  
գողգոլալով ան ծանրակշիռ նամակին կնիքը բացաւ,



այլայլութեամբ կարդաց, ետքը բարկութենէն պատառ պատառ ըրաւ դետինը նետեց եւ ինք թիկնաթռոնն վրայ իյնալով՝ յուսահատ ձայնով մը պռուաց. Մահ, դժոխք . . . ալ բանս բուսաւ:

Ստուգիւ Ալոնզոյին վիճակը շատ դէշ էր: Քանի որ իր Ալվարէս եղբայրը տղայ չէր ունեցեր, ինք անոր ստացուածքն իբրեւ իրեն սեպհական ինչքը կը համարէր: Աս յուսով խիստ շատ պարտք ըրած էր: Երբ որ իր ակնկալութեան հակառակ եղբայրը ժառանգ մ'ունեցաւ, ստոյգ է սկսաւ ծախքերը քիչ մը պակսեցընել, բայց պէտք եղածին չամի չէ. վասն զի ծառաներէն ոմանք քովէն հանելը կամ անթիւ դեղեցիկ ձիերէն քանի մը հատը ծախելն՝ իրեն մեծ ամօթ կը սեպէր: Փերդինանդին հօրը մահն ալ իր վիճակն աւելի դէշցուց, որովհետեւ աս առատաձեռն եղբայրը թէպէտ միշտ անոր շնայլութիւնը կը յանդիմանէր, բայց շատ անգամ առատ ստակ կուտար եւ ասանկով զինքը նեղութենէ կ'ազատէր:

Ալվարէս կոմսին մահուրնէ ետեւ՝ երբ որ Ալոնզոյ Փերդինանդոսին խնամակալ անուանուեցաւ, շատ հեղփորձ փորձեց որբին ինչքերէն մէկ մասն իրեն սեպհականելու, անոր քանի մը դրամագլուխներն իրեն առնելով: Բայց Ալվարէս կոմսն իր խելացութեամբը՝ տղուն ինչքերն աղէկ ապահովցուցած էր իմաստուն կարգադրութիւններով, միանգամայն եղբօրմէն զատ՝ խոհեմ եւ արդար մարդ մը դրած էր իբրեւ երկրորդ խնամակալ, որն որ Ալոնզոյին աղաչանքներուն ամենեւին ականջ դնել չէր ուզեր:

Այսպէսով Ալոնզոյին պարտքերն այնպէս շատցած էին, որ պարտատեարքը զինքը դատաստանի կանչելու սպառնալիք կ'ընէին: Ամենէն դէշն ան էր որ իրեն ձեռքը յանձնուած զինուորական արկղէն ալ շատ ստակ առած էր յուսալով որ ատենին տեղը կը դնէ: Հիմա հաշիւ տալու օրերը կը մօտիկ-



նար, եւ ինք ան ստակները տեղը չէր կրնար դնել: Ան իրիկուն ընդունած նամակներն ալ ուրիշ բան չէին, բայց եթէ պարտատէրներուն ըրած սպառնալիքները, եւ կամ փոխ ստակ ուզած մարդիկներուն բացասական պատասխանները: Իսկ ան պատուած նամակը՝ Փերդինանդին երկրորդ խնամակալէն էր, որով իր ամէն յոյսերը փճացած էին: Աոմնը սաստիկ շողքորթական խօսքերով իրեն աղաչած էր որ կարող ըլլայ Փերդինանդին ինչքերէն քիչ մը բան առնել, որով կրնար գոնէ ամենէն աւելի ստիպողական վտանգէն ազատիլ: Անոր համար ասոր մերժումն որ կարգաց, բարկութիւնը չկրնալով զսպել՝ կատողութենէն ակռաները կրճատելու եւ մազերը փետելու սկսաւ: Աչքին առջեւը կը տեսնէր որ արկղէն պակասած ստրկին համար՝ նախատինքով զինուորութենէն պիտի վաճառուի եւ պարտատէրները գոհ ընելու համար՝ ամէն ինչքերէն պիտի կողպատուի:

Նոյն րոպէն Ամպրոզիոյ բժիշկը ոտուրները գետինը քսքրտելով, գլուխը խոնարհեցնելով ու զանազան ձեւեր ընելով՝ ներս մտաւ, եւ սկսաւ երկայն խօսքերով կոմսին յաջող դարձին վրայ խել մը ցուրտ բարեմաղթութիւններ ընել:

Չայնդ կտրէ, պուաց Ալոնզոյ բարկութեամբ, եւ միայն հարցումներու պատասխան տուր: Փերդինանդոսին հիւանդութեան վրայ ի՞նչ կը կարծես:

Տէր, պատասխանեց բժիշկը դողդողալով, թէ որ Ձեր Բարձրութիւնը կը ներէ նէ՝ անոր հիւանդութիւնը հրաբխային տենդ է:

— Ա՛նմիտ, անտարակոյս հարբխային տենդ կ'ուզես ըսել: Բայց կը սխալիս, պէտք է որ ծաղիկ ըլլայ. նոյն հիւանդութիւնն աս տարի ժամտախտի պէս ջարդ ըրաւ տղոց մէջ: Ասոր ի՞նչ կ'ըսես:

— Ըրամեր էք, Տէր իմ, ծաղիկ է, եւ թէ որ Ձեր Բարձրութիւնը կը բազմայ նէ՝ ժամտախտ է:

Հոստեղս յանկարծ Ամպրոզիոյին միտքն ինկաւ որ տղուն հիւանդութիւնը պէտք է որ ծաղիկ եղած ըլլայ. եւ խիստ կը զարմանար թէ ինչպէս աս բանս յառաջ միտքը չեկաւ: Աս բժիշկը թէպէտ խիստ տգէտ էր, ի վերայ այսր ամենայնի միշտ հազարումէկ գիւտեր կը հնարէր, տգիտութիւնը ծածկելու համար: Ուստի եւ հոս ալ ինք զինքը պաշտպանելու համար՝ անմիջապէս ըսաւ. Ես արդէն շատ աղէկ նշմարած էի որ տղուն հիւանդութիւնը ծաղիկ է. բայց կոմսուհւոյն եւ Ձեր Բարձրութեանը չհամարձակեցայ յայտնելու, որ զձեզ չվախցընեմ: Արդէն հիւանդութիւնն այնպէս յառաջացած է, որ մէկալ տղաք ալ անկէ բռնուելու վտանգի մէջ են:

Կոմսն անմիտ բժշկին տգիտութիւնն ու խորամանկութիւնն իմացաւ, բայց առանց յայտնելու, շինծու բարկութեամբ մ'ըսաւ. Քու լուութեամբդ իմ ընտանեացս մեծ դժբախտութիւն կրնայիր հասցընել: Բայց ինչ որ է նէ՛ հիմա գնա, եւ քեզի յարմար ու ազդու երեւցած կերպով հիւանդը դարմանէ:

Անդութ Ալմնզոն ամենեւին խիղճ չէր ըներ իր եղբորորդւոյն կեանքն այնպիսի տգէտ մարդու մը ձեռք յանձնելու: Իր ան յուսահատական վիճակին մէջ որբին հիւանդութիւնը խիստ յարմար եկած էր. ուրիշ բանի չէր բաղձար, բայց եթէ որ նոյն տգէտ բժիշկն իր դեղերովն անոր կեանքը կարճեցընէ:

Ամպրոզիոյ բժիշկն երկրորդ անգամ Փերդինանդոսը նայելէն ետեւ՝ շուտ մը գնաց կոմսուհւոյն ըսաւ որ անոր հիւանդութիւնն ամենէն գէշ տեսակ ծաղիկի հիւանդութիւն է: Տիկինն ասկէ սարսափած՝ տժգոյն երեսով ելաւ էրկանը խուցը վազեց, եւ հարցուց որ արդեօք սափրիչին ըսածն իրա՞ն է:

Ամենեւին տարակոյս չունիմ, պատասխանեց կոմսը պաղութեամբ մը. եւ մեր առջի գործքն ու պարտքն ան է որ տղաքնիս ապահովցընենք: Ասոր



Համար պէտք է որ հոսկից երթանք, ուստի դուն գնա շուտով պատրաստութիւն տես: Զիս հիմա հանդարտ թող տուր, ես կ'ուզեմ մինակ մնալ. ստիպողական գործքեր ունիմ, որոնք բոլոր մտադրութիւնս կը պահանջեն: Խեղճ կոմսուհին տրտում տխուր ետ քաշուելով՝ Փերդինանդոսին խուցը գնաց:

Ալոնզոյ կոմսը մինակ մնաց ան տրտմադին աշտարակին մէջ: Գիշերն ալ կամաց կամաց իր թուխ քօղը ձգելով՝ նոյն աշտարակին հին կամարներուն տակ ամէն բան մութով պաշարուեցաւ. բայց Ալոնզոյին հոգին աւելի եւս մութով պաշարած էր: Ամբարտաւանութիւնն ու անձնասիրութիւնը՝ սիրտը բոլորովին դրաւած ըլլալով՝ ամէն ազնիւ զգած մունչները խղած էին: Ուստի քիչ մը ատեն մտածելէն ետեւ՝ որոշեց որ որբին առնելու դեղերուն մէջ թոյն խառնէ: Իսկզբան աս բանս Ամպրոզիոյին առաջարկել կ'ուզէր. բայց աղէկ մը խորհելով՝ տեսաւ որ այսպիսի բան մը անանկ անմիտ ու շատախօս մարդու մը հաղորդելը խիստ վտանգաւոր է: Անոր համար աչքն իր մարդիկներուն մէջէն՝ Փետրոյ անունով երաժիշտ երիտասարդի մը վրայ ձգեց, որուն վրայ մեծ վստահութիւն ունէր: Արդէն անոր ընդունայնատէր ու փառատէր բնութիւնը ճանչնալով, նոյնպէս ամէն ներքին կիրքերը գիտնալով՝ անոնցմով զանիկա որսալը դիւրին բան մը կը սեպէր: Ի վերայ այսր ամենայնի աս իր խորհած զարհուրելի ոճիրը մէկու մը յայտնելն իրեն շատ դժուարին կու գար եւ իր սրտին մէջ սաստիկ կը կռուէր:

Կոմսն այսպէս ահաւոր եղանակաւ իր խղճմտանքին հետ պատերազմելու ատեն՝ սենեկապանը ներս մտաւ, եւ իր տէրը յուսահատեալ մարդու մը վիճակի մէջ, գլուխը ձեռքին կռթրնցուցած ու աչուրները սեղանին վրայ սեւեռած տեսնելով՝ զարհուրած մնաց: Եւ որովհետեւ կոմսը խորունկ մտածմանց մէջ ընկղմած ըլլալով՝ սենեկապանին ներս մտնելը չէր իմա-



ցած, ասիկա քիչ մը ատեն լուռ ու անշարժ կենալէն ետեւ՝ վերջապէս համարձակելով ցած ձայնիւ ըսաւ որ Աոմսուհին ու տղաք մէկ ժամէ վեր կերակրոյ կը սպասեն: Ալոնզոն մէկէն վեր ցատքեց եւ բարկութեամբ պոռաց. Չէ, ես կերակրոյ չեմ երթար, կ'ուզեմ հոս մինակ մնալ: Ինծի ճրագ, քանի մը շիշ Մալակայի գինի ու երկու դաւաթ բեր:

Երկու դաւաթ, հարցուց սենեկապանը զարմանալով:

Չա՛, երկու դաւաթ, պոռաց կոմսը, սաստիկ բարկութեամբ երեսը նայելով: Շուտով կորսուէ գնա, եւ աս գիշեր երեսդ մէյ մ'ալ չտեսնեմ:

Սենեկապանը հնազանդեցաւ ու շատ անգամ գլուխը ցնցելով դուրս ելաւ. կը վախնար որ չըլլայ թէ տէրը խելքը թռուցած ըլլայ:

#### Գ. Փեարոյ երաժիշտը:

Ինչպէս ըսինք, Ալոնզոյին իր ոճիրն ի դործ դնելու համար ընտրած մարդը՝ քաջ երաժիշտ Փեարոն էր: Աոմսը՝ որն որ երբեք ծախքի մը չէր խնայեր եւ արուեստագիտաց առանձին բերում ունէր, աս մարդս ալ իր ծառայութեան մէջ առած էր: Ասոր գործն ան էր՝ որ տէրը հանդէսներ ու ամենալից սեղաններ տուած ատեն՝ Սպանիացւոյ դիւցազներուն ու հին ասպետներուն՝ Արաբացւոյ եւ Սարակինոսաց դէմ ըրած պատերազմներուն վրայ երգեր կ'երգէր եւ քնար կը զարնէր: Չայնն աղուոր ու քաղցրահնչիւն եւ երաժշտութեան մէջ խիստ քաջ ըլլալով՝ ամէնքը սիրով մտիկ կ'ընէին: Իր առանձին քաջութիւնն ան էր, որ ուրախութեան ու ցաւոց, երկիւղի եւ յուսոյ, սիրոյ ու ատելութեան կիրքերը՝ լսողներուն ալ զգալ կու տար:


Ասկէ զատ՝ Փեարոն զուարթ բնութիւն, գեղեցիկ դէմք, անուշ ու հաճոյական վարմունք ունէր:



Պատանեկութեան ատեն քիչ մը բան սորված ըլլալով՝ միտքն ալ բաւական զարգարուած էր. բայց իր երաժշտութեան համբաւն ամէն տեղ հռչակուած էր, ուստի եւ ուրախութեան ընկերութիւն մը չէր ըլլար, որուն ինք ալ Հնրաւիրուէր: Աս երաժիշտն՝ Ալոնզոյին ամէն բաղձանքներուն ինք ղինքը յարմարցընելով եւ աղէկ շողքորթել գիտնալով, ինչպէս ըսինք՝ բոլոր վտահաւթիւնը ստացած էր. եւ իր սուտահասպատութեամբ բանն այնչափի հասցուցած էր որ անոր անհրաժեշտ հարկաւոր մարդիկներէն մէկն եղած էր: Նմանապէս կոմսին զաւկըներուն ալ ղինքը խիստ սիրուցած էր: Երբեք բերդ չէր դարձաւանց անոնց ընծայ մը բերելու. աղջիկներուն գոյնզգոյն ժապաւեններ ու շինծու ծաղիկներ կը բերէր, իսկ տղոց՝ գեղեցիկ գործուածքով փայտե պղտի տապարներ ու հրացաններ: Միանգամայն բիւր հնարքներ կը գտներ զանոնք զուարճացընելու համար: Բայց տղաք ամենէն աւելի Փետրոյին երգած դիւցաղնական երգերովը շատ կը զուարճանային: Ասով եղաւ որ անոր գալուստը՝ հօրերնուն դալատենէն աւելի իրենց բաղձալի էր:

Աման աս հեղ Փետրոն իրեն հետ առած էր. բայց ալ Փետրոն ան ուրախ զուարթ երաժիշտը չէր: Ինք իր տիրոջմէն աւելի տրտում տխուր էր. տղոց ալ իր սովորական ընծաները բերելու մոռցած էր: Ամէն զուարթ ընկերութիւններէ փախչելով՝ միշտ մինակուի տեղեր կը քաշուէր: Ասանկ միայնութեան մէջ գտաւ ղինքն Ալոնզոյ կէս գիշերուան մօտ, որ գլեկին հեռաւոր մէկ դաշտին ծայրը ժայռերու քով նստած՝ իր ողբական երգերը կը հնչեցընէր:

Ի՛նչ, այսչափ ուշ ատեն դեռ դուն հոն ես, Փետրոյ, ըսաւ: Աս մերկ ու անզգայ ժայռերուն՝ քու սրտիդ ցաւերը հաղորդելով՝ ի՛նչ մխիթարութիւն կը գտնես: Թող աս սգալից տեղերը, հետս եկուր:



Ես քեզի յայտնելու բաներ ունիմ, որոնցմէ զուարթ կենաց մը յոյս կրնաս ունենալ: Եկուր մեկտեղ երթանք: Կոմսը կ'երթայ, Փետրոն ալ գլուխը ծռած՝ անոր ետեւէն:

Ե. Ահապի դաստիարակները:

Այնպէս կոմսն երաժշտին հետ՝ իր առանձին աշտարակը տանող երկայն ու անձուկ սրահներէն անցնելէն ու զգուշութեամբ ամէն երկաթէ դռները դուրսը կ'անցնէ՝ նոյն տեղը հասան: Սեղանի վրայի երկու ճրագներն իրենց սակաւալոյս բոցովն ան մթազգած սենեակը հազիւ քիչ մը կը լուսաւորէին: Փետրոյ պաղեցաւ մնաց շիշերուն ու գաւաթներուն մէջ տեղը մերկ սուր մը տեսնելով:

Նստէ, սիրելի՛ Փետրոս, ըսաւ կոմսը, քեզի հետ խօսելու բան ունիմ, եւ աս ժամանակս ինձի ամենէն յարմար եկաւ: Բայց նախ դնա նայէ որ արդեօք դրսի դուռն աղէկ կղզած եմ: Սա դրան նիզն ալ դիր:

Փետրոյ հնազանդեցաւ, տիրոջն ամէն ըսածները կատարեց, ետքէն քովը նստած՝ մեծ անձկութեամբ՝ ըսելիքին կը սպասէր:

Կոմսը գաւաթները լեցուց եւ խմելով սկիֆնք, ըսաւ, որովհետեւ մեր տխուր մտածմունքները յրուելու համար՝ անոր շատ հարկաւորութիւն ունինք: Գաւաթնիս իրարու զարնէնք, սիրելի՛ Փետրոս, քեզի, իմ ներքինն ու ամենահաւատարիմ բարեկամիս . . . : Փետրոյ զարմացմամբ զարկաւ գաւաթը կոմսին գաւաթին հետ. վասն զի տէրն իրեն հետ երբեք այնպէս մտերմութեամբ վարուած չունէր:

Երկուքն ալ խմեցին, եւ կոմսն ետեւէ ետեւ գաւաթները բերանալիւր կը լեցընէր. բայց բան մը չէր յայտնէր: Աս լուծիւնը Փետրոյին մեծ զարհուրանք կը բերէր: Վերջապէս կոմսը սկսաւ խօսիլ. Սիրելի՛ Փետրոս, ըսաւ, ես խիստ դէշ վիճակի մը



մէջ կը գտնուիմ, եւ դուն առջինն ես՝ որուն աս բանս կը յայտնեմ: Արդ գիտցիր որ բոլոր մարդկան առջեւ պատիւս կորսընցընելու վտանգի մէջ եմ. եւ արդէն յայտնի է որ աս խայտառակութենէն ետեւ կարող պիտի չըլլամ ապրիլ: . . . Աս բերդին տանեաց վըայի կղմինտրներէն՝ ալ եւ ոչ մէկն իմն է. իմ այնչափ կալուածներէս՝ եւ ոչ ափ մը տեղ իմ ստացուածս է: Ասիկա գուցէ քեզի զարմանալի բան կ'երեւայ, սիրելի Փետրոս, բայց ճշմարիտ է: Մինչեւ հիմա դուն զիս հարստութեան ու փառաւորութեան մէջ կը տեսնէիր. բայց գիտես արդէն որ ամէն փայլած բան՝ ոսկի չէ: Քանի մը օրէն կնոջմովս ու տղոցմովս աս բերդէն պիտի վռնտուիմ: . . .

Աս խօսքերէն Փետրոյին սիրան ելլելով՝ արցունքը չկրցաւ բռնել: Կու լաս, սիրելի մտերիմս, ըսաւ կոմսը. բայց աս տեղէն վռնտուելու ատեն՝ ամուսնոյս ու զաւկրներուս լացքը մէյ մը մտածէ: Սակայն աս դեռ ամէնը չէ. ինծի աւելի մեծ դժբախտութիւն ու նախատինք մը պահուած է: Բայց չէ, ես աս նախատանաց չեմ կրնար գիմանալ. աւելի կ'ուզեմ մեռնիլ՝ քան թէ պատիւս կորսընցընել: Ահաւասիկ աս եղկելի վիճակիս մէջ, սիրելի, մտերիմ, ցանկալի Փետրոս, քեզի կը դիմեմ, քեզի կ'ապաւինիմ: Ամէն մարդկանց մէջէն մինակ քեզի կը համարձակիմ վըտահելու. դուն կրնաս իմ աղատիչս ըլլալ, եւ պէտք է որ զիս ազատես:

Ե՛ս, պուաց Փետրոյ անհնարին զարմացմամբ. ես: Արդեօք երա՞ղ կը տեսնեմ, Տէր իմ, չէ՞նէ՞ ձեր ցաւազին վիճակէն՝ խելքերնիդ շփոթեցաւ: Ե՛ս, որ ձայնէս ու քնարէս զատ՝ երկրիս վըայ ուրիշ բան չունիմ, ես խեղճ ողորմելիս՝ ի՞նչպէս կրնամ այսպիսի պարագայից մէջ ձեզի օգտակար ըլլալ. . . :

— Դ՛ուն՝ շատ, խիստ շատ բան, մանաւանդ թէ ամենայն ինչ կրնաս, չէ թէ մինակ ինծի, հապանաւեւ



քեզի համար ալ: Չէ թէ մինակ ինձի օգտակար  
կրնաս ըլլալ, հապա՛ նոյն իսկ դուն հարուստ, ե-  
րեւելի, ազնուական կրնաս ըլլալ: Հաւատա ինձի,  
ըսածս կատակ չէ, հապա հաստատուն խօսք է: . . .  
Միտքս աւելի եւս բացատրեմ: Գուն, սիրելի՛ Փե-  
տրոս, ազնուական աղջկան մը հետ կարգուիլ կ'ու-  
զես. բայց որովհետեւ դուն ազնուական չես, աղ-  
ջկան ծնողքն աս բանիս հաւանիլ չեն ուզեր: Բոլոր  
տրամութեանդ ու տխրութեանդ պատճառն աս է:  
Սակայն մի վախնար, ես քեզի հարուստ ըլլալու եւ  
ազնուականութեան թղթեր ձարելու միջոցները կը  
ցուցնեմ, որոնցմով քու վախճանիդ դիւրաւ կրնաս  
հասնիլ: Ուրեմն, սիրելի՛ Փետրոս, հարուստ ու ազ-  
նուական ըլլալն եւ ուզած անձիդ հետ կարգուիլը  
քու ձեռքդ է: Ասոր ի՞նչ կ'ըսես:

— Հրամանոցը այսօրուան բոլոր խօսածներն ին-  
ձի հանելուկ մըն են, միտքս չիհասնիր: Բոլոր ինձի  
տուած յոյսերնիդ ալ՝ ուրիշ բան չեն բայց եթէ  
ոսկեղէն երազներ, որոնք երազներու պէս ալ պիտ'որ  
անցնին եւ ես ինչպէս որ եմ՝ ամէն մարդիկներէ ո-  
ղորմելի պիտ'որ մնամ:

— Մտիկ ըրէ, թէ որ միայն ուզես, դիւրաւ  
կրնաս ողորմելութենէն ելլել: Մտիկ ըրէ, Փետրոյ,  
կրկնեց կոմսը՝ թիկնաթռուն անոր մօտիկցընելով եւ  
ձայնը ցածցընելով, սրտմաշուկիս ու յուսահատու-  
թեանս մի միայն պատճառը՝ գիտե՞ս ո՛վ է. սա . . .  
հիւանդ տղան է, որն որ . . . . պէտք չէ որ . . . .  
առողջանայ: Ահաւասիկ աս է ամէն բան: Հիմա կը  
հասկընաս:

Փետրոն գլուխը ցնցեց: Կոմսը ձայնն աւելի եւս  
ցածցընելով՝ խօսքը շարունակեց. Գուն եթէ իրեն  
անանկ դեղ մը խմցընես՝ որով մէջտեղէն վերնայ,  
Ալվարէս կոմսին բոլոր ինչքն իմս կ'ըլլայ եւ դուն  
աս բերդին տէրը կ'ըլլաս:



Աս խօսքերուն՝ Փետրոն վեր ցատքեց եւ պուռաց. Ի՛նչ, ես. ես ան սիրուն տղուն դահիճն ըլլամ, որն որ երբեք ինձի չարիք մ'ըրած չունի: . . . Չէ, չէ, ամենեւի՛ն:

— Աստուծոյ սիրոյն համար, մի պուռար, մտիկ ըրէ: Խօսքերուս ականջ դիր եւ դուն որոշէ:

— Ըստ կոմսն իր բոլոր իմաստակութիւնն ու ճարտարխօսութիւնը թափելով՝ ոճրագործութեան ահաւորութիւնը գոցելու եւ զՓետրոն համոզելու ջանաց: Սա սեղանի վրայի սուրբ կը տեսնես, Փետրոյ, ըսաւ, ես զանիկա պատերազմի մէջ կրած եւ անով առանց խիղճ մ'ընելու՝ շատերուն արիւնը թափած եմ: Անով տիրոջս իբրեւ կոյր գործիք ծառայած եւ մեծ անուն ու համբաւ ստացած եմ, առանց խիղճս արատաւորելու: Արդ ես ալ քու տէրդ եմ. դուն ալ իմ կոյր գործիս եղիւր, կատարէ տիրոջդ հրամանը, բարի է եղեր, չար է եղեր՝ դուն անոր մի նայիր: Անիկա իմ դիտնալու բանս է, ես վրաս կ'առնում: Գուն նոյն գործքը քեզմէ չես գործեր, միայն կը հնազանդիս. իսկ հնազանդութիւնն՝ առաքինութիւն է:

— Տէր իմ, սրերնիդ ինձի տուէք, ես քնարիս հետ սիրով կը փոխեմ: Պատուաւոր պատերազմի մէջ՝ կը ցուցնեմ որ վատ մարդ չեմ, քաջութիւն ունիմ: Բայց ան հրամայածնիդ չեմ կրնար կատարել: Մարդասպանութիւնն ամենէն զարհուրելի բանն է:

— Գարձեալ կ'ըսեմ քեզի, սիրելի՛ Փետրոս, քեզի ըսածս՝ կարծածիդ չափ չար բան չէ: Ան տղան՝ իր ծնողացը պէս՝ ի բնէ տկար է, եւ արդէն արագահաս մահուան սերմունքը ծոցը կը կրէ: Ուստի թէեւ հիմակուան հիւանդութենէն առողջանայ ալ, որ ամենեւի՛ն հաւանական չէ, ո՞րչափ պիտ'որ ապրի. առ առաւելն տարի մը:



Փետրոն վախնալով մը պատասխանեց. Ստոյգ է Փերդինանդոսին կազմածքը փափուկ է, այսու ամենայնիւ ինծի չ'երեւար որ հրամանոցը կարծածին չափ տկար ըլլայ:

Բաւածիս վրայ բոլորովին ապահով եմ, կրկնեց կոմսը: Բայց կ'ուզէ նէ՝ հարիւր տարի ապրի. թէ որ ես առ խեղճ վիճակին մէջ չգտնուէի, ստուգիւ հոգս չէր ըլլար: Սակայն հիմա հարկաւորութիւնը ստիպողական է, առիթն ալ յարմար: Ասկից զատ՝ ամենեւին մէկու մը միտքը կասկած մը չ'իյնար, որովհետեւ ամէնքը գիտեն որ տկար ու հիւանդոտ է: Ասոր հակառակ՝ թէ որ անիկա ութ օր ալ ապրի, ես կորսուեցայ: Համբաւս, ընտանեացս ինչքը, ամէն բան դնաց: Ա՛րն ընտրելի է, հիւանդոտ տղու մը մեռնի՛լը, չէ նէ՝ իմ պատիւս բոլորովին կորսնցընելով՝ կնոջմովս ու տղոցմովս անհնարին ողորմելութեան մէջ իյնալս: Աս ալ կայ որ տղուն կեանքը կարճեցընելն՝ իր վշտերը դադրեցընել է. ուստի եւ աւելի բարիք գործել է, քան թէ յանցանք: Ասիկա կարծեմ դուն ալ աղէկ կը տեսնես:

Աս միայն աղէկ կը տեսնեմ, պատասխանեց Փետրոյ, որ վերնազարդ խօսքերով՝ ահաւոր ոճրագործութեան ալ բարի երեւոյթ մը կրնայ տրուիլ: Բայց ես սրտիս մէջ ուրիշ ձայն մը կը լսեմ, որ երբեք չիխաբեր: Տէր իմ, Աստուած ինծի վկայ է, ձեր դժբախտութիւնը սիրտս կտոր կտոր կ'ընէ: Եւ թէ որ զձեզ նոյն դժբախտութենէն ազատելու համար՝ արիւնս, կեանքս տալ հարկաւոր ըլլար, պատրաստ եմ. բայց այնպիսի չարագործութեամբ խիղճս արատաւորել եւ փրկութիւնս վտանգի մէջ դնել չեմ կրնար:

Մա՛ւ ուրեմն, պոռաց կոմսը՝ մէկէն տեղէն ցատքելով եւ սեղանի վրայի սուրը կատուութեամբ յափրշտակելով, որովհետեւ չեմ կրնար զքեզ համոզել



որ ուզած ծառայութիւնս ընես, կ'ուզեմ աս բաներուս վերջ մը տալ: Պէտք է որ կամ Փերգինանդոս կորսուի, կամ ես մեռնիմ: Եւ որովհետեւ դուն կ'ուզես որ Փերգինանդոս ապրի, ուրեմն թող տուր որ ես մեռնիմ: Աս ըսաւ ու սուրին կոթը գետինը հաստատեց, ճոթն ալ կուրծքին շիտկեց:

Աստուած սիրէք նէ՛ կեցէք, պոռայ Փետրոյ դու զալով, աւելի աղէկ է որ աղան մեռնի, քան թէ դուք: Եւ իր վրայ բռնութիւն մ'ընելով ու մեծ դժուարութիւն կրելով՝ վրան աւելցուց. Ասմբերնիդ կը կատարեմ:

— Ուրեմն երդում ըրէ որ հրամաններս կէտ առ կէտ կը կատարես: Փետրոյ երդումն ըրաւ. բայց երեսին գոյնը մեռելի գոյն դարձած էր, ճակատէն պաղ պաղ քրտինք կը վազէր: Աեանքին մէջ ասոր նման սարսափ զգացած չունէր:

Երբ որ մէկ ձեռքը սրոյն վրայ, մեկան ալ դէպ ի երկինք վերցուցած՝ կոմսին տուն տուած երդումն ըրաւ լմնցուց, Լաւ է, ըսաւ կոմսը. բայց թէ որ միտքդ փոխելու ըլլաս եւ երդմնազանց գանուիս, դողա, վասն զի ես վրէժխնդիր կ'ըլլամ: Եւ սուրն տուած՝ Փետրոյին գլխուն վրայ ձօճացուց:

Աս զարհուրելի գործողութիւնը կատարուելէն ետեւ՝ Ալնոյ սեղանին քով նստելով ու ձեռքը Փետրոյին երկընցընելով՝ Քաջալերուէ, սիրելիս, ըսաւ, մի վախնար, ամէն բան յաջող կ'երթայ: Ազաղը առտու ես Մատրիտ կ'երթամ, ընտանիքս ալ ինձի հետ կը տանիմ: Աինս անշուշտ ընդգիմուցութիւն պիտ'որ ընէ իր սիրականէն բաժնուելու, բայց արդէն ան աղէտ բժշկին միջոցովն ամէն բան կարգի դրուած է: Որովհետեւ կոմսուհին աղէկ գիտէ որ ծագիկն աս կողմերս սաստիկ ջարդ կ'ընէ, կը յուսամ որ շուտով կը համոզուի իր զաւկըներովն հեռանալու: Իսկ թէ որ ինք առանձին Փերգինանդո-



սին քովը կենալ ուզէ, ես զինքը կը հնազանդեցը-  
նեմ: Բանը դիւրաւ լմնցընելու համար՝ իրեն կ'ը-  
սեմ որ հիւանդը քեզի յանձնած եմ, քեզի ալ իր  
առջին կը հրամայեմ որ Սալամանդայէն քաջ բժիշկ  
մը բերել տաս, որն որ իրօք չես կատարեր:

Ասկից զատ՝ ուրիշ բան մ'ալ ունիմ ըսելու:  
Աս գիշեր ժամը մէկին կամ երկուքին հեծեալ մը  
պիտի գայ եւ արքունական կնքով կնքուած նամակ  
մը պիտի բերէ: Նայէ որ մինչուկ ան ատեն արթուն  
կենաս: Առտուանց կանուխ եկուր զիս արթընցուր,  
բերդին մէջի մարդիկներուն ալ ըսէ որ արքունիքէն  
նամակ մ'ընդունեցայ, որով կը հարկադրիմ որչափ  
կարելի է նէ շուտով Մատրիտ երթալու. ասով մեր  
ճամբայ ելլելն աւելի եւս շուտով կ'ըլլայ: Գուն հոս  
մինակ մէկ պառաւ աղախնով ու անմիտ սափրիչով  
կը մնաս, որոնք քեզի ամենեւին արգելք չեն կրնար  
ըլլալ: Երեք օրէն սեւ կնքով կնքուած՝ սրտաշարժ  
ու գորովալից նամակ մը կը խաւրես ինձի, որով  
Փերդինանդին մահը կը ծանուցանես: Բայց նայէ որ  
նամակն անանկ գրես, որ ամէն մարդ կարող ըլլայ  
կարդալ: Թէ որ ինձի առանձին ըսելու բան կ'ու-  
նենաս՝ զատ թղթի մը վրայ գրէ: Այսպէսով ոչ ոք  
կրնայ եղածին վրայ տարակուսի երթալ: Ասով ես  
Սպանիայի Աւագ ազնուական կ'ըլլամ, դուն ալ աս  
բերդին տէրը, որով եւ սրտիդ բաղձանքը կը կատա-  
րուի: Հիմակու հիմայ՝ երթաս բարով, գիշեր բարի:

#### Զ. Բախանում:

Արեւը չճագած՝ Փետրոյ եկաւ կոմսին դուռը  
զարկաւ եւ թագաւորական հրամանագիրն անոր տուաւ:  
Կոմսուհին արթըննալով՝ Ալոնզոյ իրեն ըսաւ. Պէտք  
է որ անմիջապէս Մատրիտ երթանք. գնա շուտ մը  
ճամբորդութեան պատրաստութիւնները տես:

Արդեօք ստոյգ է, պատասխանեց կոմսուհին, որ



Փերդինանդոսին հիւանդութիւնը ծաղիկ ըլլայ, կարելի չէ՞ որ ես տղոցմովս հոս մնամ:

Ի՛նչ, պոռաց բարկութեամբ կոմսը, կ'ուզես զաւկըներդ օտար տղու մը սիրո՞յն զոհել: Կ'ուզես զանոնք կոյր, կաղ ու ծաղկէն երեսնին ապականեալ տեսնել:

— Ի՛նչ, դուն տղոցմով գնա, ես հոս կը մնամ. Փերդինանդոսն այնպիսի վիճակի մէջ չեմ թողուր:

Ա՛լ զիս քու խնդիրներովդ շատ մ'աշխատցըներ, ըսաւ կոմսը. ժամ մը վերջը պէտք է որ կառք հեծնենք: Փետրոն հիւանդին քովը կը մնայ, եւ արդէն իրեն հրաման տուած եմ որ Սալամանգայէն քաջ բժիշկ մը բերել տայ: Ուստի հանդարտ եղիք եւ գնա պատրաստութիւններդ տես:

Կոմսուհին՝ որ արդէն փորձով աղէկ գիտէր թէ էրկանը դէմ գնելը՝ բանն աւելի գէշցընել է, առանց պատասխան տալու՝ անոր հրամաններուն գլուխ ծռեց:

Ա՛յրբ որ տղաք հագուեցան լմնեցան, կոմսուհին անոնց հետ հիւանդին խուցը մտաւ: Փերդինանդոս զանոնք ճամբորդութեան զգեստով տեսածին պէս՝ ցաւով կանչեց. Ա՛հ, սիրելի մայր, ուրեմն զիս պիտի թողուք. նոյնպէս դուք ալ, եղբարներս, զիս հիւանդութեանս ատենը մինակ կը թողուք: Ա՛հ, կեցեք, կ'աղաչեմ, թէ որ չէք ուզեր որ ես մեռնիմ:

Ա՛հ, սիրելի Փերդինանդոսս, չեմ կրնար, ըսաւ լալով կոմսուհին, ստիպուած եմ երթալու:

Աս խօսքիս վրայ հիւանդ տղան յորդ արցունք թափելու սկսաւ, նոյնպէս մէկալ տղաք ալ կուլային: Բայց Պիանդա տիկինը հիւանդը զրկելով՝ Միլար, տղաս, ըսաւ, Աստուած քեզի հետ է. ինք զքեզ կ'առողջացընէ: Մենք ալ քեզի համար ազօթք կ'ընենք որ շուտով առողջանաս:

Ան միջոցին տղաք՝ առանց հիւանդին անկողնին մօտիկնալու՝ աշուրներնէն արցունք թափելով՝ իրեն մնաս բարոյնին ըսին:



Ո՛հ, կանչեց սրտցաւութեամբ Փերդինանդոս, ուրեմն հիւանդութիւնս այնչափ վտանգաւոր է, որ ինծի չէք մօտիկնար: Թէ որ այնպէս է նէ, մի մերձեւնաք, չեմ ուզեր որ զգացած ցաւերս դուք ալ կրէք:

Կոմսուհին Փերդինանդին՝ իր եղբարցն ու քերց վրայ ունեցած սէրէն անանկ այլայլեցաւ, որ հազիւ կրցաւ ինք զինքը բռնել եւ ըսել. Մի վախնար, սրգեակս, շատ չ'անցնիր, իրար կը տեսնենք:

Չէ, ըսաւ ուղարմուկ ձայնով Փերդինանդոս, ալ աս աշխարհքիս մէջ մեկզմեկ տեսնելէք չունինք:

Տիկինը կ'ուզէր հեղ մ'ալ հիւանդին մօտիկնալ. բայց մեկէն կոմսը դուռը բանալով՝ շանթարձակ ձայնով մը պոռաց. Ա՛ս է քու շուտ ընելդ. կառքը կէս ժամ է որ պատրաստ կեցեր է: Աս ըսաւ եւ առանց ներս մտնելու՝ աճապարեց զնաց: Թէպէտ հազար անգամ պատերազմի դաշտին վրայ առանց վախի մահուան վտանգի մէջ գտնուած էր, բայց հիմա տկար տղու մը երեսը նայելու չէր համարձակեր, որովհետեւ խիղճն անհանդարտ էր. խղճմտանքը զինքը կը յանդիմանէր որ նոյն անմեղ տղուն դահիճք կ'ըլլայ: Իսկ կոմսուհին բռնութեամբ Փերդինանդին անկողնէն բաժնուելով՝ տղոցմովը կառք հեծաւ: Վազեց թռաւ կառքը. հիւանդ տղան անիւներուն շառաչիւնը լսելով՝ խոր արտմութեան մէջ թաղուեցաւ:

Է. Թոյն:

Ամէնքն երթալէն ետեւ՝ Փետրոյ մինակ մնալով՝ ահու գողի մէջ ինկաւ: Չորս կողմը աիրած լռութենէն՝ մարմինը փուշ փուշ կ'ըլլար, եւ ան սեւազգած կամարներուն տակ իր քայլերուն արձագանգը լսելով՝ ոտուրները յառաջ չէին երթար: Վերջապէս դողդրղալով Փերդինանդին խուցը մտաւ:

Այն, սիրելի Փետրոս, ըսաւ հիւանդ տղան՝ որուն աչուրները դեռ թաց էին, սրչափ պէտք եմ



քեզի շնորհակալ ըլլալ՝ որ քովս մնացիր, առանց քեզի՝ ես բոլորովին առանձին կ'ըլլայի: . . . Բայց ի՞նչ ունիս, շատ այլայլած կ'երեւաս: Ի՞մ ընտանեացս երթա՞ն զքեզ արամեցուց, չէ՞ նե՛՛ հիւանդութիւնս է որ քեզի այնչափ ցաւ կը պատճառէ: . . . Ո՛հ, աշուրներէդ կը դուշակեմ թէ՛ պիտի մեռնիմ:

Փետրոյ առանց պատասխան տալու՝ լուռ կը կենար. որովհետեւ անմեղ տղուն խօսքերը՝ սիրտը կտոր կտոր կ'ընէին: Քիչ մը ատեն ասանկ անշարժ ու լուռ կենալէն ետեւ՝ սիրուն տղուն քաղցր հայեցուածքը չկրնալով տանիլ, մէկէն դուրս ելաւ ինք իրեն ըսելով՝ Չէ, ես չեմ կրնար աս տղան մեռցընել: . . . Բայց նախ թոյն ճարելու նայիմ. ետքը կրնամ ինք զինքս որոշել: Աս վախճանաւ շուտ մ'ելաւ Ամպրոզիոյ սափրչին գնաց, որ նոյն զեղին թէ՛ բժիշկն ու թէ՛ զեղավաճառն էր:

— Բարի լոյս, Ամպրոզիոյ բժիշկս:

— Աստուծո՛յ բարին, Պր. Փետրոյ, բարով եկաք: Այդչափ կանուխ: Մեր պզտիկ հիւանդն ի՞նչ պէս է: . . . Բայց նոյն իսկ դուք ի՞նչ ունիք. զոյներնիդ շատ նետած է: Կ'երեւայ որ օգնութեանս կարօտութիւն ունիք: Շնորհք ըրէք՝ երակնիդ տրէք որ նայիմ: . . . Հը՛ . . . Շատ զօրաւոր կը զարնէ: Ստուգիւ կ'ըսեմ, սաստիկ տաքութիւն ունիք:

— Չէ, բան մը չունիմ. մինակ աս գիշեր դէշ անցուցի. բերդին մէջ շատ մուկ կայ: Չէք կրնար ինծի զեղ մը տալ, սա անիծեալներուն ճետը չորցընելու:

— Հը՛մ. ես յառաջագոյն անոնց համար ընտիր զեղերու խառնուրդ մ'ունէի. բայց հիմա չունիմ:

— Պոնէ ձեր խանութին մէջ թոյն մը պիտ'որ ունենար:

Չէ, չունիմ, ըսաւ բարկանալով մը սափրիչը: Սալամանդայի բժիշկներէն մէկն օր մը զեղարանիս այցելութեան ելլելով՝ ամէն տեսակ թունաւոր դե-



դերը թալեց վերցուց, եւ մինակ մեղմ ու զովացուցիչ դեղեր թողուց, որոնցմով բան մը չեմ կրնար ընել:

Չէք կրնար ինծի տեղէ մը քիչ մը բան ճարել, կրկնեց քաշուելով մը Փետրոյ. խիստ հարկաւորութիւն ունիմ:

Ի՞նչ բանի համար, հարցուց Ամպրոզիոյ շփոթած դէմքով. ինք զինքնիդ մեռցրնել կ'ուզէք. ներս մտած ատեննիդ խիստ խռոված էիք:

Միտելի Ամպրոզիոյ բժիշկս, պատասխանեց խորամանկութեամբ Փետրոյ, յայտնի կը տեսնեմ որ ձեզի ամենայն ինչ յայտնելու եմ: Ահաւասիկ բանին էութիւնը: Մէկու մը հետ բաստ բռնած եմ: Աերջին օրերն ընկերութեան մը մէջ ազնուական եւ ըրտասարգի մը հանդիպեցայ, որն որ կը պնդէր թէ ինծի պէս ազնուական չեղող մարդու մը՝ մէկը թոյն չիծախեր: Ասկէ ես շատ առնուեցայ, եւ անմիջապէս վեց ոսկիի բաստ բռնելով՝ խոստացայ որ հինգ կամ վեց օրուան մէջ քիչ մը թոյն ձեռք կը բերեմ: Եւ որպէս զի ապահով ըլլաք որ զձեզ չեմ խաբեր, բաստին ստրկին կէսը ձեզի կու տամ. ահաւասիկ առէք երեք ոսկին. միայն թէ որչափ կարելի է շուտով ինծի թոյն դտէք: Չորս օր արդէն անցաւ:

Թէպէտ Ամպրոզիոյ այլանդակ ու պարծենկոտ մարդ մըն էր, բայց եթէ իմանալու ըլլար որ Փետրոն թոյնն ի՞նչ բանի պիտի գործածէ, աշխարհքիս բոլոր ոսկիներն ալ իրեն տար, ստուգիւ ուզածը չէր կատարեր: Սակայն հիմակ անոր ըսածէն խաբուելով, գուցէ ալ երեք ոսկւոյն տեսքը զինքը շացրնելով՝ խոստացաւ որ կը գտնէ: Արովհետեւ, ըսաւ, բաստի մը համար է, ետեւէ կ'ըլլամ որ քիչ մը բան գտնեմ: Ասկից քանի մը մղոն հեռու՝ լեռներուն մէջ ծեր ճգնաւոր մը կը բնակի, որն որ կը կարծուի թէ Արեւելքէն եկած մոգ մ'ըլլայ. վասն զի ամբողջ օրե-



ըր բարձր լեռներու վրայ տունկ ու քար ժողվելու կ'աշխատի. ետքէն շատ գիշերներ հնոցի մը քով նստելով՝ զանոնք զանազան գործիքներով կը վշդէ, կ'եփէ, կը զտէ ու կը պարզէ: Իր խրճթին մէջ երկնագուռնա մ'ալ կը տեսնուի, եւ շատ անգամ գիշերներն աստղալից երկինքը զննելով կ'անցընէ: Հիմա կ'ըլեմ անոր կ'երթամ: Ինք տնկերն ու բոյսերն ազէկ ճանչնալով՝ տարակոյս չունիմ որ անոնցմէ անանկ ըմպելիք մը կարող ըլլայ շինել, որով մարդը կարենայ մինչեւ վերջին դատաստանին օրը քնացընել:

Վացէք ձեր ճգնաւորին, սիրելի Ամպրողից բժիշկս, ըսաւ Փետրոյ. եւ նայեցէք որ շուտով դառնաք, բայց ձեռնունայն ալ չըլլաք: Ես նոյն միջոցին մեր հիւանդը նայելու եմ: Երէկ տուած դեղերնիդ ութ օրուան բաւական է. եւ ես կը հօգամ որ ձեր հրամանին համեմատ՝ ժամը մէյ մը նոյն դեղէն առնէ: Ուստի հիմակու հիմա մնաք բարով:

— Արթւաք բարով, կէսօրէն վերջը կը տեսնուինք: Փետրոյ երթալուն պէս՝ Ամպրողին կեղծամբ, երեքանկիւն գլխարկն ու ցուպն առաւ ճամբայ ելաւ: Իսկ Փետրոյ իր բազմատանջ խորհուրդներուն մէջ թաղուած՝ գլեակը դարձաւ, խիստ ուրախանալով որ զԱմպրողին կրցաւ խաբել: Աամաց կամաց ինք զինքն ալ կը խաբէր: Աս տղուն մահը, կ'ըսէր ինք իրեն, սառագիւ մեծ չարիք մըն է. բայց կոմսին, անոր ընտանեաց եւ իմ կորուստս աւելի մեծ է: Ասկից զատ՝ ես նոյն գործքն ընելու երդմամբ ալ պարտաւորուած եմ, եւ Աստուած երդմնազանցութիւնը կը պատժէ: Թէպէտ սորված էր որ գէշ բանի համար եղած երդումը զմարդ չիպարտաւորեր եւ թէ չարիքէ մը ազատելու համար՝ ուրիշ չարիք չիկրնար գործուիլ, բայց ասոնց միտ չէր դներ: Թէ որ ազէկ մը իր սիրտը քննելու ըլլար, կը տեսնէր որ զինքն ան ոճրագործութեան յորդորող մի միայն



պատճառը՝ բերդի մը տէր ու աղնուական ըլլալն եւ  
անով իր բաղձանքին հասնիլն էր:

Ը. Նեղո-Ռեան եւ անյի-Ռեան օր մը:

Փետրոյ հիւանդին խուցը մտաւ չմտաւ, Փերդի-  
նանդոս մտերմութեամբ ղինքն ողջունելէն ետեւ՝  
խեղճուկ դէմքով մ'ըսաւ. Ուր էիր, սիրելի Փետրոյ,  
մէկ ժամէն աւելի է քանի որ զքեզ չտեսայ:

— Բժշկին դայի քեզի համար խօսելու:

— Ենորհակալ եմ, սիրելի Փետրոյ, բայց բժիշկն  
ի՞նչ ըսաւ:

— Եւտով առողջանալուդ մեծ յոյս ունի, միայն  
կ'ապասպրէ որ տուած դեղերը ճշդիւ առնես:

— Ե՛տ աղէկ: Բեր դեղը: Ժամը մէյ մը պի-  
տի չլամեմ մի, արդէն մէկ ու կէս ժամ եղաւ:

Փետրոն առաւ դեղը: Փերդինանդոս առանց  
տհաճութիւն մը ցուցնելու՝ քաջութեամբ դեղը  
խմելէն ետեւ՝ քաղցր խօսքերով ալ շնորհակալ ե-  
ղաւ: Փետրոն հիւանդին անկողնոյն քով նստեցաւ.  
բայց տղուն մտերմութիւնը՝ որ յառաջ մեծ ուրա-  
խութիւն կը պատճառէր իրեն, հիմա տրտմութեան  
պատճառ կ'ըլլար: Անոր անմեղ ու քաղցրահայեաց  
նայուածքը՝ Փետրոյին սիրտը կը վերաւորէր: Ա՛լ չկր-  
նալով դիմանալ՝ մէկէն ոտք կ'ելլէ, դուրս կ'երթայ:  
Ղախէն դողալով՝ կը սկսի բերդին մութ կամարնե-  
րուն տակ չորս կողմը թափառիլ, մէկ սրահէն մէկ-  
ալ սրահ կ'անցնի, վար կ'իջնայ, գաւթին մէջ կը  
պտըտի, պարտեղ կը վազէ, ամէն կողմ կ'երթայ.  
Եւ տեղ մը սիրտը կրճող որդէն հանդիստ չգտնե-  
լով՝ վերջապէս նորէն հիւանդին խուցը կու դայ.  
բայց հոն՝ ամէն տեղէն աւելի անհանդիստ կ'ըլլայ.  
կարծես թէ այլանդակ ուրուական մը ղինքը կը հա-  
լածէր: Գործելու սարսափելի ոճիրը՝ սրտին խաղա-  
ղութիւնը կ'եղծանէր: Ամենեւին չեմ յիշեր, կ'ըսէր



մտքէն, որ ես երբեք ասանկ ահրելի ու վշտագնիչ օր մ'անցուցած ըլլամ. եւ որչափ որ իրիկունը կը մօտիկնար, այնչափ ալ իր անձկութիւնը կը մեծնար: Կրածն ըստ ամենայնի մահապարտի մը անձկութեան կը նմանէր, որուն մահուան բոպէն երթալով կը մօտիկնայ: Ստէպ ստէպ ալ պատուհան կ'երթար եւ աչուքները տնկած՝ ան ճամբուն կը նայէր, ուսկից որ սափրիչը պիտի դար. բայց բան մ'ալ չտեսաւ: Ետքէն եկաւ հիւանդին անկողնոյն քով նստեցաւ:

Ինչո՞ւ կ'ուշացընես, սիրելի Փետրոյ, հարցուց տղան, դեղը տալը. ժամանակը տասը բոպէ անցաւ:

Փետրոն գնաց դեղը բերելու. որովհետեւ թարմ պահելու պատճառանօք՝ դրսի սենեակը դրած էր. բայց բուն միտքն ան էր որ դիւրաւ եւ տղան չտեսած կարող ըլլայ թոյնը խառնել: Գեղը տալու ատեն մտածելով որ նոյն ամանով թոյնն ալ պիտի խմցընէ, սկսաւ բոլոր մարմնովը դողալ:

Տղան դեղը խմեց եւ պարապ ամանը ձեռքը տալով՝ քաղցր ժպիտով մ'ըսաւ. Քու ամէն ինծի ըրածներդ Աստուած վարձատրէ:

Աս խօսքերը Փետրոյին շանթի մը պէս եկան: Թէ որ ամէն ըրածներուս փոխարէնն Աստուծմէ պիտի ընդունիմ նէ, ըսաւ ինք իրեն, ուրեմն խորհած մարդասպանութեանս պատիժն ալ կ'ընդունիմ: Աս մտածելով՝ հաւաչման ձայն մը հանեց:

Ի՞նչ ունիս այսօր, սիրելի Փետրոյ, հարցուց Փերդինանդոս. առտուքնէ վեր գրեզ տարբեր մը կը տեսնեմ: Ձքեղ այսպէս տեսնելով՝ կարծեմ թէ հրէշ մը եւ կամ թէ աւելի աղէկ ըսելու համար՝ մահն անկողնոյս քով կը նշմարեմ: Ա՛լ դուն նոյնը չես: Կը վախնամ որ ինծմէ աւելի հիւանդ չըլլաս:

Կարելի է, պատասխանեց Փետրոն ետին դառնալով ու դռնէն դուրս ելլելով: Եւ երբ որ քիչ մը հեռացաւ, բարձր ձայնիւ պոռաց. Ստուգիւ ճշմարիտ



է եղեր՝ ան շատ անգամ լսած խօսքս թէ Մարգուս մարմնոյն՝ ամենասաստիկ թոյնն ալ այնչափ ազդեցութիւն չ'ըներ, որչափ չար գործք մը՝ հոգւոյն կ'ընէ: Թէ որ չարախորհուրդ մարդը՝ ոճիրը չգործած՝ այսչափ նեղութիւն ու անձկութիւն կը կրէ, գործելէն ետեւ ի՞նչ պիտ'որ ըլլայ:

Փետրոյ ճակտէն վազող պաղ քրտինքը սրբելով եւ օդ առնելու համար պատուհանին մօտիկնալով՝ տեսաւ որ սափրիչը կու գայ, եւ շուտ մը դիմացը վազելով՝ մէկ կողմ մը քաշեց, եւ Բերած թոյներնիդ, ըսաւ ցած ձայնիւ, շուտով տուէք:

— Բան մը չեմ բերեր, պատասխանեց Ամպրողիոյ. ճգնաւորը չուզեց տալ:

Ի՞նչ, բան մը չբերի՞ք, պտուաց Փետրոյ զարհուրելով. կը վախնար որ չըլլայ թէ սափրիչը կասկածի մը գացած ըլլայ: Բայց ինչո՞ւ, ի՞նչ ըսաւ ճգնաւորը:

— Ըսաւ որ նախ պիտի պատրաստէ, անկէ ետեւ վաղը ինք անձամբ պիտի բերէ:

— Աղէկ է, կրկնեց Փետրոյ. չէր գիտեր որ աս բանիս վրայ ուրախանայ, թէ արամի: Շնորհակալ եմ ձեր աշխատութեան համար: Երթա՛ք բարով:

Բայց Ամպրողիոն չգացած հիւանդը մէյ մը տեսնել ուզեց: Երկայն ատեն մտադրութեամբ նայելէն ետեւ՝ ծանրութեամբ երակը զննեց, եւ իր սովորութեան համաձայն՝ գլուխը ցնցելէն եւ ուսերը վեր վերդրնելէն ետեւ՝ բան մը չըսած՝ սկսաւ երթալ: Փետրոն ետեւէն գնաց ու հարցուց թէ ի՞նչպէս է:

Շատ գէշ, պատասխանեց Ամպրողիոյ, մտահաս մահուան ստոյգ նշաններ կան, չեմ կարծեր որ մինչեւ վաղը ապրի:

Փետրոն աս որ լսեց, սրտին վրայէն կարծես թէ ծանրաբեռ քար մը վերցաւ: Թէ որ տղան ինք իրմէ մեռնի նէ, կ'ըսէր իր մտքէն, ո՞վ ինձմէ աւելի երջանիկ կրնայ ըլլալ: Արովհետեւ թէ յանձն



առած սարսափելի դորձքէս կ'ազատիմ եւ թէ խոստացուած հատուցումը կ'ընդունիմ: Տիրոջս կը հաւատացրնեմ որ տղան ես մեռցուցի եւ զինքը բաղձացած հարուստ ժառանգութեան հասցուցի: Աս մտածմունքներով ուրախութեամբ ներս մտաւ եւ հանդարտ կերպով հիւանդին անկողնոյն քով նստեցաւ: Փերդինանդոս քաղցր ժպիտով մ'անոր նայեցաւ ու բսաւ. Փառք Աստուծոյ, հիմա բոլորովին փոխուած կ'երեւաս. ալ ան դժոխերես դէմքը չունիս: Ինք զինքդ հիմակ աւելի աղէկ կը զգաս, այնպէս չէ: Իսկ ես անոր հակառակ՝ շատ տկար ու գէշ եմ:

Փետրոյ աննշանակ պատասխան մը տալէն ետեւ՝ քիչ մ'ալ կեցաւ եւ վերջը պղտիկ կանթեղ մը վառեց ու քովի խուցն երթալով՝ զգեստով անկողնոյն վրայ պառկեցաւ: Նախընթաց գիշերը չքնացած ու ցորեկուան անձկութիւնները զինքը տկարցուցած բլլալով, շատ չանցաւ՝ քուն մտաւ:

#### Թ. Մարդասպանութիւն :

Փետրոյ նոյն գիշերը շատ անհանդիստ անցուց: Երազին մէջ երբեմն կը տեսնէր որ Փերդինանդոս իրմէ թունաւորուելով՝ սաստիկ ցաւոց մէջ հողին կ'աւանդէր, եւ ինք յայտնուելով ու մահուան դատապարտուելով՝ խայտառակութեամբ կախաղան կը տարուէր: Երբեմն ալ անանկ կ'երեւար որ բաղձանքին հասնելով՝ շքեղ շորքձի կառք մը նստած՝ ամենէն մեծ պատիւ կ'ընդունի. երբեմն նաեւ աչքին առջեւ անանկ կու գար որ իր նշանածին հետ եկեղեցի կ'երթայ՝ պսակուելու: Աս վերջին ուրախական երազներով՝ առջիններուն ազդեցութիւնը մոռնալով՝ արեւն ելլելու մօտ զուարթութեամբ կ'արթննայ, անկողնէն կը ցատքէ ու կ'երթայ Փերդինանդոսին կը նայի, որն որ աչուրները գոցած, բերանը կիսաբաց, երեսին գոյնը նետած ու խիստ քրտնած՝ խորունկ կը



քնանար: Շատ աղէկ, կ'ըսէ Փետրոյ մաքէն, աղ-  
քրտինքը՝ ստուգիւ մահուան քրտինք է, աղ խոր-  
դալն ու հեւալը՝ հոգեվարութեան նշան է. տղան  
աս ծանր քնէն ալ չ'արթըննար:

Նախընթաց օրը բերանը բան մը դրած չըլլալով՝  
սաստիկ անօթութիւն կը զգար. ուստի հաց ու գի-  
նի կը բերէ, պատուհանին առջեւը կը նստի եւ ա-  
չուրներն ան հարուստ կալուածներուն վրայ պտըտ-  
ցընելով՝ որոնք քիչ մը ետքը իր սեպհական ստա-  
ցուածը պիտ'որ ըլլային, կը սկսի ախորժակով նա-  
խաճաշ ընել:

Ի այց Փետրոյին՝ մահուան քուն ու քրտինք կար-  
ծածը՝ զՓերդինանդոս զօրացուցած ու կատարեալ  
առողջացուցած էր: Արթընցած ատեն՝ տղան ամե-  
նեւին տաքութիւն չունէր: Ուստի երբ որ Փետրոյ  
վերջին գաւաթը խմելէն ետեւ ոտք կ'ելլէր, որ եր-  
թայ կոմսին՝ իր եղբորորդւոյն մահը գրէ, մէյ մ'ալ  
անդիէն Փերդինանդոս հագուած՝ Բարի լոյս, սիրե-  
լի Փետրոյ, ես առողջացայ, կանչելով՝ առջեւը կ'ելլէ:

Փետրոյ իր ամէն յոյսերը յանկարծ ըսպէի մը մէջ  
փճացած տեսնելով՝ անհնարին կատաղութեամբ ու  
գաղանութեամբ մը, Չէ, չէ, առողջացած չես, կը  
պոռայ, եւ մէկէն սեղանին վրայի դանակը կ'առնէ  
տղուն վրայ կը վազէ:

Նստուած սիրեա նէ, զիս մի մեռցըներ, սիրելի  
Փետրոյ, կը կանչէ խեղճ տղան զարհուրելով, եւ կը  
սկսի խցէ խուց փախչիլ, Փետրոյ ալ ետեւէն, մին-  
չեւ որ մեծ սրահ մը կը հասնին: Փերդինանդոս սրա-  
հին մէկալ դռնէն կ'ուզէ պրծիլ, բայց նոյն դուռը  
կղպուած ըլլալով՝ հոն փակուած կը մնայ: Սրահին  
մէջտեղը խոշոր սեղան մը կար, ողորմելի տղան ա-  
նոր չորս կողմը կը սկսի դառնալ, երբեմն երբեմն ալ  
պաղաատելով կը կանչէր. Փետրոյ, զիս մի մեռցըներ.  
Ես քեզի ի՞նչ ըրի. կ'աղաչեմ, զթա վրաս:



Փետրոյին գլուխը՝ խմած գինիէն ծանրացած եւ սաստիկ ալ շփոթած ըլլալով՝ չէր կրնար Փերդի-նանդին ետեւէն հասնիլ, որուն կարծես թէ վախը թեւ կու տար: Բայց տղան արդէն հիւանդութեամբ տկարացած ըլլալով՝ վերջապէս ալ վրան զօրութիւն չիմնար, գետինը կ'իյնայ: Փետրոյ շուտ մը վրան կը յարձակի, մազերէն կը բռնէ: Խեղճ տղուն ճարը հասնելով՝ ձեռուրները դէպ ի երկինք տարածած՝ Տէր Աստուած, կը կանչէ, դուն ինծի ողորմէ:

Փետրոյ դողալով ու երեսն ետեւ դարձրնելով՝ քանի մը հեղ դանակը դողդոջուն ձեռքով անոր կուրծքը կը խոթէ:

Ո՛հ, կը պօռայ տղան՝ ողորմ՝ ձայնով, ո՛հ, վերաւորեցայ: . . . . Ահաւասիկ արիւնս կը վազէ: Այ՛ն ինծի . . . կը մեռ . . . նիմ կօր . . . :

Փետրոյ աչուրներն անոր դարձրնելով՝ երբ որ աժդոյն երեսը, արիւնթաթախ զգեստները, մարած աչուրները կը տեսնէ, կը սարսափի, կը քստմնի, դանակը մէկդի կը նետէ եւ նուազ ձայնով մը՝ Թուրութիւն ըրէ, կ'ըսէ, սիրելի Փերդինանդոս, խելքս գլուխս չէր: Ա՛լ քեզի վրաս չեմ՝ ըներ, մի պռար. թէ որ վերքերդ մահացու չեն՝ զքեզ կ'ազատեմ:

Կոյն միջոցին դրսէն յանկարծ որոտման պէս ահաւոր ձայն մը կը լսուի: Փետրոյ կը սկսի բոլոր մարմնովը դողալ: Չայնն երթալով կը սագտկանայ. սաստիկ հարուածներով դուռը կը զարնուի եւ զարհուրելի կերպով մէկը կը պօռայ. Շուտով, դուռը բաց, անօրէն, շուտով: Փետրոյ աս որ կը լսէ՝ վախէն անշարժ կը մնայ: Բայց դուռն ուրիշ մէկ երկու ուժ գին հարուած ալ ընդունելով՝ կը բացուի, եւ մէկէն ասպետի զգեստով բարձրահասակ անծանօթ մարդ մը ներս կը յարձակի, եւ սուրը քաշած՝ շատակ Փետրոյին վրայ կը դիմէ: Չարագործը զարհուրած՝ մէկալ դռնէն կ'ուզէ փախչիլ, բայց հոն ալ



ասպետին ծառային կը հանդիպի, որն որ բաց սրով  
կը կենար: Փախչելու հնարք չունենալով՝ անկիւն  
մը կը քաշուի, եւ հոն ծունկ ինկած՝ ասպետէն թու-  
ղութիւն կը խնդրէ:

Թշուառական անօրէն, արժանաւոր պատիժդ  
պէտք է որ ընդունիս, կը պոռայ ասպետն ահաւոր  
ձայնով մը, եւ անմիջապէս ծառային հրամայելով  
որ դայ զՓետրոյ բունէ, ինք զՓերդինանդոս դար-  
մանելու կ'երթայ:

Տէր Աստուած, արդեօք ո՛ւշ հասայ, կը կան-  
չէ՝ տղան գիրկն առնելով, որուն աչուրները գո-  
ցուած, գլուխն ու բազուկները կախուած էին: Բայց  
վերքերը զննելով՝ ուրախութեամբ կը տեսնէ որ այն-  
չափ վտանգաւոր չեն. կ'առնէ զինքը հոն բազմոցի  
մը վրայ կը պառկեցընէ, վերքերը կը պատէ, խելքը  
գլուխը կը բերէ, կ'ապահովցընէ որ ալ վախնալու  
բան մը չունի: Փերդինանդ իրեն շնորհակալ կ'ըլլայ  
եւ քիչ մը վերջը կը սկսի քնանալ:

Ասոնք ըլլալէն ետեւ ասպետին սիրտը հանգ-  
չելով՝ զՓետրոյ մէկ կողմը քաշեց եւ ըսաւ. Արդէն  
ամէն բան գիտեմ: Ալոնդոյ՝ ըրած ահագին պարտ-  
քերը վճարելու համար՝ եղբորորդւոյն ժառանգու-  
թիւնը յափշտակել ուզելով՝ զինքը քու ձեռքովդ  
ուզեց մեռցընել:

Փետրոյ բանին այսպէս յայտնուելուն վրայ զար-  
մանալով՝ չյանդդնեցաւ ուրանալ, ամենայն ինչ խոս-  
տովանեցաւ: Բայց դուք չեկած, ըսաւ լալով, ես  
արդէն ըրածիս վրայ զղջացած եւ զարնելէն դա-  
դրած էի:

Անդ՛ու՛թ մարդ, պատասխանեց ասպետը, ալ ան-  
մեղ տղան ձեռքդ չեմ թողուր. ես զինքը կը պաշտ-  
պանեմ:

Օտուան առաջարկեց որ զՓետրոն կապեն եւ  
դատաստանի ձեռք յանձնեն: Փետրոյ աս լսելով՝



սկսաւ բարձրաձայն լալ, որմէ Փերդինանդոս արթըն-  
նալով եւ բանն իմանալով՝ Չէ, իրեն բան մ'ընէք,  
ըսաւ ասպետին, ինծի հետ միշտ սիրով էր, բան  
մ'ըրած չունէր: Բայց այսօր խելքը վրան չէր, եւ  
ան խենթութեան ատեն զիս վիրաւորեց: Սակայն  
խենթութեան մէջն ալ ինծի դժացաւ ու պաղա-  
տանքիս լսեց: Գուք ալ իր աղաչանքը լսեցէք:  
Գուք չեկած՝ ինք արդէն դանակը մէկդի նետած եւ  
խոստացած էր որ զիս կ'ազատէ: Չեմ ուզեր որ ին-  
ծի համար արեան կաթիլ մը թափէք:

— Ազնիւ ու մեծանձն տղայ, քու աղաչանացդ  
ու վկայութեանդ համար իրեն շնորհք կ'ընեմ: Բայց  
զքեզ պէտք է որ աս մարդասպաններու որջէն հա-  
նեմ: Հիմայ մենք ուրիշ տեղ կ'երթանք, որ դուն  
հանգչիս:

Արբ որ սրահէն ելան, Փետրոյ վախով մը աս-  
պետին մօտիկնալով՝ կ'աղաչեմ, Տէր իմ, ըսաւ, թո-  
ղութիւն ըրէք համարձակութեանս: Ալոնդոյ կոման  
ամէն բոպէ եղբորորդւոյն մահուան լրոյն կը սպասէ.  
Եթէ իմանալու ըլլայ որ մեռած չէ ու ձեր քովը կը  
գտնուի, կրնաք զինքն անօր կատղութենէն աղա-  
տել: Չեր ինչ վիճակի մարդ ըլլայն ինծի ծանօթ  
չէ, սակայն աս գիտեմ որ Ալոնդոյ շատ զօրաւոր ու  
խորամանկ է եւ ամէն բան կրնայ: Ուստի թէ որ կը  
հաճիք, իրեն դրեմ որ եղբորորդին մեռաւ եւ շինծու  
թաղում մ'ընել տամ: Ասով տղան քովերնիդ ա-  
պահով կ'ըլլայ: Ետքը անշուշտ յարմար ժամանակ  
մը կու գայ իրեն իրաւունքները ձեռք բերելու:

Ասպետն աս առաջարկութիւնը խիստ խոհեմ  
տեսաւ, բայց խաբէութեան մասնակից ըլլալ չուզե-  
լով Ես տղան կ'առնեմ կ'երթամ, ըսաւ, քու ընե-  
լէքիդ չեմ խառնուիր:

Ասպետն իր ծառային հետ բոլոր օրը բերդը մնաց:  
Իրիկունը մութը կոխելուն պէս՝ զՓերդինանդոս վեր-



արկուին մէջ փաթթելով՝ առաւ տարաւ. Փետրոյէն զատ՝ ոչ ոք տեսաւ բերդէն ելլելնին: Բայց եւ ոչ ինք գիտէր անոր ո՞վ ըլլալն, ճշակից զալն եւ ո՞ւր երթալը:

Արկրորդ օրը Փետրոյ դեղին չորս կողմը հրատարակեց որ Փերդինանդոս գիշերը ծաղկէն մեռաւ: Եւ որովհետեւ ամէնքը շատախօս սափրչին խօսքերովը հիւանդութիւնը խիստ տարափոխիկ ու ժանտախտի պէս բան մը կը կարծէին, մէկը չուզեց անոր երեսը տեսնել: Եւ եթէ քանի մը յանդուգն հետաքրքիրներ ալ գտնուեցան, անոնք ալ դղելին ամէն դին պատող սաստիկ ծխէն ստիպուեցան փախչիլ: Փետրոյ դաճէ արձան մը գտնելով՝ հին լաթերով փաթթեց, վրան սեւ քօղ մը ձգեց եւ փառաւոր յուզարկաւորութիւն կատարել տուաւ:

Այսպէսով մեծ վտանգէ մը ազատելուն վրայ ուրախանալով, բայց միանգամայն իր անօրէն սպանութենէն յուսացած վարձքէն ալ հրաժարել չուզելով՝ նոյն գիշեր կոմսին նամակ մը գրեց, որուն մէջ կը ծանուցանէր թէ բոլոր իր ջանքն ու Սալամանգայէն բերել տուած բժշկին դեղերն օգուտ մը չընելով՝ եղբորորդին ծաղկէն մեռաւ: Նամակին մէջ առանձին տոմսակ մ'ալ դրած էր, որուն մէջ կը գրէր թէ թոյն չկրնալով ձեռք բերել՝ ակամայ դաշոյն գործածելու ստիպուած էր:

### Ժ. Աղափիւր:

Յանկարծ բերդն եկող եւ զՓերդինանդ մահուրնէ ազատող անձանօթ ասպետը՝ արտաքոյ կարգի մարդ մըն էր: Իր երիտասարդութիւնը տէրութեան մեծամեծ պաշտօններու մէջ անցուցած, եւ պատերազմներու մէջ քաջագործութիւններ ընելով՝ մեծ անուն ու փառք վաստակած էր, այնպէս որ թագաւորն իրեն դքսութեան պատիւ կ'ուզէր տալ:



Բայց իր ձիրքերուն, համբաւոյն եւ մանաւանդ համարձակախօսութեան համար՝ անթիւ անհամար թշնամիներ ունէր, որոնց գլխաւորն էր Ալոնդոյ կոմսը: Ասոնք զանազան զբաւարտութիւններով ու դաւաճանութիւններով բանն այնչափի հասցուցին՝ որ կեանքը վտանգի մէջ իյնալով՝ ստիպուեցաւ ծառայով մը լեռները փախչիլ: Երկայն ատեն չորս կողմը թափառելէն ետեւ՝ գեղեցիկ դաշտ մը հասաւ, որուն մէջտեղը ամայի մնացած սիրուն պզտիկ մատուռ մը կար:

Վժբախտ ասպետը նոյն նուիրական տեղը մտաւ, ուր որ տիրած խոր լուծենէն շարժելով՝ ծունկ ինկաւ եւ ինք զինքն Աստուծոյ յանձնեց, աղաչելով որ զինքն իր հօր բազկին պաշտպանութեան տակ առնէ եւ ամէն վտանգներէն պահէ: Երբ որ աղօթքը լմնցրնելէն ետեւ դուրս ելաւ, քանի մը քայլ հեռու պզտիկ միայնարան մը տեսնելով՝ զնաց քանի մը հեղ դուռը զարկաւ: Նոյն բոպէն անդիէն ծեր հովիւ մը դալով՝ Պարապ տեղ դուռը կը զարնէք, ըսաւ ասպետին. աս միայնարանը մարդ չկայ. մէջը բնակող ճգնաւորը շատոնց մեռած է եւ դեռ մէկը չեկաւ՝ որ անոր տեղը լեցրնէ: Ասպետն աս որ լսեց՝ շուտ մը միտքը դրաւ որ հոն ապաւինի: Քիչ մը ատեն ետքը՝ ծառային հետ մէկտեղ ճգնաւորի պետտ հագած՝ եկաւ տեղւոյն մեծերէն հրաման խնդրեց որ հոն բնակին: Աս հրամանն առանց դժուարութեան տրուեցաւ, մինակ ան թէութեամբ որ քովի մատուռը իրենք հոգան:

Թէպէտ ասպետին ընչից մեծ մասը յարքունիս առնուած էր, այսու ամենայնիւ դեռ բաւական հարստութիւն ունէր: Ուստի մատուռն աղէկ մը նորոգել տալէն ետեւ՝ քովի միայնարանն ալ պզտիկ աղուոր վանք մը ձեւացուց, որուն մէջ իր եւ ծառային համար պառկելու խցեր, սեղանատուն եւ ընթեր-



ցարան ըլլալէն զատ՝ քանի մը հատ ալ հիւրերու սենեակներ կը գտնուէր: Ասնքին ետեւը վայրենի շագանակենիներու անտառակ մը կար, առջեւն ալ ամայի երկիր մը, զորն որ ճգնաւորն ու ծառան պտղատու ծառերով զարդարեցին եւ ընդեղինաց պարտէզ ըրին: Չորս դին գեղեցիկ դալարագեղ բլուրներ կային. իսկ բլուրներուն ետեւը դադաթնին մինչեւ երկինք բարձրացուցած մերկ ու սեպ լեռներ:

Ասպետը նոյն տեղը Բեռնարդ անուամբ՝ ժամանակն աղօթքով, ուսմամբ ու երկրագործութեամբ կ'անցընէր: Շատ անգամ լեռներուն վրայ բժշկական տնկեր ու հանքեր կը ժողվէր, քիմիական փորձեր կ'ընէր եւ աստղներուն ընթացքը կը զննէր: Ծառան՝ ինչպէս որ պատերազմներու մէջ իր հաւատարիմ ընկերն էր, նոյնպէս միայնութեան մէջ ալ չուզեց քովէն բաժնուիլ: Իրենց օրրատօրական պիտոյքը պարտիզին մատակարարած պտուղներովը, այծերուն տըւած կաթովը եւ ծառային բռնած ձկերովն ու որսի անասուններովը կը հոգային: Թէպէտ ասպետական զգեստնին, ինչպէս ըսինք, հանած ու ճգնաւորի զգեստ հագած էին, բայց առջի զգեստներն ալ քովերնին կը պահէին: Չորս կողմի գեղացիները զասպետը շատ կը սիրէին ու կը յարգէին, եւ ամէնքը մտքերնին անանկ դրած էին որ բարձր աստիճանի մարդ մըն է, որ նոյն միայնութեան մէջ կ'ուզէ անձանօթ մնալ:

Ամպրոպիցին թոյն խնդրելու համար գացած ճրգնաւորը՝ նոյն ասպետն էր: Խելացի եւ կենցաղագէտ մարդը կասկածի երթալով որ չըլլայ թէ թոյնը չար վախճանի մը համար ուզուի, սկսաւ անոր բերանը փնտռել: Քիչ մը գինի խմցընելէն ետեւ՝ թոյն ուզելուն պատճառը հարցուց: Պարզամիտ սափրիչը՝ գինիէն զուարթանալով եւ իր բնական շատխօսութենէն մղուելով՝ ամէն բան տեղն ի տեղը պատմեց.



Փերդինանդին հիւանդութիւնը, Ալոնզոյ կոմսին ու իր ընտանեացն արտորնօք բերդէն ելլելը, Փերդինանդին քով՝ մինակ Փետրոյին մնալն եւ ասոր քիչ մը թոյն գտնելու վրայ բաստ բռնելը: Ասպետն այս ամենայն լսելով՝ յայտնապէս իմացաւ որ Փետրոյին թոյն ուղելը՝ զՓերդինանդ մեռցընելու համար է: Ուստի սափրիչն ետ խաւրեց խոստանալով որ երկրորդ օրը ինք անձամբ թոյնը կը բերէ: Եւ քիչ մը ետքը ասպետական զգեստը հագած՝ ծառային հետ ձամբայ ելաւ, խեղճ տղան Ալոնզոյին ձեռքէն ազատելու համար, որն որ իրօք ալ գլուխ հանեց, ինչպէս որ վերը պատմեցինք:

Փերդինանդին վէրքերը շատ չանցաւ աղէկցան եւ ինք իր առջի զուարթութիւնն ստացաւ: Միակ ցաւն ան էր որ ընտանիքէն հեռու է. բայց իմաստուն ասպետը տղուն նոյն նիւթերուն վրայ ըրած հարցումները միշտ ուրիշ բանի կը դարձընէր: Իր դիտաւորութիւնն ան ըլլալով որ անոր սվ ըլլալն առայժմ ծածուկ պահէ եւ աղէկ կըթութիւն տայ, կ'ուզէր որ իր առջի տարիներուն յիշատակը մտքէն հանէ: Այսպէսով տղան կամաց կամաց իր պզտիկութեան ատեն կեցած տեղերը կը մոռնար եւ ընտանիքը միայն խառնաշփոթ կը յիշէր:

Մինչեւ Փերդինանդին տասնուչորս տարեկան ըլլալու ատենը՝ իր պաշտպանին կենաց կերպին մեջ ամենեւին փոփոխութիւն մը չպատահեցաւ: Բոլոր ջանքն ու ճիգն ան էր որ իր պաշտպանելոյն աղէկ կըթութիւն տայ եւ անոր աստիճանին համաձայն եղած ամէն ուսումը սօրվեցընէ: Նոյն ժամանակը ցաւալի գէպք մը դիպեցաւ, այս ինքն իր հաւատարիմ ծառան ծանր հիւանդանալով՝ որչափ որ ալ աշխատեցան զինքը մահուան ձեռքէն յափշտակելու՝ պարապ եղաւ. ձերունին կրօնի բոլոր մսիթարութիւններն ընդունելէն ետեւ՝ խաղաղութեամբ մեռաւ,



իր տէրն ու Փերդինանդը սգոյ մէջ ձգելով, որոնք զինքը բարեկամի պէս կը սիրէին :

Փերդինանդոսին կըթուժիւնը պահանջելով որ գոնէ քանի մը տարի մեծ քաղքի մը համալսարանին մէջ ուսումը յառաջ տանի, ասպետն իր ծառային մեռնելէն ետեւ՝ որոշեց որ անոր հետ մէկտեղ Սալամանդա երթայ : Ուստի ամէն բան կարգի դնելէն ետեւ՝ ինք ճգնաւորի զգեստը փոխեց եւ պատանւոյն ալ նոյն ժամանակուան ազնուականաց զգեստը հագցրնելով՝ իր սիրելի առանձնութենէն ելաւ, բոլոր գեղացւոց օրհնութիւնը հետը տանելով :

#### ԺԱ. Աստրիայի դեպքեր :

Ասպետը Սալամանդա հասնելուն պէս՝ քաղքին երեւելի թաղերէն մէկը՝ հարուստ վաճառականի մը տան մէջ աղուոր բնակարան մը բռնեց : Հոն Փերդինանդին հետ բնակելով՝ զինքը համալսարան կը խրկէր, ուր որ խելացի ու փոյթեռանդն պատանին մեծ յառաջագիմութիւն կ'ընէր : Բայց հազիւ թէ երեք տարի եղած էր, մէյ մ'ալ ասպետին վրայ կաթուած իջնալով՝ լեզուն բռնուեցաւ : Քովը գրտնուողներուն նշան կ'ընէր որ խօսիլ կ'ուզէ, բայց չիկրնար : Վաճառականը գրիչ ու թուղթ բերաւ. սակայն ձեռքն ալ բռնուած ըլլալով՝ եւ ոչ գիր մը կրցաւ գրել : Չեւերով միայն կրցաւ վաճառականին հասկըցրնել որ պատանին իր քովն առնէ եւ աղէկ հոգայ : Ազնուասիրտ վաճառականը զՓերդինանդ գրկելով՝ խօսք տուաւ : Քանի մը ըստէն՝ որք պատանւոյն միակ բարեկամը հոգին աւանդեց, եւ իր որդեգիրն անպայման տրամութեան մէջ ընկղմեց :

Փերդինանդ ըրած կորստեան բոլոր մեծութիւնը նոյն ատեն չէր իմանար : Ասպետին դիտաւորութիւնն ան էր, որ թագաւորը Գերմանիայէն դարձածին պէս՝ զՓերդինանդ իրեն ներկայացրնէ, եւ անոր՝ Ալվարէս



կոմսին միակ որդին ըլլալը ցուցնելով՝ հայրենի ժառանգութիւնը ձեռք բերել տայ: Բայց աս խորհուրդներն իր յանկարծական մահուամբը փճացան: Իսկ իր սեպհական ինչքերն աղքատականացն անցնելով՝ Փերդինանդ գրեթէ երեսի վրայ մնաց, առանց գիտնալու իր ո՛վ ըլլալը:

Խեղճ պատանին ալ ուսումն յառաջ չկրնալով տանել՝ ստիպուեցաւ յանձն առնուլ վաճառականին առաջարկութիւնը, որն որ զինքն իր քովն առնուլ կ'ուզէր: Արդէն յառաջուրնէ իր մայրենի լեզուէն զատ՝ գերմաներէն, գաղղիերէն ու իտալերէն ալ գիտէր. քիչ ժամանակուան մէջ անգղիերէն ալ սորվեցաւ, որով եւ սկսաւ տիրոջը բոլոր թղթակցութիւնը հոգալ: Ասով եւ իր աչքբացութեամբն ու հաւատարմութեամբը տիրոջը շատ սիրելի եղաւ:

Շատ անգամ վաճառականը զինքը հետն առած՝ Եւրոպայի երեւելի քաղաքները կը տանէր: Անգամ մը Լոնտոն գնաց, ուր որ նոյն ատեն Ալլաս կոմսը Աւստրիայի գեսպան էր: Գեսպանը վաճառականը կանչել տուաւ, որ քանի մը գոհար գնէ: Փերդինանդ խիստ աղէկ գերմաներէն գիտնալով՝ տէրը զինքը խաւրեց: Կոմսն երիտասարդին մաքուր ու վայելուչ գերմաներէն խօսիլն որ լսեց, շատ զարմանալով՝ Դուք անտարակոյտ Գերմանիա ծնած էք, ըսաւ. շատ կ'ուրախանամ որ հոս օտար տեղ հայրենակից մը կը տեսնեմ:

Թողութիւն կ'ընէք, պատասխանեց Փերդինանդ, ես սպանիացի եմ, եւ գոհարներու արկղիկը բացաւ: Գեսպանն ամուսինը կանչեց որ քարերուն մէջէն ուզածն ընտրէ: Կոմսուհին ալ շատ ուրախացաւ երիտասարդին հետ իր մայրենի լեզուաւը խօսիլ կրնալուն համար: Քանի մը կտոր բան ընտրելէն ետեւ՝ գինն որ հարցուցին, Փերդինանդ ճիշդ վերջին գիները զուցեց, որուն հաւանելով՝ կոմսը խնդրեց որ



շուտ մը ամենուն ցանկը գրէ եւ ստակն ընդունելը հաստատէ: Փերդինանդ գերմաներէն գրեց, եւ այնպէս վայելուչ եւ ուղիղ՝ որ շատ գովեստներ ընդունեցաւ:

Ատքը կոմսուհայն առած գոհարներուն նայելով՝ Տիկին, ըսաւ, թողութիւն ըրէք համարձակութեանս, սխալմունք մ'եղեր է: Քովս երկու հատ իրարու նման քարեր ունէի: Հրամանոցը հիմակ առածը՝ ստոյգ է յառաջուան ընտրածներնուդ եւ իմ գին կտրածիս պէս գեղեցիկ կ'երեւայ, բայց առջինին թանձրութիւնը չունենալով՝ գինն ալ քիչ մը նուազ է: Ուստի թէ որ կ'ուզէք նոյնը պահել, պէտք է որ աւելի տուած ստակնիդ ետ դարձնեմ:

Աման ու կոմսուհին Փերդինանդին արդարասիրութեան վրայ զարմանալով, սկսան հետը սիրով ու ընտանութեամբ խօսիլ եւ իր վիճակը հարցուցին:

Աս, պատասխանեց Փերդինանդ, վաճառականի մը քով աղքատ գրագիր մըն եմ, եւ վաճառականութեան մէջ մտնելուս մինակ պատճառն ան է որ բաւական ինչք չունենալով՝ չկրցայ ուսումս շարունակել:

Մեղք, ըսաւ կոմսը. բայց նայեցէք, շատ կը բաղձայի ձեզի օգնել: Ես աղէկ կրթուած պատանի մը կը փնտռեմ, որն որ չէ թէ մինակ շատ լեզու դիտնայ, հապա նաեւ հաւատարիմ ըլլայ: Ուստի թէ որ յանձն կ'առնուք, զձեզ իմ անձնական գրագիրս կ'ընեմ: Նոյնպէս կրնաք տան հազարապետիս հաշիւներուն ալ վերակացութիւն ընել: Եւ աս երկու պաշտօնին վճարքն ընդունելով՝ կը յուսամ որ գոհ կ'ըլլաք:

Փերդինանդ աս առաջարկութիւնը հաճութեամբ ընդունելով՝ աճապարեց գնաց վաճառականին իմացուց, որուն թէպէտ շատ դժուարն եկաւ իրմէ բաժնուիլը, բայց չուզելով միանգամայն անոր յառաջա-



գիմութեան արդեւք ըլլալ, յօժարութեամբ թող  
տուաւ: Այսպէսով Փերդինանդ՝ դեսպանին քովը  
մտաւ:

Քիչ մը ետքը կալլաս կոմսը Աիէննա կանչուե-  
լով՝ իր գրագիրն ալ հետը նոյն մայրաքաղաքը դնաց-  
բայց հոն՝ կարծածին պէս երջանիկ ու հանգիստ չէր:  
Թէպէտ կոմսն ու կոմսուհին վրան խիստ գոհ էին  
եւ իրեն՝ որդւոյ պէս սէր կը ցուցնէին, բայց կոմսին  
պաշտօնատէրներն ու ծառաններն՝ իր ընդունած սի-  
րոյն վրայ նախանձելով՝ ամէն կերպով զինքը կը  
չարչարէին: Այնպէս որ խեղճ պատանին քիչ մը ետ-  
քը հիւանդացաւ:

Նոյն միջոցին Աիէննա եկեղեցական մեծ հանդէս  
մը պատահելով՝ բոլոր արքունիքն, ազնուականք ու  
հասարակ ժողովուրդը գունդագունդ Ս. Ստեփանոս  
սի մայր եկեղեցին կ'երթային: Կոմսին ծառաններն  
ալ գացին, եւ նոյն իսկ հիւանդը հողացողն ալ  
ձգեց դնաց. ասանկով Փերդինանդ առանձին մնաց:  
Տենդէն ու ծարաւէն սաստիկ տանջուելով՝ քանի մը  
հեղ զանգակ զարկաւ, որ դուցէ մէկը կը լսէ. բայց  
եկող գացող չեղաւ: Անկողնէն ելլել ուզեց, որ եր-  
թայ ջուր բերէ. սակայն եւ ոչ կրնար տեղէն շար-  
ժիլ:

Ան օրերը Օպերատորֆեանց կոմսուհին կալլաս  
կոմսին այցելութեան եկած էր: Իր սենեկապանու-  
հին աղօթագիրքը ձեռքը ժամ երթալու համար  
սանդխէն վար իջնալու ատեն՝ արտաքոյ կարգի զան-  
գակի ձայն առնելով՝ ներս մտաւ ու քաղաքավարու-  
թեամբ մը հիւանդին հարցուց թէ ի՞նչ կ'ուզէ:

Մաղաչեմ, օրիորդ, կանչեց Փերդինանդ, շնորհք  
ըրէք՝ ինձի քիչ մը լեմնի օշարակ կամ գէթ ջուր  
մը հողացէք. ծարաւէս կը պապակիմ:

Գլխուս վրայ, պատասխանեց սենեկապանուհին,  
եւ շուտ մը դնաց պաղ ջուր մը բերաւ եւ հիւան-



դին տալով՝ ըսաւ. Հիմակու հիմա աւ առէք. հիմա կ'երթամ լիմնաւիշ ալ կը պատրաստեմ: Անմիջապէս խոհակերոց գնաց, եւ մարդ չգտնելով՝ սկսաւ լեմոն ու շաքար փնտռել, բայց բան մը չգտաւ: Ուստի տրտմութեամբ Փերդինանդին եկաւ եւ ըսաւ. Ամօթ է որ զձեզ աւ վիճակին մէջ առանձին թող են տուեր. մինչեւ որ հիւանդապահը դառնայ նէ՛ ես քովերնիդ կը կենամ: Աս ըսաւ ու պատուհանին քովը նստած՝ աղօթագիրքը բացաւ սկսաւ մտադրութեամբ կարդալ. երբեմն երբեմն ալ կ'ելլէր Փերդինանդին ջուր կու տար: Զուրը լմրնալով՝ գնաց նորէն բերաւ:

Արչափ շնորհակալ ըլլալու եմ ձեզի, օրիորդ, ըսաւ Փերդինանդ: Բայց գուցէ կենացս մէջ կարող պիտի չըլլամ հատուցում մ'ընել: Սակայն ապահով եղէք որ վարձքերնիդ Աստուծմէ կ'ընդունիք:

Չեզի փոքր ծառայութիւն մ'ընելա՛ ինձի բաւական հատուցում է, պատասխանեց աղջիկը, եւ դարձեալ պատուհանին քովը նստելով՝ ընթերցումը յառաջ տարաւ: Քիչ մը ետքը անհող ծառան գալով՝ սենեկապանուհին ոտք ելաւ եւ հիւանդին առողջութիւն մաղթելով գնաց: Երկրորդ օրը իր տիկնոջ ծամբայ ելլելէն յառաջ՝ նորէն հիւանդին տեսութեան եկաւ, որպիսութիւնը հարցուց եւ քաղաքավարութեամբ մը հրաժարական ողջոյնը տուաւ:

Փերդինանդ առողջանալէն ետեւ՝ Աալլաս կոմսը բոլոր ընտանեօք Բոհեմիա գնաց, ուր որ բերդ մը եւ ընդարձակ կալուածներ ունէր: Փերդինանդ նոյն տեղը քանի մ'ամիս շատ ուրախ ու զուարթ կեանք անցուց, որովհետեւ հին բերդն ու մեծատարած երկիրները տեսնելով՝ իր աղայութեան առջի տարիներն անցուցած տեղուանքը շփոթ կերպով մը կը յիշէր: Աոմսը Փերդինանդին աւ զուարթութիւնը տեսնելով եւ նոյն ատեն կալուածապահը մեռած



ըլլալով՝ իրեն առաջարկեց որ անոր պաշտօնն ինք  
առնէ, որն որ Փերդինանդ սիրով ու շնորհակալու  
թեամբ ընդունեցաւ :

ԺԲ. Ամսանոթին :

Փերդինանդին՝ կալլաս կոմսին կալուածապահն  
ըլլալն իմացուելուն պէս՝ տեղւոյն պաշտօնատէր-  
ներն ու շատ պատուաւոր մարդիկ սկսան ետեւէ  
ըլլալ զինքն իրենց փեսայացընելու : Բայց պատա-  
նին իր հիւանդութեան ատեն քիչ մը ժամանակ  
իրեն հիւանդապահութիւն ընող բարեսիրտ օրիորդը  
չէր մոռցած . անոր քաղցր վարմունքը, պարկեշտու-  
թիւնն ու աստուածապաշտութիւնը դեռ մաքին մէջն  
էին : Ուստի երբ որ տեսաւ որ հաստատուն վիճակ  
մ'ունեցաւ, կոմսէն հրաման խնդրելով՝ Օպերատոր-  
ֆեանց կոմսուհւոյն գրեց եւ աղաչեց որ իր սենեկա-  
պանուհւոյն ձեռքն իրեն չզլանայ :

Հոս հարկ է որ նոյն օրիորդին վրայ համառօտ  
տեղեկութիւն մը տանք : Աս օրիորդը՝ որուն անունն  
էր Աստարինէ, անտառապահի մը աղջիկ էր : Իր  
մատաղ հասակին մէջ հայրը կորսընցընելէն ետեւ՝  
մօրը հոգացողութեամբն աղէկ կրթութիւն մ'ընդ-  
ունեցաւ . եւ իր ժրութեամբն ու աշխուժութեամբը  
շուտ մը այնչափ յառաջագիմութիւն ըրաւ՝ որ քիչ  
մը ետքը սկսաւ իր բարակ գործուածներովն ու կա-  
րերովը մօրը օգնութիւն ընել : Աստարինէ շատ ան-  
գամ Օպերատորֆեանց կոմսուհւոյն համար կար կը  
կարէր ու այլեւայլ նիւթեր կը բանէր : Անգամ մը  
կոմսուհին իր բանուածքն այնչափ հաւնեցաւ, որ  
վարձքն առատութեամբ տալէն զատ՝ զանազան զգե-  
ստեղէն ալ պարգեւ տուաւ : Աղջիկը մօրը հետ ա-  
նոնց նայելու ատեն՝ մետաքսեայ ձեռնոցի մը մէջ՝  
աղամանդեայ մատնի մը գտնելով, շուտ մ'առաւ  
կոմսուհւոյն տարաւ :



Կոմսուհին ասոր վրայ խիստ ուրախացաւ: Ես նոյն մատնին շատոնց կորսուած կը կարծէի, ըսաւ. անշուշտ ձեռնոցս հանելու ատեն՝ մէջը մնացած պիտ'որ ըլլայ: Եւ թէպէտ բուն գտնելուս վրայ ալ շատ ուրախ եմ, բայց աւելի անոր վրայ կ'ուրախանամ որ այսպէս ետ բերիր: Ասոր հատուցումն օր մը անշուշտ կ'ընդունիս:

Աս դէպքին վրայ շատ չանցաւ՝ Կատարինէին մայրը մեռաւ. ինք ան ատեն տասնուչորս տարւան էր: Երբ որ կոմսուհին աս բանս իմացաւ, զինքը մխիթարեց ու խոստացաւ որ իրեն մօր տեղ կը բռնէ: Եւ անմիջապէս զինքը քօյիլ առաւ. բայց չէ թէ աղախնոյ, հապա իր աղջկան պէս կը նայէր, եւ ամէն օր աւելի աղէկ ճանչնալով՝ սէրը կ'աւելնար:

Աս կերպով քանի մը տարի անցաւ: Կատարինէ միշտ երջանիկ էր եւ երբեք սրտին մէջ ուրիշ բաղձանք չունէր, բայց եթէ իր բարերարին, իր երկրորդ մօրն աւելի հաճելի ըլլաւ: Երբ որ Ախէննա զՓերդինանդ տեսաւ, քանի մը հեղ միտքն եկաւ որ այնպիսի մարդու մը հետ միանալով՝ շատ երջանիկ կ'ըլլայ. բայց անմիջապէս աս խորհուրդը մտքէն հանեց, վասն զի չէր կրնար կարծել որ անիկա իրեն պէս աղքատ որբի մը հետ ամուսնանալ ուզէ: Ուստի երբ որ կոմսուհին զինքը կանչեց ու Փերդինանդին առաջարկութիւնը յայտնեց, խեղճ աղջիկը կարմրելով՝ սկսաւ առջեւը նայիլ. եւ թէպէտ այլայլութենէն կ'երեւար որ նոյն առաջարկութիւնն իր ըղձիցն ալ որչափ համաձայն է, բայց մէկէն ինք իրեն տիրելով՝ պատասխան տուաւ որ Եթէ Փերդինանդ իմանալու ըլլայ որ ես աղքատ, օժիտ չունեցող ու որբ աղջիկ մըն եմ, անշուշտ միտքը կը փոխէ:

Չէ, չէ, դուն հարուստ ես, պատասխանեց կոմսուհին. քու բարեպաշտութիւնդ, պարկեշտութիւնդ ու ժրտութիւնդ՝ բոլոր ոսկեղէն ու արծաթեղէն բա-



ներէն պատուական օժիտ են : Եւ թէպէտ քեզմէ բաժնուիլն ինձի շատ դժուար է, բայց քու երջանկութիւնդ ամէն բանէն աւելի կ'ուզեմ : Ուստի քու անուամբդ հիմա պատասխան կու տամ. բայց աս թէութիւնը պիտի դնեմ որ հարսնիքը բերդիս մէջ կատարուի, որպէս զի խնամնա մօր մը պէս ամէն բան պատրաստեմ :

Փերդինանդ քանի մ'օր վերջը կոմսուհւոյն խընդրուածոցը համաձայն՝ եկաւ : Հարսնիքը չէ թէ մինակ բերդին մէջիններուն, հապա նաեւ բոլոր դեղին բնակիչներուն մեծ ուրախութիւն պատճառեց, որովհետեւ կատարինէ՛ իր բարերար ու ազնիւ բնութեան համար՝ ամենուն սիրելի եղած էր : Պսակը կատարուելու համար եկեղեցի երթալու կէս ժամ մնացած՝ յանկարծ կալլաս կոմսն իր ամուսնովը մէկտեղ հոն հասաւ : Զանազան խօսակցութենէ վերջը՝ կոմսը Փերդինանդին մատը փառաւոր մատնի մ'անցուց եւ ըսաւ. Աս մատնիով՝ ես Լոնտոն գ.քեզ ճանչցայ. հիմա քեզի կու տամ, որպէս զի մշտնջենաւոր յիշատակ ըլլայ որ առաքինութիւնը՝ նոյն իսկ աս աշխարհքիս մէջ անվարձ չիմնար : Այն ատեն Օպերատորֆեանց կոմսուհին ալ կատարինէին ձեռքը մտերմաբար բռնելով՝ Ես ալ քեզի մատնի մ'ունիմ՝ ընծայ ընելու, ըսաւ. աս ան մատնին է՛ զոր դուն գտար եւ հաւատարմութեամբ ետ տուիր :

Այկեղեցական հանդէսը կատարուելէն ու Աստուծոյ դոհութիւն մատուցանելէն ետեւ՝ փառաւոր խընջոյք մ'եղաւ. եւ քանի մ'օր վերջը Փերդինանդ իր ամուսնոյն հետ Բոհեմիա դարձաւ :



## ԺԳ. Սպանիայի Աւագը:

Երբ որ Փերդինանդ ու Կատարինէ Բոհեմիայի ապառաժուտ լեռներուն ու մութ անտառներուն մէջ երջանիկ կեանք կը վարէին, եւ իրենց զաւկրները կամաց կամաց շատնալով՝ ծնողքներնուն ուրախութիւնը կ'աւելցրնէին, Ալոնզոյ՝ Սպանիայի դեղեցիկ ու ամենաբեր երկրին մէջ տրտում ու դժբախտ կեանք մը կ'անցրնէր: Արնայ ըսուիլ որ ինք աշխարհքիս մէջի ամենէն աւելի դժբախտ մարդիկներէն մէկն էր, թէպէտ եւ արտաքին երեւոյթէն խաբուող անձինք՝ զինքն աշխարհքիս ամենէն երջանիկ մարդիկներուն կարգը կը դասէին: Նոյն իսկ ինք ալ՝ Փերդինանդին մահուան լուրն առած ատեն՝ ինք զինքն երջանկութեան կատարը հասած կը համարէր, եւ աս մահուան լուրն իրեն այնչափ մեծ ուրախութիւն պատճառեց, որ չէր կրնար կողակցէն ու զաւկրներէն ծածկել, որոնք սաստիկ տրտմած էին: Եղբորորդւոյն մահուամբն ամէն բաղձացածը ձեռք բերած էր. մայրաքաղաքին մէջ շքեղ ապարանք, այլեւայլ տեղեր՝ դեղեցիկ բերդեր, կալուածներ, անբաւ ինչք ու Սպանիայի Աւագութեան պատիւ: Բայց շատ չանցաւ՝ իմացաւ որ բոլոր երկրաւոր հարստութիւնը՝ զմարդ երջանիկ չիկրնար ընել, երբ որ խղճմտանքի հանգստութիւն ու հոգւոյ խաղաղութիւն չունի: Աս համոզումն ան օրուրնէ սկսաւ ունենալ, որ օրն որ Փերդինանդին մահուան լուրն առաւ: Նոյն իրիկունը երբ որ ամուսնոյն հետ պարտէզը կը նստէր, կոմսուհին լալով ըսաւ. Պէտք չէի խեղճ տղան թող տալ. քովը մնայի նէ՛ գուցէ չէր մեռներ: Բոլոր կենացս մէջ պիտի չկրնամ մխիթարուիլ որ ողորմելոյն լացին ողբին միտ չղնելով՝ զինքը ձգեցի դացի:

Թող տուր, պատասխանեց Ալոնզոյ խստասրտութեամբ, թող որ մեռելն իր գերեզմանին մէջ հանդ-



չի. Հիմակ աչքդ կենդանի մնացողներուն վրայ դարձուր. նայէ մէյ մը՝ անոր մահը մեր զաւկըներուն ինչ երջանկութիւն բերաւ:

Արբեք աս բանս մտքէս չէր անցած, պատասխանեց պնուակի տիկինը: Փերդինանդին կեանքն ինծի ամէն հարստութիւններէն պատուական էր: Ինչպէս կարելի է մէկու մը դժբախտութեան, մահուան վրայ ուրախանալ՝ անկից ընդունուած ժամանակաւոր ինչքերուն համար: Աս ըսաւ եւ ինք զինքը չկրնալով բռնել՝ գնաց խուցը քաշուեցաւ:

Այն միջոցին կոմսին երկու պզտի զաւկըներն եկան: Շուշան՝ ամենէն պզտիկ աղջիկը՝ ձեռքը մեռած աղաւնի մը բռնած՝ պոռաց հօրը. Նայեցէք, հայրիկ, ուրուր մը աս խեղճ աղաւնին մեռցուցեր է. նայեցէք, ճերմակ փետուրներն ինչպէս իր արեամբ կարմիր ներկուեր են, վիզն ու կուրծքն ալ արիւնլուայ են: Ինչ արիւնըռուշտ անասուն պիտ'որ ըլլայ ուրուրն՝ որ այսպիսի սիրուն թռչուն մը մեռցուցեր է:

Այնպէս է, կանչեց Յակոբ՝ որն որ սպանուած ուրուրը թեւէն քաշկոտելով հետը կը բերեր, բայց իր պատիժն ալ գտաւ: Ար տեսնէք, պարտիզպանը զինքն անմիջապէս պատժեց, եւ շատ ալ աղէկ ըրաւ, վասն զի ով որ ուրիշը կը սպաննէ՝ ինք ալ մահուան արժանի է:

Անմեղ տղոց աս խօսքերն Ալոնդոյին սիրտը սուր նետի մը պէս խոցեցին: Մէկդի կորսուեցէք, պոռաց զաւկըներուն. ձեր շատխօսութեամբը գլուխս միցուցրնէք: Աս ըսաւ ու ելաւ պարտիզին ամայի կողմերը գնաց, ուր որ սաստիկ խռովութեամբ երկայն ատեն պտըտեցաւ: Իրեն միշտ անանկ կու գար որ աս խօսքերը կը լսէ թէ Ով որ կը սպաննէ՝ մահուան արժանի է: Ո՛հ. ինչպէս դառն բան է, կ'ըսէր ինք իրեն, իր գատապարտութեան վճիռն իր զաւկըներուն բեզնէն լսել:



Քանի մ'օր ետքը Ալոնդոյ իր եղբօրը Մատրի-  
տի հոյակապ պալատը գնաց բնակելու, ուր որ շատ  
երեւելի մարդիկ եկան զինքը բարեմաղթելու: Ընդ-  
ունելութեան սրահը խիստ շքեղ ու փառաւոր էր  
եւ զանազան քաջ պատկերհաններու նկարներով  
զարդարուած: Ալոնդոյ Սպանիայի Աւագութեան փա-  
ռաւոր զգեստը հագած՝ ծանրութեամբ մը զամէնքը  
կ'ընդունէր:

Բայց քիչ մը վերջը յանկարծ աչքը նկարի մը վրայ  
իյնալով՝ սկսաւ երեսին գոյնը նետել: Նկարը Բեթ-  
ղեհեմի մանկանց կոտորածը կը ներկայացընէր, անոր  
մէջ քաշուած կատաղի մարդու մը կերպարանքը՝ որն  
որ դաշոյնը հրեշտակի պէս սիրուն տղու մը սիրտը  
կը խոթէր, զինքը խիստ սարսափեցուց: Ուստի եւ  
իր ըրածը միտքը գալով՝ Նս ալ անմեղ տղու մ'ա-  
րիւնը թափեցի, կ'ըսէր մտքէն:

Նս տեսիլքին չկրնալով դիմանալ՝ աչքն ուրիշ  
կողմ մը դարձուց, բայց հոն ալ Յովհաննէս Մկրտչին  
գլխատման պատկերն առջեւն ելաւ: Ալոնդոյ Ս. կա-  
րապետին արիւնոտ գլուխը սկըտեղ վրայ դրուած  
նշմարելուն պէս՝ սկսաւ սաստիկ դողդողալ: Թէ որ  
յանցանքս երեւան գալու ըլլայ, կ'ըսէր ինք իրեն,  
եւ ալ ասոր արժանի եմ, իմ գլուխս ալ անշուշտ  
խայտառակութեամբ կը կտրուի: Բայց Յովհաննէս  
անմեղ էր, իսկ ես . . . :

Տեսնելով որ ամենուն աչքն իր վրան է, եւ կար-  
ծելով որ իր ծածուկ յանցանքը երեսին վրայ կը  
կարդան, վրան մարելիք եկաւ, ծնկուրները սկսան  
կտրիլ: Քովն ըլլողներն իրար անցան, ու շուտ մը  
զինքը բռնելով՝ ուրիշ սենեակ մը տարին եւ բազ-  
մոցի մը վրայ նստեցուցին: Ալոնդոյ եղածին վրայ  
հիւրերէն թողութիւն խնդրելով՝ աղաչեց որ զինքն  
առանձին թողուն, այնպէս որ մինակ ամուսինը քո-  
վը մնաց:



Աղաչեմ՝ զրուցէ, ըսաւ կոմսուհին՝ շփոթելով,  
ինչ ունիս :

— Շուտով գնա, սրահին մէջի երկու մեծ պատ-  
կերները վերցընել տուր :

— Ինչո՞ւ . հազար անգամ զանոնք տեսած ես,  
եւ միշտ ալ իբրեւ սքանչելի գործուածք՝ վրանին  
կը զարմանայիր :

— Հիմա տարբեր բան է . եւ որովհետեւ ես  
հոստեղս տէր եմ, չեմ ուզեր որ անոնք սրահիս մէջ  
դանուին : Ինծի խիստ զարհուրանք կը պատճառեն :  
Ա՛ն գեղեցիկ տղան՝ որ կը սպանուի . . . : Ա՛ն ա-  
րիւնոտ գլուխը . . . : Մինչեւ որ անոնք սրահէն չեն  
վերնար, սաքս հոն չեմ կոխեր :

Արմսուհին աս լսելով՝ սաստիկ այլայլեցաւ . մե-  
կէն սկսաւ մտքին մէջ ամուսնոյն անօրէն գործքին  
վրայ տարակոյսներ ծնանիլ :

Նոյն օրէն սկսեալ՝ Ալոնդոյ միշտ կը տկարանար,  
այնպէս որ բժիշկները խորհուրդ տուին որ օդափո-  
խութեան համար գեղ երթայ : Արմսն իր բերդերէն  
մէկը գնաց :

Վանի մ'օր վերջը վրան խիստ պարզ վերարկու  
մ'առած ու գլուխը հասարակ գլխարկ մը դրած՝  
գեղը պտրտելու ելաւ . կ'ուզէր իմանալ որ բնակիչք  
իր վրայ ի՞նչպէս կը խօսին : Ճամբան՝ սգոյ զգեստ  
հագած գեղացի կնոջ մը հանդիպելով՝ հետը խօսելու  
սկսաւ, եւ տեսնելով որ զինքը չեճանչնար՝ Ինչո՞ւ  
սուգ կը բռնես, ըսաւ . անշուշտ երիկդ կամ զաւկը-  
ներէդ մէկը մեռած պիտ'որ ըլլայ :

Չէ, պատասխանեց գեղացի կինը լալով ու հեծե-  
լով . չէ . բայց այնպիսի մէկը կորսընցուցի, զորն որ իմ  
զաւկըներուս պէս կը սիրէի, այս ինքն՝ մեր Փերդի-  
նանդ կոմսիկը :

— Ի՛նչ, ուրեմն իրե՞ն համար սգոյ զգեստ հա-  
գած ես :



— Հրամար էք, Պարոն, իրեն համար, եւ չէ թէ մինակ ես, հապա բոլոր մեր գեղի բնակիչները սեւ հագած են, որովհետեւ Փերդինանդին կորրստեամբը մեղի ու մեր ընտանեաց խիստ մեծ դժբախտութիւն եղաւ:

— Աւրեմն կը կարծէք որ ձեր հիմակուան տէրն իր եղբորորդւոյն տեղը չիկրնար բռնել:

— Հըմ . . . . քիչ մը դժուարին բան է: Փերդինանդին հիւանդութեան ու մահուան վրայ լսածնիս՝ մեղի այնչափ աղէկ չեկաւ: Մեռած ատեն՝ ընտանիքէն եւ ոչ մէկը քովը դանուեր է. թէ որ իրենց մերձաւոր աղգականին հետ այսպէս անհողութեամբ վարուեցան, ի՞նչպէս կրնանք մե՛նք իրենցմէ բարիք մը յուսալ: Աինք քիչ մը ատեն լռելէն ետեւ՝ յորդարցունք թափելով՝ Մեղի այնպէս կու գայ որ, ըսաւ, եթէ տղան ուրիշի մը ձեռք ըլլար, դեռ մինչեւ հիմա կենդանի կը մնար:

Աս խօսքերը Ալոնզոյին սիրտը սայրասուր սրոյ պէս վիրաւորեցին, եւ մէկէն թող տուաւ գնաց: Ի՛նչ, կ'ըսէր մաքէն, արդեօք եղածին վրայ կասկած մ'ունին: Թէ որ ասանկ բան կայ նէ, վայ ինձի, բանս բուսած է:

Այսպէս՝ ի՛նչ որ կը տեսներ, ի՛նչ որ կը լսէր, ամէնն ալ զինքը կը յանդիմանէին: Արո՛ւն հետ որ կը խօսէր՝ կը կարծէր թէ յանցանքն երեսը կը զարնէ: Ի՛նչ օգուտ ինձի, կ'ըսէր, կրճոցս վրայ աղամանդեայ խաչ կախել, թէ որ խղճմտանքս միշտ տակն ու վրայ է:

Փետրոյ ալ զինքը շատ կը վախցընէր: Ալոնզոյ իրեն գրած էր որ Քեղի խոստացած բերդս ու կալուածներս հիմակու հիմա կրնաս ուղածիդ պէս վայելել: Բայց դեռ չեմ կրնար բոլորովին քեզի տալ, որովհետեւ ասով կասկածելի կրնանք ըլլալ: Մահուրնէս ետեւ քուկդ ըլլան: Առջեւս ալ ամենեւին



մ'երեւար. մեր մէջն եղած կապակցութիւնը մարդ պիտի չիմանայ:

Իրօք ալ ան ատենէն վեր զինքը տեսած չունէր, որուն վրայ շատ կ'ուրախանար: Ասան զի որչափ որ յառաջ զինքը կը սիրէր, այնչափ ալ իրեն չարագործութեան գործիք ըլլալէն ետեւ՝ կ'ատէր: Իրմէ կը դարձէր, զինքն իրաւամբ խիստ գէշ մարդու տեղ գնելով, թէպէտ եւ ինքն էր որ բիւրակերպ խոստումներով ու սպառնալէքներով իրեն գործակից ըլլալու որոշած էր: Բայց միշտ վախի մէջ էր, մանաւանդ երբ որ լսեց թէ Փետրոյ քիչ մ'ատեն սեւամաղձութեան մէջ իյնալէն ետեւ՝ բոլորովին աներեւոյթ եղեր է: Ալոնդոյ զինքը չորս կողմը փնտել տուաւ, բայց փուճ տեղ: Ախն ու կասկածն երթալով կը սաստկանար. Թէ որ ինքն ալ ինծի պէս խղճմտանքէն կը տանջուի, կ'ըսէր ինք իրեն, կրնայ ըլլալ որ երթայ ինք զինքը դատաստանի ձեռք մատնէ: Արդէն շատ անգամ լուած է որ յանցաւորք՝ աւելի կախազանի վրայ մեռնիլ, քան թէ անդադար խղճմտանքէն չարաչար տանջուիլ ուղեւով՝ իրենք զիրենք դատաւորի ձեռք տուած են: Հա՛, այնպէս պիտ'որ ըլլայ, եւ անտարակոյս զիս ալ մանած է:

Ա՛ երջապէս օր մը լուելով որ Փետրոյ խղուներ է, որովհետեւ իր գլխարկը, վերարկուն, խորտակած քնարը ծովեզրը գանուեր են, Ալոնդոյ ասով քիչ մը հանդարտեցաւ: Մակայն շատ չանցաւ խղճմտանքին խայթերն աւելի եւս սաստկացան: Իր մահուան պատճառն ալ ես եղայ, կ'ըսէր, եւ չէ թէ մինակ ժամանակաւոր, հապա նաեւ յաւիտենական մահուան պատճառ եղայ, զինքը դժոխք ձգեցի: Ուստի ես ալ ինչ բանի ակնկալութիւն կրնամ ունենալ, բայց եթէ անոր ետեւէն երթալու: Ո՛հ, կորուստ անհրաժեշտ է:



Որպէս զի այսպիսի մտածմունքներէ ազատի,  
 ուզեց ինք զինքը զբօսանաց տալ. բայց օգուտ չե-  
 ղաւ, որովհետեւ իր տխուր խորհուրդներն ամէն տեղ  
 ետեւէն կ'երթային: Անոր համար իր մէկ մենացեալ  
 բերդին մէջ քաշուեցաւ, ուր ամէն մարդկային ըն-  
 կերութենէ կը փախչէր, ցորեկն ի բուն մինակուկ  
 խուցը կը կենար, եւ միայն անձրեւի օրեր եւ կամ  
 իրիկուան մթին՝ ամայի կողմերը քիչ մը ժուռ գալու  
 կ'ելլէր, որպէս զի ամենեւին մարդու երես չտեսնէ:  
 Քալուածքն ու կերպարանքը կը ցուցնէին որ խոր  
 տրտմութեան մէջ է, այնպէս որ օր մը գեղացի մը  
 զինքը տեսնելով՝ քովինին ըսաւ. Նայէ աս մեր կոմսը  
 չափէն աւելի հարստութիւն, շատ մեծ պատիւ, ան-  
 թիւ անհամար կալուածներ եւ այն ամենայն ունի՝  
 ինչ բանի որ մարդս կրնայ բաղձալ, եւ ինչպէս  
 դժբախտ կ'երեւայ: Ստոյգ կ'ըսեմ որ իմ վիճակս  
 անոր վիճակին հետ չէի փոխեր:

Նոյն իսկ ինքն ալ շատ անգամ գեղացիները  
 տեսնելով որ ուրախութեամբ եւ երգելով իրենց օ-  
 բուան դժուարին աշխատութենէն ետ կը դառնան,  
 հառաչելով կը զրուցէր. Արչափ աւելի երջանիկ կ'ըլ-  
 լայի՝ թէ որ աս մարդիկներուն պէս ստորին վիճա-  
 կի մէջ գտնուէի եւ ազատ ըլլայի աս սրտի նեղու-  
 թիւններէն: Ա՛հ, հիմայ կ'իմանամ որ մարդը ստու-  
 գիւ դժբախտ ընողը՝ խղճի անհանգստութիւնն է:  
 Աղքատութիւնը, ծանր աշխատութիւնները, նոյն  
 իսկ ցաւերն ու հիւանդութիւնները, մանաւանդ թէ  
 մահն իսկ՝ խղճմտանքի խայթերուն քով ոչինչ են:  
 Երանի՛ անոր՝ որուն խիղճը հանգարտ է. ամենէն  
 աղքատ գործաւարն ալ ըլլայ, միշտ հարուստ է:  
 Խղճի հանգստութիւնը՝ բոլոր աշխարհքիս գանձե-  
 րէն վեր է, եւ անոր քով բոլոր շքանշանները՝ տղու  
 խաղալիկ են:



## ԺԳ. Յանդաւորը և ՂԼԿ:

Արնդոյին ներքին ցաւոյը վրայ ուրիշ ցաւեր ալ եկան, որով վերջին աստիճանի դժբախտութեան մէջ ինկաւ: Իր պզտիկ զաւկըները գրեթէ ետեւէ ետեւ ծաղկէ մեռան: Աս կորուստներն իրեն սրտին մեծ վիշտ էին. սակայն առանձինն ան պարագան որ ամէնն ալ ծաղկի հիւանդութենէ կը մեռնէին, զինքը շատ կ'այլայլէր ու կը վախցընէր, որովհետեւ յայտնի կը տեսնէր որ Աստուած զինքը պատժելու համար՝ իր որդիները նոյն հիւանդութեամբ կը մեռցընէ, որն որ ինք միջոց առած էր եղբորորդին մէջտեղէն վերցընելու համար:

Բայց ամէն բան ասով լմնցած չէր: Իր անդրանիկ աղջիկն աղնուական տնէ ու առաքինի եւրիտասարդ մը կնութեան ուզած էր: Ասոր թէ՛ աղջիկն ու թէ՛ մայրը կը բաղձային, եւ արդէն հաւանութիւննին տալու յօժար էին: Բայց Արնդոյ աս խնամութիւնն արհամարհելով մերժեց, ըսելով որ երիտասարդը ստորին աստիճանի աղնուական է ու բաւական հարստութիւն չունի. եւ խեղճ աղջիկը ստիպեց ծեր ու չարաբարոյ դքսի մը հետ ամուսնանալու, որն որ հարստութենէն ուրիշ բան չունէր: Բարեսիրտ Եւգինէն հօրը կամացը ակամայ հնազանդեցաւ, բայց քիչ մը վերջը քստն տարւան մեռաւ: Ասոր վրայ հօրը զգացած ցաւն անկարելի է յայտնել. միշտ ինք զինքը մեղադրելով կ'ըսէր. Իմ հպարտութեամբս ու ազահութեամբս աղջիկս դերեզման խոթեցի: Եղբօրս միամօր տղան մեռցընելուս համար՝ իմ բոլոր զաւկըներս մէկիկ մէկիկ կը մեռնին, ազգատոհմս պիտի սպառի:

Աս իր գուշակութիւնն ալ շատ չանցաւ՝ կատարուեցաւ: Փիլիպպոս՝ իր անդրանիկ ու ամենէն աւելի սիրելի որդին, որն որ բազմաթիւ զաւկընէ-



բուն մէջէն՝ մինակ կենդանի մնացած էր, հօրը մոլութեանցը կը հետեւէր, եւ իրմէ լսած սկըզբունքներուն համեմատ՝ իր անձնական պատիւն ամէն բանէն վեր կը դասէր: Առաքինի մայրը թէպէտ շատ կը ջանար որ զինքն ուղղէ, բայց պարապ տեղ: Պատիւը, կ'ըսէր մայրը, աղէկ բան է. բայց ճշմարիտ ըլլալու համար՝ առաքինութեան հետ մէկտեղ պիտի ըլլայ: Թէ որ ճշմարտապէս պատուաւոր մարդ կ'ուզես ըլլալ, պէտք է որ զգուշանաս չէ թէ միայն ան բաներէն՝ որով մարդկան առջին անարդ կ'ըլլաս, հապա նաեւ Աստուծոյ առջեւն ալ անարդ ընող բաներէն: Բայց երիտասարդը մօրը խրատները բանի տեղ չէր դներ, եւ միշտ հօրն օրինակին ետեւէն կ'երթար, ուստի ամենափոքր բանի ալ չէր կրնար տանել, որն որ իր պատուոյն դէմ կը կարծէր, եւ անմիջապէս վրէժ առնել կ'ուզէր:

Օր մը բարեկամէ մը թեթեւ նախատինք ընդունելով՝ մենամարտութեան կանչեց, վիրաւորեց հակառակորդն ու մեռցուց. բայց ինք ալ երեք վէրք առած ըլլալով՝ քանի մ'օրէն մեռաւ: Ասիկակ Ալոնդոյին ցաւոցը լուսն եղաւ: Երեք վէրք, կը պոռար, երեք վէրք: Աս բանս ամենէն սոսկալին է: Փետրոյ ալ զՓերդինանդ երեք տեղէ վիրաւորած էր: Ո՛հ, ըրածիս պատիժը գտայ: Ա՛լ տրտմութիւնն ու խրդճին խայթերը վերջին աստիճանի սաստկացան:

Աւ թէպէտ աս իր տրտմութիւնն ու խրդճմտանքին խայթերը մարդիկներէն ծածկելու շատ կը ջանար, բայց կողակցէն չկրցաւ գաղտնի պահել: Սիրալիր կոմսուհին ստեպ կ'աշխատէր զինքը քաջալերելու, եւ միշտ կը հարցընէր. Ի՞նչ ունիս, սիրելիս, ինչո՞ւ կը նեղիս. կ'աղաչեմ սիրտդ գորովագութ կողակցիդ բաց. գուցէ ասով կը թեթեւնաս, գուցէ քիչ մը կը մխիթարուիս: Բայց Ալոնդոյ միշտ լուսութիւն կը պահէր, որովհետեւ ինք իրմէ կ'ըսէր թէ



ոճրագործութիւնս այնչափ մեծ է՝ որ անկարելի է թէ մէկու մը կարող ըլլամ յայտնել :

Սակայն ցորեկները մեծ տառապանքով սրտին մէջ ծածկած անձկութիւնները՝ գիշերներն իր կամացը դէմ կը յայտնէր : Շատ անգամ քնոյն մէջ՝ անշուշտ զարհուրեցուցիչ երազներէ խռովելով՝ զրուցած խօսքերը՝ կոմսուհւոյն տարակոյսները վերցընելով՝ շատոնց կռահած ճշմարտութիւնը յայտնապէս իմացուցին : Երբեմն Ալոնզոյ մէկէն կը սկսէր պռալ . Մէկդի՛ գնա, մէկդի՛ . ի՛նչ այնպէս սպառնալից կը նայիս . ինչո՞ւ երեք վերքերդ կը ցուցընես , որոնք արդէն միշտ աչքիս առջեւն են : Թողութիւն տուր , կ'աղաչեմ՝ , թողութիւն , սիրելի Փերդինանդ . խելքս վրաս չէր , ըրածս չէի գիտեր : Թողութիւն տուր . դուն հիմա երկինքն ես . իսկ ես ողորմելիս , ես՝ դժոխքին բոլոր տանջանքները սրտիս մէջ կը կրեմ . չորս կողմս մուխ ու բոց կը տեսնեմ . . . կ'այրիմ , վայ՛ ինձի . . . կորսուեցայ . . . :

Շատ անգամ Պիանդա ցորեկն ալ էրկանը բերնէն ասանկ խօսքեր կը լսէր : Հեղ մը՝ խորունկ մտածմանց մէջ ըլլալով եւ տիկնոջը գալը չիմանալով՝ ուրիշ խօսքերու մէջ ասոնք ալ ըսաւ . Տանս վրայ Աստուծոյ անէճքը կայ : Զաւկըներս օտարին ընչիւքը հարստցընել ուզեցի . իսկ ասոնք եւ ոչ իմինս վայլեցին : Օտար աղայ մը մեռցընելուս համար՝ բոլոր իմիններս ալ կորսընցուցի : Ար կարծէի որ տոհմս երեւելի պիտ'որ ընեմ , եւ ահաւասիկ ցեղիս մէջ ես միայն մնացի : Ա՛նմիտս , կը համարէի որ ապօրինաւոր միջոցներով մեծ երջանկութեան պիտի հասնիմ . եւ ահա մարդիկներուն մէջ ամենէն դժբախտն ու ողորմելին եղայ : Պիանդա գողալով ասոնք լսելէն ետեւ՝ առանց իմացուելու գնաց :

Իսեղճ կոմսուհին արդէն զաւակացը մահուան վրայ սաստիկ ցաւոց մէջ էր , երբ որ էրիկն ալ այն-



պիսի յուսահատական վիճակի մէջ կը տեսնէր, կը հիւժէր կը մաշէր: Այնպէս որ քիչ մը ետքը ալ բուրովին տկարանալով՝ հիւանդցաւ, անկողին ինկաւ: Չգալով որ վերջի ըսպէն մօտիկցեր է, որ մ'որ Ալնոյ անկողնոյն քով արամութեամբ կը նստէր, հրեշտակային նայուածքով մը ամուսնոյն նայելով եւ ձեռքէն բռնելով՝ Սիրելիս, ըսաւ, ահաւասիկ քեզմէ կը բաժնուիմ. հաղիւ քանի մը վայրկենի կեանք ունիմ: Ահազեմ, սիրոյ, խաղաղութեան ու հաշտութեան վերջին խօսքերուս միտ դիր: Երկայն ատենէ վեր քու սրտիդ ծածուկն իմացած էի: Գուն Փերդինանդնիս մեռցրնել տուած ես: Աս բանս շատ անգամ քու բերնէդ լսեցի: Ստոյգ է յանցանքդ մեծ է. բայց մի յուսահատիր: Աստուծոյ ողորմութիւնն անսահման է: Աստուած՝ միամտութեամբ ու սրտանց զղջացողին կը ներէ. աճապարէ, հաշտուէ իրեն հետ. հոգւոյդ փրկութեան ետեւէ եղիր, որ չըլլայ թէ անդիի աշխարհք յաւիտեան իրարմէ բաժնուինք:

Ալնոյ՝ որ մինչեւ նոյն ատեն աչքէն արցունք թափած չունէր, եւ սիրտն ամէն մխիթարութեանց անմատոյց ժայռ մըն էր եղած, այլայլելով ամուսնոյն պաղած ձեռքը պազաւ եւ աչքէն արտասուաց հեղեղ մը թափելով՝ ըսաւ. Սիրելի Ահանգաս, երկնային հրեշտակ, ուրեմն թէպէտ դիտես որ ես սատանայէն ալ գէշ եմ, այսու ամենայնիւ վրաս կը գթաս եւ զիս կը սիրես: Աս քու վարմունքդ ինձի քաջալերութիւն կու տայ: Այո՛, Աստուծոյ ողորմութեան կը յուսամ. որովհետեւ դուն ինձմէ այնչափ վիշտ կրելէն ետեւ՝ կը ներես ու զիս կը սիրես, կը յուսամ որ Աստուած ալ կը ներէ, ու երկինք մէկզմէկ կը տեսնենք:

Ահանգա մխիթարուելով եւ ամուսնոյն վրայ սիրոյ վերջին հայեցուած մը ձգելով՝ հոգին աւան-



դեց : Այնպէս մեռելոյն անկողնոյն առջեւը ծունկ կ'իյնայ եւ ձեռուընկերը վեր վերցուցած՝ կը կանչէ . Տէր Աստուած , դուն՝ որ քովդ առիք աս հրեշտակը , որուն ես անարժան էի , ամենակարող բազուկդ ողորմութեամբ ինձի երկընցուք եւ զիս իրեն ու քեզի մերձեցուր . շնորհք տուր ինձի որ օր մը կարող ըլլամ իրեն պէս մեռնիլ : Ամէն գործքերուդ մէջ զարմանալի ես . բայց աւելի զարմանալի ես՝ երբ որ մեղաւորները փրկութեան ճամբան կը բերես : Աս զարմանալիքն իմ վրաս ալ ցուցուր , ամէնողորմ ու բարերար Տէր :

### ԺԵ . Ճշմարիտ դարչ :

Կոմսը կողակցին մահուընէ ետեւ՝ իր ամենէն հեռաւոր հին մէկ բերդը քաշուեցաւ , որն որ տխուր անտառներու եւ լեռներու մէջ կը գտնուէր : Հեռը սենեկապանէ մը զատ ուրիշ մէկն առած չէր : Հոն բոլորովին աշխարհքէ հեռու ապրիլ կ'ուզէր . ուստի ժամանակը՝ ամուսնոյն թող տուած հոգեւոր դրբերը կարդալով՝ կ'անցընէր , որմէ մեծ մխիթարութիւն կը գտնէր : Սակայն խղճմտանքը բոլորովին հանդարտ չէր : Քիչ մը վերջը հիւանդանալով անկողին ինկաւ : Իր հաւատարիմ ու աիրասէր սենեկապանը տեսնելով որ տերը մեծ վտանգի մէջ է , անդամ մը համարձակեցաւ զգուշութեամբ իրեն հասկըցուց որ աղէկ կ'ընէ եթէ հոգւոյն իրողութիւնները կարգի դնելու ըլլայ : Մարդս , ըսաւ , ամէն ատեն , բայց մահաւանդ հիւանդութեան ժամանակ կրօնի մխիթարութեան եւ օգնականութեան կարօտութիւն ունի . անոր համար աղէկ կ'ընէք՝ թէ որ քովերնիդ քահանայ մը կանչելու ըլլաք :

Աս կարօտութիւնն ես արդէն շատոնց կը զգամ , պատասխանեց կոմսը հառաչելով . բայց կրնաս մի ինձի անանկ քահանայ մը գտնել , որուն վրայ կարենամ բոլորովին վստահ ըլլալ :



Հոսկից հինգ մղոն հեռու Փրանկիսկեանց վանք մը կայ, ըսաւ սենեկապանը, ուր որ շատ ծերունի ու յարգելի վանականք կը գանուին, որոնք աշխարհքէս բոլորովին հրաժարած՝ օրերնին Աստուծոյ ծառայութեան մէջ կ'անցընեն: Թէ որ հրաման կու տաք նէ՝ ձեր անուամբը վանահօր գրեմ որ կամ ինք անձամբ գայ եւ կամ իմաստուն ու փորձառու քահանայ մը խաւրէ:

Ալոնզոյ աս բանս սիրով յանձն առաւ. եւ սենեկապանը նամակ մը գրելով՝ ծառայի մը ձեռք տուաւ եւ հրամայեց որ անմիջապէս ջորի հեծնայ ու գալու քահանային համար ալ հեան ուրիշ ջորի մ'առած՝ Փրանկիսկեանց վանքն երթայ, նամակը վանահօր ձեռքը տայ:

Երիկունք՝ երբ որ մութը կոխելու վրայ էր, վանականն եկաւ ու իր մեծաւորէն գրուած նամակ մը տուաւ սենեկապանին ձեռքը, որն որ վեր ի վերոյ մը կարդալէն ետեւ՝ առաւ զինքը կոմսին խուցը տարաւ եւ ըսաւ. Ահաւասիկ, տէր իմ, մեծարգոյ վանահայրը հրամանոցը իր վանքին ամենէն յարգելի քահանաներէն մէկը՝ զՀայր Անտոնիոս կը խաւրէ:

Աոման անոր այսպէս շուտով գալուն վրայ քիչ մը այլայլելով՝ առանց խօսք մ'ըսելու մեծարանօք կը նայէր յարգելի վանականին, որն որ հասակն առած էր, երեսները գեղնագոյն ու վտիտ, գլուխն ալ գրեթէ բոլորովին ճաղատ: Քահանան ալ իր կողմանէ՝ կոմսին առջեւն ելած ատեն՝ շատ այլայլութեան մէջ մտաւ եւ անոր ողորմելի վիճակէն այնպէս շարժեցաւ, որ աչուրներէն սկսաւ արցունք թափել:

Ալոնզոյ զինքը քովը նստեցընելով՝ Յարգոյ Հայր, ըսաւ, ձեր վշտակցութիւնը զիս մեծապէս կը քաջալերէ եւ ձեզի վստահելու կը յորդորէ: Բայց գիտցէք որ ձեր արտասուացն արժանի չեմ, որովհետեւ խիստ մեծ մեղաւոր եմ, եւ խղճիս վրայ զարհու-



րելի գաղտնիք մ'ունիմ, որն որ չեմ համարձակիր յայանելու:

Աս ըսաւ ու վեր վերցուցած գլուխը նորէն բարձին վրայ դնելով՝ երեսը ձեռուրներովը գոցեց: Խուցը տխուր լուսթիւն մը պատեց. մինակ ճօճանակին միակերպ ձայնը կը լսուէր, երբեմն ալ հիւանդին հեծելը:

Քիչ մ'ատեն ասանկ լուսթեամբ անցընելէն ետեւ՝ կրօնաւորը տեսնելով որ Արնղոյ յանցանքը յայանելու մեծ դժուարութիւն կը կրէ, Արովհետեւ, ըսաւ, դուք չէք համարձակիր մեղքերնիդ խոստովանելու, ես կ'ուզեմ ձեզի օգնել: Դուք Փետրոյ անունով մէկու մը յանձնեցիք որ եղբորորդինիդ թունով կամ սրով մեռցընէ, որպէս զի անոր ստացուածը ձեռք բերէք:

Հայր, պուսայ Արնղոյ զարհուրելով ու վեր ցատքելով եւ ապշութեամբ մը կրօնաւորին կը նայէր. Հայր, աս բանս ուսկի՞ց դիտէք. ձեզի ո՞վ պատմեց:

— Բաւական որ դիտեամ, հարկաւոր չէ իմանաք թէ ս՛վ ըսած է. բայց ապահով եղէք, աշխարհքիս մէջ ինձմէ զատ մարդ չիգիտեր: Եւ զձեզ մխիթարելու համար՝ աս ալ կրնամ զըուցել որ մեղքերնիդ գործքով կատարուած չէ... եղբորորդինիդ գեռ կենդանի է:

— Ի՛նչ. Փերդինանդ գեռ ո՞ղջ է, գեռ կ'ապրի՞: Յանուն Աստուծոյ կ'աղաչեմ ըսէք, իրա՞ն կը խօսիք:

Այո՞ ողջ է, պատասխանեց վանականը հանդարտութեամբ: Աստուծոյ նախախնամութիւնը միշտ վրան հսկելով՝ գրեթէ հրաշքով զինքը փրկեց: Դանակը բթացած եւ մարդասպանին բազուկն անզգայ էր. իր քարի պէս կարծր սիրան ալ յանկարծ կալրդնալով՝ անոր խնայեց: Անմեղ աղուն արիւնը թէպէտ վազեց, թէպէտ վերաւորեցաւ, բայց վէրքերը



մահացու չէին: Ուստի Փերդինանդ դեռ ողջ է,  
դեռ կ'ապրի:

Ո՛հ, երանի՛ թէ ստոյգ ըլլար, կանչեց ուրախա-  
նալով Ալոնզոյ, երանի՛ թէ Փերդինանդ կենդանի  
ըլլար, եւ ես իրօք մարդասպան չըլլայի: Ա՛լ դը-  
ժուարութիւն չէի զգար խոստովանելու, եւ ինչքն  
ուրախութեամբ իսկ օրինաւոր տիրոջը կու տայի:  
Սակայն առ յոյսը պարզ երեւակայութիւն մըն է.  
անկարելի բան է: Բայց կ'աղաչեմ, Հայր, պատմու-  
թիւնը շարունակեցէք, պատմեցէք ինձի Փետրոն  
տղան ինչ ըրաւ:

— Այրք որ Փետրոյ կիսամեռ տղուն առջին ան-  
շարժ կեցած՝ ինչ ընելիքը եւ ձեր բարկութենէն  
ինչպէս պրծելիքը չէր գիտեր, Աստուած տղուն ա-  
զատիչ մը խրկեց: Բեռնարդոս տէլ Ռիոյ յանկարծ  
ներս մտաւ, տղուն վերքերը պատեց ու հետն առաւ  
զնաց:

Բեռնարդոս տէլ Ռիոյ, պոռաց Ալոնզոյ սաստիկ  
զարմանալով, Բեռնարդոս տէլ Ռիոյ՝ իմ թշնամիս,  
որն որ տէրութենէն աքսորուեցաւ եւ կը կարծուէր  
թէ Սպանիայէն փախած ըլլայ:

Այո՛, ան պատուական մարդը, որն որ լեռները  
փախած էր եւ հոն ճզնաւորի պէս կ'ապրէր: Ինք  
զՓերդինանդ իր միայնարանը տարաւ, աղէկ կըթեց,  
եւ ետքէն Սալամանդայի դպրոցը դրաւ. միտք ալ  
ունէր որ թագաւորին առջին հանէ եւ Ալվարէս կոմ-  
սին օրինաւոր ժառանգն ըլլալը ցուցնէ: Աս բանս  
դիւրաւ կրնար գլուխ հանել, որովհետեւ Փետրոյ  
ըրածին վրայ զղջալով՝ ամէն բան խոստովանեցաւ,  
եւ ձեր թղթերն ալ՝ որոնցմէ յանցանքնիդ յայ-  
տնապէս կը տեսնուէր, անոր տուաւ: Ուստի նոյն  
թղթերը, Փերդինանդին կուրծքի երէք վիրաց սպիքը  
եւ գերեզմանին մէջ եղած դաճէ արձանը՝ բաւական  
էին իր խօսքին ստուգութիւնը ցուցնելու եւ ձեր



եղբորորդին իր ստացուածոց մէջ հաստատելու: Բայց մահը վրայ հասնելով՝ զԲեռնարդ մէջտեղաց վերցուց: Փերդինանդ ալ իր ծագումը չճանչնալով՝ վաճառականի մը հետ Լոնտոն գնաց, հոն Աւստրիայի դեսպանին քով շնորհք գտնելով՝ հետը Աիէննա, դարձաւ, եւ հիմա Բոհեմիա է, ուր որ իր ամուսնովն ու զաւկըներովն երջանիկ կեանք կ'անցընէ:

Այնպէս ասոնք լսելով՝ սարսափեցաւ մնաց, մտածելով որ այնպէս խայտառակ ըլլալու վտանդի մէջ է եղեր: Բայց շուտ մը աս բանս մոռնալով եւ մինակ Փերդինանդին կենդանի ըլլալը յիշելով՝ սիրտն ուրախութեամբ լեցուեցաւ: Ուստի ձեռուրներն երկինք վերցընելով՝ ըսաւ. Տէր Աստուած, ինչպէս շնորհակալ ըլլամ քեզի, որ այսպէս ամէն բան յաջողուցիր: Շնորհակալ եմ հազար անգամ, եւ ուրիշ շնորհք չեմ խնդրեր քեզմէ, բայց այնչափ կեանք՝ որ կարենամ մեղքերուս վրայ ապաշխարել, եւ չմեռած՝ զՓերդինանդ տեսնել:

ԺՉ. Հին Ժանօթի մը:

Այնպէս քիչ մը հանդարտելէն եւ ուրիշ քանի մը բաներու վրայ ալ հարցումներ ընելէն ետեւ՝ վերջապէս խօսքը Փետրոյին վրայ եկաւ: Երբ որ աս ուղորմելի մարդը կը մտածեմ, ըսաւ կոմսը, շատ կը ցաւիմ. իր կորստեան ալ՝ ես պատճառ եղայ: Ինք գեշ մարդ չէր, միայն քիչ մը թեթեւամիտ էր: Մինակ իմ տուած յոյսերէս եւ ըրած սպառնալիքներէս ստիպուեցաւ ան ոճիրը գործելու: Բայց իրեն մեծապէս շնորհակալ ըլլալու պարտական եմ որ Փերդինանդին կենացը խնայեց: Չիս Բեռնարդ տէլ Ռիոյին մատնելուն եւ նամակներս անոր տալուն ալ սիրով թողութիւն կու տամ: Դուք ալ, յարգոյ Հայր, ձեր արժանաւոր աղօթքին մէջ զինքը մի մոռնաք:



Ո՛հ, ինձի յարգոյ մ'ըսէք, կանչեց մէկէն կրօնաւորն՝ աշուրներէն արցունք թափելով, ես մեղաւոր մարդ մըն եմ... ես եմ ան Փետրոն՝ որ զձեզ խաբեցի ու մատնեցի:

Արնդոյին զարմացումը չիկրնար խօսքով բացատրուիլ. աշուրներուն չէր կրնար հաւատալ, չէր կրնար համոզուիլ որ Փետրոյ դեռ կենդանի մնացած եւ կրօնաւոր եղած ըլլայ: Չէր կրնար կարծել որ առջեւը կեցող խորշմերես ու ճաղատ ծերունին՝ ան գանդրահեր ու վարդազոյն դիմօք զուարթ քնարահարն ըլլայ: Աւերջապէս ձեռքէն բռնելով՝ երկայն ատեն երեսը նայելէն ետեւ՝ կերպարանացը վրայ իրեն ծանօթ զծագրութիւնը ճանչնալով՝ ըսաւ. Աստուած օրհնեալ ըլլայ, որ զձեզ ողջ պահեց եւ ապաշխարելու ժամանակ տուաւ: Երկուքս ալ ծերացանք եւ շատ փոխուեցանք. երկուքս ալ աշխարհքիս ունայնութիւնը տեսանք: Երկուքնիս ալ մեր անձնական դժբախտ փորձառութեամբն իմացանք որ չզսպումս կիրքերը զմարդ ինչ աստիճանի չարագործութեանց մէջ կը ձգեն, որոնք սրտի խաղաղութիւնն ու հանգիստը բոլորովին կը վրդովեն: Բայց ես ձեզի թշուառութեանց պատճառ եղայ, եւ հիմա թափած արցունքնիդ զիս կ'ամբաստանեն: Թողութիւն ըրէք: Գուք անփորձ երիտասարդ մըն էիք. իսկ ես հասակս առած էի ու աշխարհք կը ճանչնայի. եւ ձեզի առաքինութեանց առաջնորդ ըլլալու տեղ՝ չարիք գործելու գրգռեցի: Բայց կ'աղաչեմ պատմեցէք գլուխնիդ եկածները:

Տէր, թէ որ ողորմելի մարդու մը պատմութիւնը կրնայ ձեզի հաճոյական ըլլալ, ահաւասիկ աս է: Ոճրագործութենէս քիչ մ'ետքը երբ որ այլայլութեանս սաստիկութիւնն անցաւ, եւ ձեզմէ ան գովութեան թուղթն ու ձեր խոստման կրկնումն ընդունեցայ, ելայ ան ազնուական օրիորդին տունը գայի, ու



րուն հետ կ'ուզէի կարգուիլ, եւ յայտնելով որ ձեր առատաձեռնութեամբք մեծ կալուածներու տէր եղած եմ, իր ձեռքը խնդրեցի: Բայց անիկա իր սուր մտօք բանը մակաբերելով՝ ազնուական բարկութեամբ մը կանչեց. Ի՞նչ, Ալսնդոյ ադ բաները քեզի՞ պարգեւեց: Իրեն ի՞նչ մեծ ծառայութիւն ըրիր՝ որ այնպիսի պարգեւ կամ հատուցում ընէ: Կարծեմ երաժշտութեանդ համար չէ: . . . Չըլլայ որ իր եղբորորդւոյն մահը շուտցընելուդ համար պարգեւ ըրած ըլլայ: Եւ իմ պլլայութենէս տեսնելով որ կասկածն ստոյգ է, աւելի եւս սաստկութեամբ վրան աւելցուց. Ա՛նամօթ, ի՛նչ, կ'ուզես որ ես մարդասպանի մը ընկեր ըլլամ. չէ, չէ, ամենեւին: Ես դքեզ մինչեւ հիմա պատուաւոր ու առաքինի երիտասարդ մը կը կարծէի, անոր համար ալ իմ բախտս քուկինիդ հետ միացընել կ'ուզէի. բայց հիմա կ'իմանամ որ արտաքին գեղեցիկ երեւոյթներու տակ՝ չար ու ապականեալ սիրտ մը ծածկուած է եղեր: . . . Թէ որ միշտ առաքինի մնացած ըլլայիր, անշուշտ ծնողքս իմ աղաչանացս զիջանելով՝ մեր ամուսնութեան կը հաւանէին: Բայց հիմակ եւ ոչ երեսդ տեսնել կ'ուզեմ: . . . Գնա մինչեւ հիմա քեզի ունեցած բարեկամութեանս շնորհակալ եղիր, որ դքեզ դատաւորաց ձեռք չեմ մատներ եւ ոճրագործութեանդ զաղտնիքը հետս գերեզման տանիլ կ'ուզեմ: . . .

Աս ըսելով՝ արտասուալից աչուրներն երկինք վերցուց եւ արտաքոյ կարգի տրամութեամբ կանչեց. Տէր Աստուած, սրչափ խաբուած եմ եղեր. բայց հազար փառք՝ որ ատենին աչուրներս բացիր:

Իսկ ես աս խօսքերը լսելով՝ ցաւէս ու ամօթէս գետինը կ'անցնէի եւ առջեւն անշարժ կեցած՝ չէի համարձակեր ո՛չ շարժում մ'ընելու ո՛չ ալ խօսք մ'ըսելու: Աս վիճակը քանի մը րոպէ տեւեց, եւ ինք նոյն ատեն իր աղօթքը լմնցընելով՝ վսեմ կերպարանօք



մ'ըսաւ. Շուտով առջեւէս կորսուէ եւ մէյ մ'ալ չըլլայ որ դունէս ներս մտնելու յանդգնիս:

Չեմ կրնար խօսքով բացատրել դտնուած վիճակս. գրեթէ ինք զինքս բոլորովին կորսնցուցած էի, ոչ ուր եղածս, ուր ինչ բրածս գիտէի: Աս կերպով տնէն հեռացայ: Բայց քիչ մը վերջը խելքս վրաս գալով եւ թմրած խղճմտանքս արթննալով՝ դործած շարեացս մեծութիւնը ճանչցայ, ու միտքս դրի որ ձեռքէս եկածին շափ տեղը լեցընեմ: Եւ որովհետեւ իմացած էի որ զՓերդինանդ ազատող ասպետը՝ ինծի ծանօթ եղող լեռնաբնակ ճգնաւորն է, իրեն գացի եւ ձեր թղթերն անոր ձեռքը տալով՝ ազաչեցի որ Փերդինանդին իրաւունքն երեւան հանելու համար ամէն ճիգն ի դործ դնէ:

Աս ալ նոյն մտաց վրայ եմ, պատասխանեց ասպետը. բայց պէտք է որ յարմար ժամանակին սպասենք: Միտքս ան է որ բռնական միջոցի մը ձեռք չզարկած՝ նախ ջանամ բարեկամական կերպով զԱլոնդոյ համոզելու որ եղբորորդւոյն ժառանգութիւնն իրեն դարձընէ. եւ երբ որ աս միջոցն օգուտ չ'ըներ, ան ատեն պատշաճ եղած հնարքները կը բանեցընեմ: Իսկ աս թղթերը կնքած՝ Աարթուսեան վանքի մը վանահօր ձեռքը կը յանձնեմ, որպէս զի իբրեւ խոստովանանքի գաղտնիք՝ քովը պահէ, եւ միայն ինծի տայ՝ առանց կնիքը բանալու: Անոր համար դուն ալ հիմակու հիմա պէտք է որ լռութիւն պահես:

Աս ըլլալէն ետեւ՝ միտքս դրի որ աշխարհքէ քաշուիմ եւ վանք մտնեմ: Բայց որովհետեւ վախի մէջ էի որ չըլլայ թէ զձեզ մատնած ըլլալս իմանալով՝ վրէժ առնել ուզէք, եւ կամ ձեր յանցանքին գաղտնիքը գիտնալու համար՝ զիս մէջտեղէն վերցընելու ետեւէ իյնաք, անոր համար դացի ծովուն քով քնարս կոտրեցի նետեցի, գլխարկս ու վերարկուս ալ հոն դրի, որպէս զի կարծեցընեմ թէ ծովուն մէջ խրղ-



դուած եմ: Անիկ ետեւ՝ Փրանկիսիկեանց կրօնը մտայ,  
եւ հոն ինք զինքս բոլորովին հոգեւորի տուի:

Քիչ ատեն է որ ըստ պատահման կամ մա-  
նաւանդ Աստուծոյ նախախնամութեամբը լսեցի որ  
Բեննարդ՝ Փերդիսանդին զաղանիքը չյայտնած՝ մե-  
ռեր է, նոյնպէս ձեր եղբորորդւոյն վիճակն իմացայ:  
Գարձեալ քիչ մ'առաջ լսեցի որ դուք աս բերդն  
եկեր էք եւ արտում տխուր կեանք մը կ'անցընէք:  
Ուստի ուզելով հետերնիդ տեսնուիլ՝ գտնուած վան-  
քիս վանահօրն աղաչեցի որ զիս ձեր բերդին մերձա-  
ւոր վանքը խաւրէ: Քանի մը օր է որ հոն հասայ, եւ  
արդէն կ'ուզէի մեծիս երթալ հրաման խնդրել որ ձե-  
զի այցելութեան դամ, մէյ մ'ալ ինք ինծի հրա-  
մայեց որ դամ ձեր հիւանդութեան ատեն ձեզի կրօ-  
նի նպաստները մատուցանեմ: Աս կերպով ահաւա-  
սիկ այդչափ զտերէն վերջը Աստուած շնորհեց որ  
իրար տեսնենք: Արդ թէպէտ զձեզ խոստովանանք  
ընելու խաւրուեցայ, բայց որովհետեւ ձեզի մեզ-  
սակից եմ, անոր համար չեմ կրնար զձեզ խոստո-  
վանցընել: Սակայն կրնամ այնպիսի մէկը ցուցընել,  
որուն կրնաք բոլորովին վստահիլ: Անք մտնելէս  
ետեւ ալ երկայն ատեն սրտի խաղաղութիւն չու-  
նէի. ըրած եղեռնագործութիւնս միշտ աչքիս առ-  
ջեւն էր, կ'իմանայի որ Աստուծոյ առջին մարդա-  
պան եմ: Արջապէս նոյն ատեն գտնուած վանքիս  
յարգելի ծերունիներէն մէկուն սիրտս բացի, որն որ  
Աստուծոյ ողորմութիւնները յիշեցուց, զիս մխիթա-  
րեց, զօրացուց, սրտի խաղաղութիւն տուաւ: Կ'ու-  
զէք նէ՛ ան պատուական ծերը կանչել տամ:

Արնզոյ հաւանեցաւ: Եկաւ ծերունին եւ երեք  
օր բերդը կենալով՝ կոմսը խոստովանեցուց: Արնզոյ  
հոգւով առողջանալուն պէս՝ մարմնով ալ սկսաւ  
առողջանալ, եւ միտքը դրաւ որ երթայ զՓերդիսանդ  
գտնէ ու ժառանգութիւնն անոր դարձրնէ:



## ԺԷ. Անիրաւոյն խեղճ հասարակացում:

Կոմսն առողջութեան մէջ կատարեալ հաստատուելուն պէս՝ Հ. Անտոնիոսին հետ դէպ ի Բոհեմիա ճամբայ ելաւ: Աիէննայէն անցնելու ատեն՝ Կալլա կոմսէն Փերդինանդին ուղղուած նամակ մ'առաւ, որուն մէջ աս միայն գրուած էր որ նոյն նամակը բերողը՝ Սպանիայի Աւագ մըն է, որն որ Բոհեմիա կը ճանապարհորդէ ու քիչ մ'ատեն բերդին մէջ պիտի կենայ. եւ կալուածապահին կը յանձնուէր որ անոր՝ իր աստիճանին վայլած պատիւն ընէ:

Ճամբաներուն անհարթութենէն շատ նեղութիւն կրելէն ետեւ՝ վերջապէս կառքը բարձր լերան մը վրայ ելաւ, ուսկից Կալլա կոմսին բերդն ու Փերդինանդին բնակարանը կը տեսնուէր: Սիրելի Հայր, ըսաւ կոմսը, չէք գիտեր սիրտս ինչ այլայլութեան մէջ է. կը վախնամ որ չըլլայ թէ Փերդինանդ զիս ատէ եւ իբրեւ հրէշ մը նայի՝ երբ որ իրեն դէմ ըրածներս իմանալու ըլլայ: Ա՛հ, ինչպէս դժուարին բան է ծերունւոյ, հօրեղբօր մը՝ երիտասարդի մ'առջին յանցաւոր երեւալ:

— Մի վախնաք, սիրելի կոմս, ապահով եմ որ Փերդինանդ չիգիտեր թէ դուք զինքը սպաննել ուղած ըլլաք: Ինք կը կարծէ որ ամենայն ինչ քնարահարին խենթութեան հետեւութիւնն է. զիս ալ անկարելի է որ ճանչնայ: Այսու ամենայնիւ պէտք է փորձենք որ աս պատմութեան վրայ ինչ գիտէ, որպէս զի չըլլայ թէ հարկաւոր եղածէն աւելի բան իմանայ:

— Իրաւունք ունիք, եւ աս միջոցով կրնանք իմանալ որ արդեօք ան կալուածապահը ստուգիլ Փերդինանդն է թէ չէ:

Ետնէն վար իջնալով՝ դեղ մը հասան, ուր որ կառքը թող տուին ու ոտքով բերդը գացին: Ալոն-



զոյ իր Աւագութեան փառաւոր զգեստը՝ լայն վերարկուով մը կը ծածկէր, իսկ Հ. Անտոնիոս իր վանքի զգեստովն էր:

Բերդին պարտիզին դուռը բաց ըլլալով՝ ներս մտան, եւ ծառափողոցի մը մէջէն անցնելով՝ պողոց ծառերու պարտէզը հասան: Հոն վարդազոյն այտերով տղայ մը տեսան, որն որ պողալից կեռասնեւոյ մը վրայ սանդուխ մը կութընցած՝ կեռաս կը քաղէր եւ քաղածը քրոջը դոգնոցը կը ձգէր. ուրիշ սիրուն տղայ մ'ալ անկէ կ'առնէր կողովին մէջ կը շտկէր: Տղաք օտարականները տեսնելուն պէս՝ դործքերնին թող տուին, եկան յարգութեամբ կրօնաւորին ձեռքը պագին, Ալոնզոյին ալ քաղաքավարութեամբ բարեւ տուին:

Տեւորք, ըսաւ ամենէն մեծն՝ որ շուրջ եօթը տարւան կայտառ տղայ մըն էր, անշուշտ պարտէզնիս պտրտիլ կ'ուզէք: Կ'որոշոս, ըսաւ եղբօրը դառնալով, դուն քիչ մը աս տէրերը պտրացուր, ես երթամ հայրս կանչեմ:

Արիւ տղաք օտարականները պարտիզին չորս դին պտրացուցին եւ ամէն բան ցուցուցին: Աերջապէս հայրերնին ալ եկաւ: Ալոնզոյ դիմացն ելաւ եւ ձեռքը կալլաս կոմսին նամակը տուաւ: Փերդինանդ զիրենք յարգութեամբ ընդունելով՝ առաւ նամակը կարդաց, եւ զարմացմամբ մը Ալոնզոյին երեսը նայելով թէ՛ իրեն եւ թէ՛ կրօնաւորին իր մեծարանքը մատոյց: Բայց Ալոնզոյ ծնկուրններուն վրայ տկարութիւն զգալով՝ նստեցաւ եւ ուզեց որ Փերդինանդ իր եւ Հ. Անտոնիոսին մէջտեղը նստի:

Քանի մը քաղաքավարական խօսքերէն ետքը՝ Փերդինանդ ըսաւ. Ուրեմն, Տեւորք իմ, գուք Սպանիացի էք: Իմ հայրենիքս ալ Սպանիա է, տղայութեանս գեղեցիկ ու զուարճալից տարիները հոն անցուցեր եմ:



Ի՛նչ, դուք Սպանիա՛ ծնած էք, կանչեց կոմսը՝  
զարմանալ ձեւացրնելով. ծնողքնիդ ո՛վ են: Ի՛նչպէս  
եղաւ որ լեռնային ու մացառախիտ Բոհեմիան՝ դե-  
ղեցիկ Սպանիայէն վեր դասէք եւ հոս բնակիք: Ա՛ա-  
ղաչեմ՝ ձեր հոս գալուն պատճառ եղող դէպքերը  
պատմեցէք ինձի:

Գլխէս անցած բաները շատ զարմանալի են,  
պատասխանեց Փերդինանդ. տղայութեանս դէպքերն  
ինձի երազի պէս կու գան: Ես հին բերդի մը մէջ  
կը բնակէի, որուն չորս կողմը գեղեցիկ պարտէզներ  
կային: Տիկինը՝ զորն որ ես մայրս կը կարծէի, եւ  
ետքէն իմացայ որ չէ եղեր, զիս շատ կը սիրէր: Տե-  
րը՝ զորն որ նոյն ժամանակ իմ հայրս կը համարէի,  
տուն քիչ հեղ կու գար, եւ զմեզ այնչափ չէր սի-  
րեր. ամէնքս ալ իրմէ կը վախնայինք: Եղբարցս մէ-  
ջէն միայն երեքին անունը կը յիշեմ. մէկը Եւզինէ  
կը կոչուէր, երկրորդը՝ Փիլիպպոս, երրորդը՝ Աարու-  
լոս. իսկ մէկալ պղտիկներուն անունը մոռցեր եմ:  
Ահաւասիկ բոլոր յիշածս աս է: Նոյնպէս աս ալ միտքս  
է որ որ մը ծանր հիւանդանալով՝ մայրս, եղբարքս  
ու քոյրերս ելան գացին եւ զիս մինակ թող տուին,  
որովհետեւ տէրը հիւանդութիւնս տարափոխիկ սե-  
պելով՝ այնպէս հրամայած էր: Այսպէսով քովս  
մինակ Փետրոյ անունով մէկը մնաց, որն որ քաջ  
քնարահար էր եւ զմեզ շատ կը սիրէր: Բայց մէ-  
կէն խենթեանալով՝ կ'ուզէր դանակով մը զիս մեռցը-  
նել. սակայն աղաչանքիս լսելով՝ ինձի խնայեց: Ի  
վերայ այսր ամենայնի՝ երեք տեղէ վիրաւորեց, որոնց  
սպիները դեռ կեցած են:

Ալոնզոյ մտադրութեամբ պատմութիւնը մտիկ  
ըրաւ, եւ իր կողակցին ու որդւոցը խօսքը լսելով՝  
սիրտն ելաւ, սկսաւ լալ: Նոյնպէս Փետրոյին երեսին  
գոյնը նեւած էր եւ սաստիկ կը դողար՝ երբ որ խօսքն  
իր ըրած ոճրագործութեան վրայ եկաւ: Բայց եր-



կուքն ալ շատ ուրախացան տեսնելով որ Փերդի-  
նանդ իրենց դաւաճանութիւնը չիզիտեր: Իսկ ինք  
անկէ ետեւ պատմեց իր միայնութիւնն ու պաշտպա-  
նին մեռնիլը, եւ թէ ինչպէս Անտոն գնաց, ետքը՝  
Աիէննա ու վերջապէս Բոհէմիա:

Արնզոյ աս բաներս լսելով՝ հաստատութեամբ  
իմացաւ որ խօսողն իր եղբորորդին է: Բայց որպէս զի  
աւելի ապահով ըլլայ, Պատմութիւննիդ, ըսաւ,  
ստուգիւ արտաքոյ կարգի բան մըն է. բայց ձեր  
ընտանեաց վրայ ուրիշ բան չէք գիտեր:

Չէ, պատասխանեց տրամութեամբ Փերդինանդ:  
Իմ պաշտպանս խոստացած էր որ ատենը գայ նէ՝  
ծննդեանս գաղտիքը կը յայտնէ. բայց իր յանկար-  
ծական մահուամբ՝ խոստումը չկրցաւ կատարել:

Աւ, ըսաւ Արնզոյ, դուցէ ես կրնամ ձեր ծննդ-  
դեան վրայ տեղեկութիւն մը տալ: Բայց պէտք է  
նախ ապահով ըլլամ որ դուք ստուգիւ ան տղան  
էք, զորն որ Փետրոյ գանակով վերաւորեց: Արնամ  
վերքերնուդ սպիքը տեսնել:

Ինչո՞ւ չէ, պատասխանեց Փերդինանդ, եւ ան-  
միջապէս բաճկոնը բանալով՝ սպինները ցուցուց:

Ան ատեն Արնզոյ ոտք կ'ելլէ, Փերդինանդին կը  
փաթթուի եւ աչուրներէն արցունք թափելով՝ կ'ը-  
սէ. Ո՞վ Փերդինանդ, դուն իմ եղբորորդիս ես, դուն  
Ալվարէս կոմսին ժառանգն ու Սպանիայի Աւագ ես:  
Արտաքոյ կարգի դժբախտ պարագաներ վրայէ վրայ  
գալով՝ ժառանգութենէդ զրկուեցար եւ առանց ծա-  
դումի գիտնալու մեծցար: Ես ալ զքեզ մեռած կը  
կարծէի, բայց երբ որ իմացայ որ դեռ կ'ապրիս,  
Սպանիայէն ելայ հոս եկայ, որպէս զի զքեզ տես-  
նեմ, կրած անիրաւութեանդ հատուցում ընեմ եւ  
զքեզ փառաւորութեամբ հայրենիքդ տանիմ: Ո՛հ,  
որչափ երջանիկ կը համարիմ զիս որ զքեզ գտայ,  
սիրելի Փերդինանդս: Չիս իբրեւ հօրեղբայր ճանչ-



ցիր, զիս սիրելիդ յայանէ եւ անկէ ետեւ ուրախու-  
թեամբ կը մեռնիմ:

Փերդինանդ աչքէն արտասուաց հեղեղ մը թա-  
փելով՝ կրկին կրկին հօրեղբօրը ձեռքը կը պագնէր:  
Ալոնզոյ ալ ուրախութենէն կու լար. բայց աս իր ու-  
րախութիւնը արամութեամբ խառն էր, որովհետեւ  
կը մտածէր որ եթէ եղբօրորդին՝ իր ինչ աստիճանի  
յանցաւոր ըլլալն իմանալու ըլլայ, անշուշտ հիմա-  
կուան ցուցուցած սէրը շատ կը նուազի եւ գուցէ ալ  
ատելութեան կը փոխուի: Աերջապէս աս մտած-  
մունքը մէկդի ընելով՝ վերարկուն բացաւ եւ կրծոցը  
վրայ կախուած ադամանդեայ աստղը ձեռքն առ-  
նելով՝ Ահաւասիկ, ըսաւ, ասիկա Սպանիայի Աւա-  
գութեան նշանն է, որն որ՝ զքեզ մեռած կարծե-  
լով՝ մինչեւ հիմակ ես կը կրէի. ալ քուկդ է: Եկուր  
կուրծքդ կախեմ, որպէս զի ընդունած վերքերուդ  
փոքր հատուցում մ'ըլլայ:

Ահ, ան վերքերն ընդունած ատենս, չէի կար-  
ծեր, կանչեց Փերդինանդ, որ օր մը իմ փառաւո-  
րութեանս առիթ պիտ'որ ըլլան: Այսպէս Աս-  
տուած՝ դժբախտութիւննիս միշտ մեր աղէկութեան  
կը դարձրնէ:

Նոյն միջոցին Աատարինէ օտարականները բարե-  
ւելու համար անդիէն կու գար. բայց յանկարծ Փեր-  
դինանդին կուրծքն ադամանդեայ աստղը տեսնելով  
եւ անոր տրուած Ալվարէսի կոմս անունը լսելով  
պաղեցաւ մնաց: Աեցած տեղն անանկ դիրք մ'ու-  
նէր, որ ինք ամուսինն ու կոմսը կրնար տեսնել՝ ա-  
ռանց տեսնուելու: Ալոնզոյ խօսքը շարունակելով  
ըսաւ. Սիրելի եղբօրորդիս, կառքս պատրաստ է, շու-  
տով երթանք, զքեզ եւ ընտանիքդ կայսեր առջեւը  
հանեմ, որպէս զի ինք՝ իբրեւ Սպանիայի թագաւոր՝  
զքեզ քու աստիճանիդ մէջ հաստատէ: Բայց ամու-  
սինդ ինչ տոհմէ է:



— Զերման անունով անտառապահի մը աղջիկն է :  
Ի՛նչ , պողպատե Ալոնդոյ տեղէն ցատքելով , ի՛նչ ,  
անտառապահի՛ աղջիկ . աս չիկրնար ըլլալ , անկա-  
րելի է : Ասով բոլոր ուրախութիւնս փճացաւ :

Փերդինանդ աս խօսքին վրայ սաստիկ տրամե-  
ցաւ : Իսկ Ալոնդոյ քիչ մը մտածելէն ետեւ՝ խօսքը  
յառաջ տանելով ըսաւ . Ստոյգ է որ գուն ընտա-  
նեացոյ ինչպիսի ազնուական ու հին ցեղէ ըլլալը չէիր  
դիտեր , ապա թէ ոչ՝ անտառապահի մը աղջկան  
հետ չէիր կարգուեր : Ուստի պէտք է ասոր ճար մը  
հոգալ , ամուսնութիւննիդ ջնջել , ապա թէ ոչ ցաւ-  
էս կը մեռնիմ :

Սատարինէ աս խօսքերը լսելով՝ սիրտը կտոր  
կտոր կ'ըլլար . աշուրներէն արցունք թափելով կե-  
ցած տեղէն հեռացաւ :

Ալոնդոյ երկայն ատեն վեր վար պտրտելէն եւ  
երբեմն ձեռքը ճակատը զարնելէն ետեւ՝ մէկէն Հ .  
Անտոնիոսին առջին կենալով՝ ըսաւ . Հայր , ասոր  
ճար մը փնտռեցէք : Ինծի անանկ կ'երեւայ որ ան-  
ձանց սխալմունքն ամուսնութիւնը լուծելու բաւա-  
կան պատճառ է :

Այո՛ , պատասխանեց կրօնաւորը ծանրութեամբ ,  
անձանց վրայ եղած սխալմունքն երբեմն ամուսնու-  
թիւնն անվաւեր կ'ընէ . բայց աս դէպքը զատ բան  
է ու խնդիրը խիստ դժուարին կ'երեւայ . անոր հա-  
մար պէտք է եկեղեցւոյ գերագոյն իշխանութեան  
դիմել , որ ասոր որոշումը տայ :

Ամուսնութիւնը լուծելուն վրայ երկայն խոր-  
հրդածութիւններ ընել հարկաւոր չէ , պատասխա-  
նեց փերդինանդ տաքութեամբ մէջը նետուելով , ու-  
րովհետեւ ես կնոջմէս չեմ բաժնուիր . Սպանիայի  
թագն ալ տաք նէ՛ չեմ ընդունիր : Ես Աստուծոյ  
առջեւը խօստացայ որ մինչեւ գերեզման ամուսնոյս  
հաւատարիմ մնամ : Ստոյգ է շատ ուրախացայ կոմս



ըլլալ իմանալով. բայց աս պարագան աշուրներս  
բացաւ, ասանկ արժանապատուութեանց ոչինչ ըլ-  
լալը ճանչցայ. անոր համար սիրով կը հրատարիմ:  
Նոյնպէս իմ սիրելի հօրեղբայրս տեսնելու վրայ շատ  
գոհ եմ, բայց խիստ կը ցաւիմ որ ինձմէ պահանջա-  
ծը չեմ կրնար ընել:

Աս ըսաւ եւ զկրեմք հոն թող տալով ամու-  
սնոյն քովը գնաց:

### ԺԸ. Երջանիկ ընթանի:

Արբ որ Փերդինանդին որդին հիւր եկած ըլլալը  
հօրը ծանուցանելով կանչած էր, ասիկա ամուսնոյն  
քովը կը գտնուէր, որն որ քիչ մը վերջը գալ խոս-  
տացած ըլլալով, Փերդինանդ անոր այսչափ ուշանա-  
լուն վրայ տարակուսի գնաց եւ սկսաւ չորս կողմը  
փնտռել: Ուստի երբ որ զինքը խցին մէջ գտաւ,  
որ զաւկրներուն հետ նստած՝ արտամութեամբ կու-  
լար, մէկէն քովն երթալով՝ Ի՞նչ ունիս, սիրելի Աա-  
տարինէս, ըսաւ Չերմաջերմ սիրով, աս լացերուն  
ու ողբերուն պատճառն ի՞նչ է:

Ամուսինն աշուրները վեր վերցրնելով եւ էրկանը  
կրծոցը վրայ ադամանդէ աստղը տեսնելով ըսաւ.  
Ստուգիւ աս աստղն ինձի ու զաւկրներուս համար  
չարագուշակ աստղ մ'եղաւ: Գուն հիմա կոմս մըն  
ես, իսկ ես՝ ողորմելի անտառապահի մը աղջիկ: Հօր-  
եղբայրդ զքեզ անշուշտ պիտի ստիպէ որ զիս ու  
զաւկրներդ թող տաս: Ո՛հ, ի՞նչ սաստիկ ցաւ է ա-  
սիկա ինձի:

Ի՞նչպէս կրնաս ասանկ բան մը մտքէդ անցրնել,  
պատասխանեց Փերդինանդ կէս մը վշտացեալ. բայց  
քու սիրոյդ եւ այլայլութեանդ սաստկութեան նայ-  
ելով՝ կը ներեմ աս կասկածը՝ որն որ քիչ մը ատեն  
իմ վրաս ունեցար: Սակայն, սիրելիս, ամենեւին մի  
վախմուտ, զքեզ թող չեմ տար, քեզմէ չեմ բաժ-



նուիր: Հօրեղորս առջևը ժառանգութենէս ու աստիճանէս հրաժարեցայ, քու առջիդ ալ աս չարագուշակ աղամանդեայ ասաղէն կը հրաժարիմ: Ան կապն՝ որով մէկտեղ կապուեցանք, սուրբ ու անյուժանելի է. երդումնիս Աստուծոյ բռինք, ուստի միայն Աստուած կրնայ քակել:

Ասոնք զրուցելով՝ կնոջը քով նստեցաւ եւ կը ջանար ամէն կարելի կերպով զինքը մխիթարել ու ապահովել: Աստարինէին ցաւոյ արցունքներն ուրախութեան արտասուաց դարձան, եւ շատ անգամ կրկնեց. Ո՛հ, իմ Փերդինանդս, որչափ սիրելի ես ինձի. կարծեմ թէ առջի սէրս հիմակ աւելի մեծցաւ, որովհետեւ քու սէրդ ու հաւատարմութիւնդ սաստիկ փորձոյ մէջ մտան եւ անապական դանուեցան:

Փերդինանդ ալ սաստիկ այլայլած էր. երկուքն ալ զակրներնին գրկեցին, որոնք ինչպէս որ յառաջ իրենց մօրը տրտմութեան մասնակից կ'ըլլային, նոյնպէս հիմակ ալ իրենց ծնողաց ուրախութեան վրայ կ'ուրախանային:

Հալիս թէ Փերդինանդ իր ամուսինը մխիթարած ու ապահովուցած էր, եւ տղաք ուրախութեամբ կը ցատքուտէին, մէյ մ'ալ Ալոնդոյ Հ. Անտոնիոսին հետ ներս մտաւ: Աստարինէ ու տղաք այլայլեցան, եւ պատիկ աղջիկն՝ որն որ հօրը սեղանին վրայ դրած աստեղ հետ կը խաղար, վախէն դետինը ձգեց ու մօրը քովը վազեց: Ալոնդոյ անմիջապէս խօսքը Փերդինանդին ուղղելով՝ Սիրելի եղբորորդիս, բաւ, աղէկ մտածէ. խօսքս չնչին բանի վրայ չէ, հապա անբաւ հարստութեան, պատուոյ եւ հին տոհմէ յառաջ եկած ազնուականութեան վրայ է: Ամուսինդ՝ կոմսուհւոյ պատիւ չի կրնար առնել, որովհետեւ հասարակ անէ է: Երբեք զինքը բարձր ազնուականաց բնկերութեան մէջ չես կրնար



տանիլ: Միտ դիր մէյ մը ասկէ ինչ մեծ դժուարութիւններ կը ծագին: Նոյն իսկ քու զակիւններդ չեն կրնար կոմսութիւնդ ժառանգել, հապա յարքունիս կը գրաւուի: Ես քու ամուսնոյդ ու զակիւներուդ համար աս կամ ուրիշ բերդ մը կը գնեմ, որպէս զի կարող ըլլան հոն երջանիկ կեանք անցընել. դուն հետս Սպանիա եկուր: Շատ կը ցաւիմ. բայց ինչ ընենք, հարկաւոր է:

Ալոնզոյ աս խօսքը լմնցընելուն պէս՝ պատարինէ ու տղաք սկսան բարձրաձայն լալ ու հեծել: Բայց Փերդինանդ հաստատութեամբ մը Ալոնզոյին առջեւը կենալով՝ Սիրելի հօրեղբայրս, ըսաւ, արդէն վերջին որոշումս լսեցիք, անկէ ուրիշ ըսելիք չունիմ. աւելի կ'ուզեմ աղքատ մնալ եւ երդմանս հաւատարիմ, քան թէ հարուստ ու երդմնազանց ըլլալ:

Աոման աս պատասխանին վրայ սկսաւ խցին մէջ մեծ քայլերով պտըտիլ, եւ քիչ մնաց որ պզտիկ աղջկան գետինը ձգած ադամանդեայ աստեղ վրայ պիտի կոխէր: Նայէ, ըսաւ բարկութեամբ Հ. Անտոնիոսին, եղբօրորդւոյս աներեսութեան. տոհմիս պատուանշանը գետինը նետեր է, որպէս զի կոխուի. աս զարհուրելի բան է:

Իր կատաղութիւնը վերջին աստիճանի հասած էր: Բայց Հ. Անտոնիոս մօր ու տղոյ թափած արցունքէն շարժելով՝ կոմսին ձեռքէն բռնեց ուրիշ խուց մը տարաւ եւ հոն սկսաւ հետն այսպէս խօսիլ. Տէր, պարապ տեղ կը ջանաք զանոնք իրարմէ բաժնել, եւ համարձակ խօսելու համար՝ ասիկա պարզապէս ձեր հպարտութենէն, ձեր ամբարտաւանութենէն յառաջ կու գայ, եւ ոչ եթէ խոհեմ մտածութենէ մը: Դուք հպարտութեամբ՝ չէ թէ մինակ ձեզի, հապա նաեւ ձեր ընտանեաց մեծ վնաս հասցուցիք. ձեր անձին, ամուսնոյն ու տղոյ այնչափ թշուառութեանց մի միայն պատճառն աս է: Ա-



զնուստիրտ Պիանդան անշուշտ դեռ կ'ապրէր՝ թէ  
 որ իրեն ցաւոցը պատճառ չտայիք : Փիլիպպոս ան-  
 դրանիկ որդինիդ այսչափ շուտ չէր մեռներ, թէ որ  
 իրեն չար օրինակ չըլլայիք : Փերդինանդին այնչափ  
 թշուառութեանց պատճառն ո՛վ է, արդէն գիտէք :  
 Իմ վրաս հարկ չկայ խօսիլ . դուք ալ գիտէք որ  
 զիս ձեր ամբարտաւանութեան դործիք ընելով՝ ի՞նչ  
 խեղճութեան մէջ ձգեցիք : Բոլոր կեանքերնիդ աս  
 մնութեան պատճառաւ ուրիշ բան չեղաւ՝ բայց  
 եթէ տառապանաց շղթայ մը : Եւ հաղիւ թէ Աս-  
 տուած զձեզ խղճմտանքի նեղութենէն ազատելու  
 համար աս մեծ շնորհքն ըրաւ, որ առաքինի Փեր-  
 դինանդոսը տեսնէք, անմիջապէս նորէն կը սկսիք  
 զինքն, իր ամուսինն ու զաւիըները չարչարել : Եթէ  
 որ այսպէս կը վարուիք, յայտնի կը ցուցնէք որ  
 զղջումնիդ ու դարձերնիդ կատարեալ չէ : Թէ որ  
 կ'ուզէք ճշմարիտ քրիստոնեայ ըլլալ, պէտք է որ  
 խոնարհ ըլլաք :

Աննղոյ աս խօսքերէն շարժելով՝ քանի մը ըստէ  
 խորունկ մտածելէն ետեւ՝ ըսաւ . Յարգո՛յ Հայր, ի-  
 րաւունք ունիք . թէ որ ինձ ի միշտ ճշմարտութիւնն  
 ըսուէր, ինչպէս որ դուք հիմա կ'ըսէք, շատ տարբեր  
 մարդ կ'ըլլայի : Ուստի շնորհակալ եմ ձեր բարի  
 խրատներուն համար, եւ կ'ուզեմ ալ անմիջապէս  
 իրօք ի դործ դնել :

Աս ըսաւ ու շուտ մը Փերդինանդին քովը գնաց,  
 զորն որ ամուսինն ու զաւիըները չորս կողմանէ պա-  
 շարած կը բռնէին, կարծես թէ արգելելու համար  
 որ զինքը շառնեն տանին, եւ զուարթ դէմքով մ'ը-  
 սաւ . Սիրելի եղբորորդիս, սիրելի հարսս, ձեր ա-  
 մուսնութեանը հաւանութիւն կու տամ . ձեր միու-  
 թեան ու սիրոյն մէջ մնացէք . ասիկոյ վերջն ալ  
 այնպէս երջանկութեամբ ապրեցէք, ինչպէս մինչեւ  
 հիմա կ'ապրէիք : Աստուած ձեր պսակն օրհնէ, ձեր



ու տղաքներուդ վրայ իր առաա շնորհքը զեղու :  
Նոյն բուպէին՝ սրտին մէջ այնպիսի քաղցրութիւն  
եւ ուրախութիւն մը կը զգար, որ կենաց մէջ նմանը  
զգացած չունէր :

Աս հաշտութենէն ետեւ՝ բոլոր ընտանիքը մէկ-  
տեղ սեղանի նստեցան եւ արտաքոյ կարգի մեծ ու-  
րախութեամբ անցուցին նոյն իրիկունը, այնպէս որ  
իրարմէ բաժնուելու ատեն՝ կոմսն ըսաւ. Տէր Աս-  
տուած, իմ ծերութեանս ինչ երջանկութիւն պա-  
տրաստեր ես. հոյակապ բերդիս մէջ ես տրտում  
էի, եւ չորս կողմս խոր լուութիւն մը պատած էր :  
Ամուսինս, զաւկրներս մեռան. եւ ահաւասիկ ինձի  
մէկ ուրիշ զուարթ ընտանիք մը շնորհեցիր : Բոլոր  
սրտովս շնորհակալ կ'ըլլամ քեզի, Տէր :

Ալոնզոյ քիչ մ'ատեն ընտանեացը քով ուրախ  
օրեր անցուց : Նոյն օրերը յանկարծ պալլաս կոմսն իր  
ամուսնոյն ու Օպերատորֆեանց կոմսուհւոյն հետ  
Բոհեմիա եկաւ զՓերդինանդ եւ զպատարինէ շնոր-  
հաւորելու համար, որովհետեւ Փերդինանդ ամէն  
բան իրենց իմացուցած էր : Ալոնզոյ խիստ զարմացաւ  
եւ ուրախացաւ երբ որ տեսաւ թէ պալլաս կոմսը  
Փերդինանդին հետ չէ թէ մինակ իբրեւ հաւասարի  
մը հետ կը վարուէր, հապա նաեւ մեծ յարգութիւն  
ալ կը ցուցընէր, նոյնպէս երկու կոմսուհիները պա-  
տարինէին հետ սիրով եւ ընտանութեամբ կը վա-  
րուէին : Հիւրերը մէկ երկու օրէն ետ դարձան. Ա-  
լոնզոյ ալ Փերդինանդին եւ անոր ընտանեացը հետ  
Վիէննա երթալով՝ կայսեր առջեւն ելաւ, եւ առանց  
իր յանցանքը յայտնելու՝ եղբօրորդւոյն պատմու-  
թիւնը պատմելէն ետեւ՝ խնդրեց որ իբրեւ Սպանիայի  
Թագաւոր՝ զՓերդինանդ իր իրաւանց ու աստիճանին  
մէջ հաստատէ :

Կայսրը պատասխանեց որ Սպանիական օրինաց  
նայելով՝ Փերդինանդին զաւկրներն Ալվարէս կոմ-



սին չեն կրնար յաջորդել, որովհետեւ մայրերնին ազնուական չէ, եւ ոչ ինք կրնայ աս օրէնքէն բացառութիւն ընել: Բայց խոստացաւ որ իբրեւ Գերմանիայի կայսր՝ զերենք ուրիշ կերպով մը ազնուականութեան հանէ: Միանգամայն խնդրեց որ եղբորորդին եւ անոր ամուսինն իրեն բերէ:

Ալմնոց եղբորորդւոյն ու անոր ամուսնոյն կոմսական աստիճանին համեմատ փառաւոր զգեստներ հազցընելով՝ կայսեր ներկայացուց: Ինքնակալը զերենք շատ սիրով ընդունելով՝ ըսաւ. Փերդինանդ Ալվարեսեանց, ձեր հօրեղբայրն արդէն ըսած պիտ'որ ըլլայ թէ ինչ պատճառի համար ձեր սպանիական կոմսութեան ժառանգութիւնն որդիքներնուդ չեմ կրնար անցընել: Բայց հիմա Սիլեզիայի մէջ ծախու գեղեցիկ կոմսական կալուած մը կայ. ուստի անիկա գնելով՝ Գերմանիա բնակեցէք: Եւ ինչպէս որ Սպանիայի մէջ ձեր հայրն ու հօրեղբայրն ինծի հաւատարիմ էին, այնպէս դուք ալ Գերմանիայի մէջ եղէք: Հօրեղբայրնիդ պատերազմի մը ատեն՝ թագաւորական գանձին փոխ ստակ տուած էր, որն որ նոյն կոմսական կալուածը գնելու բաւական է. ուստի անմիպէս հրաման կու տամ որ նոյնը ձեզի տրուի: Իսկ Աատարինէ տիկնոջ ազնուականութեան թղթերը քանի մ'օրէն կ'ընդունիք իմ կնքովս կնքուած:

Ալմնոց խիստ ուրախացաւ աս կայսերական շնորհաց վրայ եւ Փերդինանդին ու անոր ընտանեացը հետ մէկտեղ Սիլեզիա գնաց: Արմսական կալուածը շատ գեղեցիկ գտան եւ անմիջապէս առնելով՝ հոն հաստատուեցան: Փերդինանդ ու Աատարինէ միշտ աստուածապաշտ ու համեստ մնացին, եւ իրենք զերենք երջանիկ կը համարէին, չէ թէ անոր համար՝ որ հարստցան, հապա անոր համար՝ որ իրենց չորս կողմն եղողներուն աւելի առատութեամբ օգնութիւն կրնային ընել:




Ալոնդոյին միտքն ան էր որ ամէն բան կարգի գնելէն ետեւ՝ հայրենիքը դառնայ. բայց իր ընտանեաց աղաչանքովը միտքը փոխեց եւ հաստատեց որ մինչուկ կենացը վերջի բոպէն հոն մնայ: Չէ, չէ, կ'ըսէր, սիրելի՛ զաւկըներս, զձեզ չեմ կրնար թողուլ. բոլոր կեանքս ձեզի հետ կ'ուզեմ անցընել. աշուրներս դուք պիտի գոցէք: Սպանիայի մէջ ամէն բաղձացածներս ունէի, գեղեցիկ երկիրներ, պատիւ ու հարստութիւն. այսու ամենայնիւ երջանիկ չէի, որովհետեւ սրտի խաղաղութիւնն ու խղճմտանքի հանգիստը կը պակսէր: Իսկ հոս ձեր քովն՝ աշխարհքիս ամենէն երջանիկ մարդն եմ:

Իսկ Հ. Անտոնիոս իրենց փառաւոր մատրան աստուածային պաշտօնը կատարողն եղաւ: Ալոնդոյ իր կենաց մնացորդն աստուածպաշտութեամբ կ'անցընէր. իր փոյթն ան էր որ առաքինութեան գործքերով Աստուծոյ հաճոյ ըլլայ: Միշտ ալ կ'ըսէր. Անանքիս ամառը ցաւալի եղաւ, փոթորիկներով անցաւ: Չեմ գիտեր Աստուծոյ ինչ շնորհակալութիւն մատուցանեմ որ կենացս աշունն այսպէս գեղեցիկ ու երջանիկ ըրաւ: Ինք զինքս բոլորովին Աստուծոյ տակս ետեւ՝ միայն կրցայ սրտի խաղաղութիւն ունենալ: Ուստի անձինս փորձովն ալ իմացայ որ մարդ առանց Աստուծոյ երկիւղին, առանց սիրոյ ու մարդասիրութեան՝ եւ ոչ աս աշխարհքիս մէջ ճշմարիտ վայելք կրնայ ունենալ:









Յ Ա Ն Կ

Թ . ՓԵՐԴԻՆԱՆԴՈՍ ԿԱՄ ԽՂՃՄՏԱՆՔԻ ԶՕ- ՐՈՒԹԻՒՆԸ . . . . .	
Ա . Փերդինանդոսին ծնողքը : . . . . .	169
Բ . Որք տղան եւ իր առաջին տարիները : . . . . .	174
Գ . Խնամակալ : . . . . .	178
Դ . Փետրոյ երաժիշտը : . . . . .	186
Ե . Ահաւոր դաւաճանութիւն : . . . . .	188
Զ . Բաժանում : . . . . .	194
Է . Թոյն : . . . . .	196
Ը . Նեղութեան եւ անձկութեան օր մը : . . . . .	200
Թ . Մարդասպանութիւն : . . . . .	203
Ժ . Ազատիչը : . . . . .	208
ԺԱ . Աւտորիայի դեպքանը : . . . . .	212
ԺԲ . Ամուսնութիւն : . . . . .	217
ԺԳ . Սպանիայի Աւագը : . . . . .	220
ԺԴ . Յանցաւորը կը զղջայ : . . . . .	227
ԺԵ . Ճշմարիտ դարձ : . . . . .	231
ԺԶ . Հին ծանօթ մը : . . . . .	235
ԺԷ . Անիրաւութեան հատուցում : . . . . .	240
ԺԸ . Երջանիկ ընտանիք : . . . . .	246











24599

2013

« Ազգային գրադարան



NL0331031



